12 ՄԱՐՏ 2021 ՈՒՐԲԱԹ 9(5649)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Կատացվի երկխոսե՞լ

**Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը մարտի 10-ին տարածած հայտարարությամբ երկրում ստեղծված ներքաղաքական իրավիճակի քննարկման եւ ճգնաժամը հաղթահարելուն ուղղված փոխընդունելի լուծումներ գտնելու նպատակով վարչապետին, խորհրդարանական խմբակցությունների ղեկավարներին եւ «Հայրենիքի փրկության շարժման» ղեկավարներին մարտի 13-ին, ժամը 12:00-ին հրավիրել էր հանդիպման նախագահական նստավայրում: Երեկ պատասխան էր ստացվել ոչ բոլոր հրավիրյալներից, նախագահականից հայտնեցին, որ հանդիպման ձեւաչափի մասին կհայտարարվի ավելի ուշ:Հիշեցնենք՝ արձագանքել էին Ազգային ժողովի «Իմ քայլը», «Լուսավոր Հայաստան» խմբակցությունները: «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը նախագահ Արմեն Սարգսյանի հանդիպման հրավերի վերաբերյալ որոշում դեռ չի կայացրել: «Հայրենիքի փրկության շարժման» անդամ Իշխան Սաղաթելյանն էլ լրագրողներին ասել էր, որ հանդիպման հրավերի մասին քննարկում դեռ չեն ունեցել, կքննարկեն, որից հետո, եթե հարկ համարեն, հանդես կգան հայտարարությամբ:**

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Իրավունքի՞ ուժը, թե՞ ուժի իրավունքը

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Կեսօր է, ճիշտ այն ժամը, երբ Երեւանի փողոցները խիստ խճողված են լինում: Մեքենայով շտապում եմ կարեւոր մի ժամադրության: Սարալանջի փողոցից թեւանցող աղեղնաձեւով մտել եմ թունել՝ դուրս գալու դեպի Հերացի: Հենց այդտեղ, հասման այդ կետում, որը վարորդների բնորոշմամբ ամենամուխանաքն է Երեւանում, մի ջահել ոստիկան փայտիկով կանգնեցնում է մեր ընթացքը. հասկանալի է՝ ինչ-որ «բարձրաստիճանի» անցումն են ապահովում Մյասնիկյանից Հերացի եւ այլուր: Ոստիկանը ինձ եւ մյուս մեքենաների վարորդներին ձեռքով նշան է անում շարժիչները անջատելու: Հըմ, ուրեմն մի քիչ երկար ենք սպասելու: Ետեւի մեքենայի վարորդը գլուխը պատուհանից դուրս հանած՝ խնդրում է ոստիկանին թույլ տալ անցնել. մեքենայում հիվանդ ունի, պետք է հասցնի 20 մետր այն կողմ գտնվող Առաջին հիվանդանոց: Ոստիկանը անդրդվելի է, թավշյա ժպիտով արգելում է որեւէ առաջխաղացք: Րոպեներն անցնում են: Վարորդներից մի քանիսը դուրս են եկել մեքենաներից ու խոսում-քննարկում են: Մոնումենտից ու Նորք-Մարաշի վերեւներից սկսած անշարժացել են հազարավոր մեքենաներ, ասում են: Իրենք գիտեն ով է անցնում: Անշուշտ Նիկոլը: Նախկիններն էլ նույնն էին անում, ասում է վարորդներից մեկը, բայց էսքան երկար չէին սպասեցնել տալիս, ասում է մյուսը: Արդեն 15 րոպե էր անցել, վարորդներն արդեն պատրաստվում էին անցնել օրվա գլխավոր թեմային՝ Օնիկ-Նիկոլ հակամարտությանը, երբ հեռվից լսվեց ոստիկանական մեքենաների ահասարսուռ ճչակների, ապա բարձրախոսների գոռում-գոչումը՝ «ձախը ազատիր»: Ոչ ոք չվախեցավ սակայն, ընդհակառակը՝ ուրախ էին բոլորը, ես էլ: Ամեն մեկն անցավ իր մեքենայի ղեկին: Հերացին անշարժացավ. անցնում էր հրոսակախումբը, ներողություն՝ շքախումբը, չգիտեմ՝ իրավունքի՞ ուժով, թե՞ ուժի իրավունքով: Հարցնելու ժամանակ չկար: Բոլորով, հայավարի, առաջինը անցք տվեցինք հիվանդ փոխադրող մեքենային, որի ետեւից սլացանք առաջ՝ ամեն մարդ իր գործին, ես՝ ժամադրությանս:

Պատմածս երեքշաբթի օրն էր պատահել, այսինքն այն օրը, երբ Բաղրամյան պողոտան արդեն 11 օր փակած, վրանավորված Փրկության շարժման աջակիցները, իսկ նրանց դիմաց դիրքավորված ոստիկանական ուժերը սպասում էին նոր զարգացումների, առաջինները՝ զանգվածային հարձակման ենթարկվելու, երկրորդները՝ Գերագույնի երեւակայելի եւ աներեւակայելի հրամաններին: Մինչ այդ՝ ամեն ինչ տեղի էր ունեցել այսպես կոչված՝ օրենքի ուժով: Այսինքն, Կառավարության շենքից Բաղրամյան 26 էր գնացել Գերագույնի հրամանագիծը Սպայակույտի պետին պաշտոնազրկելու մասին, բայց Բաղրամյան 26-ից վերադարձվել էր Կառավարության շենք՝ համապատասխան առարկություններով: Գլխավորը, որ մինչ այդ նման անարգանքի չէր հանդիպել, հրամանագիր-նախագիծը նույնությամբ վերադարձրել էր Բաղրամյան 26-ի Տիրոջը, ասել ուզելով, որ Իր որոշումը ենթակա չէ առարկությունների, Ինքը սովոր չէ նման բաների: Մինչ այդ, արդեն չքայլող քայլականները, Գերագույնին համահունչ՝ ալելույական էին բարձրացրել, թե բանակը, այս պարագայում՝ ԶՈՒ Շտաբի պետն ու մյուս գեներալները իրավունք չունեն երկրի վիճակի մասին որեւէ կարծիք հայտնելու, իսկ վարչապետի հրաժարականի նրանց պահանջը հակասահմանադրական է եւ համազոր է ռազմական հեղաշրջման փորձի: Ալելույա երգողներն ու նրանց ձայնակցողները բնավ չէին ուզում հասկանալ, որ իրենց պնդումները կարելի էր հետահայաց տարածել նաեւ Սպարապետ Վարդան Մամիկոնյանի վրա, որ 1500 տարի առաջ ընդվզել էր Մարզպետ Վասակ Սյունիի կամքի դեմ եւ հայրենիքի օրհասական պահին իր զինվորականի հալով «խառնվել էր» քաղաքականությանը: Նույնը կարելի էր տարածել նաեւ Ղեւոնդ Երեցի վրա, որ իր տերտեր հալով պարսիկների դեմ մարտի էր առաջնորդել աշխարհազորայիններին: Եկեղեցին ի՞նչ իրավունք ունի քաղաքականության մեջ քիթը կոխելու: Բարեբախտաբար մեր պատմիչներից որեւէ մեկը նման հիմարություն թույլ չէր տվել իրեն...

Դժվարին վիճակ էր ստեղծվել նաեւ Բաղրամյան 26-ի Տիրոջ համար: Նա չէր կարող, առաջին հերթին, պաշտոնազրկումը հաստատել մի մարդու հենց այն հայտարարության համար, որը ինքն էր արել մեկուկես ամիս առաջ: Երկրորդ՝ չէր կարող մասնակից լինել մի վեճի, որը հետզհետե ինստիտուցիոնալից վերածվում էր անձնամիջյան վեճի, ավելի շուտ՝ բախման: Հետեւաբար նա ընտրեց միջամտության այլ ուղի՝ հարցը տանել Սահմանադրական դատարան՝ փաթեթային տեսքով՝ Կառավարություն-Բանակ սահմանադրական հարաբերությունները հստակեցնելու, օրենքի բացթողումները շտկելու, միաժամանակ կասկածի տակ դնելով մինչ այդ կատարված նման պաշտոնազրկումների օրինականությունը: Արդարեւ, ներքաղաքական իրավիճակի լարվածությունը չթուլացնող, ընդհակառակը՝ սրող մի ուղի էր ընտրել Բաղրամյան 26-ի Տերը, որը, սակայն, առավելությունն ունի խնդիրը սահմանադրական լուծման պարունակի մեջ պահելու, թույլ չտալով բանակի տրոհում, ներքին բախումներ:

Այսուհանդերձ Նիկոլը Նիկոլ չէր լինի, եթե համբերատար սպասեր Գերագույն դատարանի վճռին:

⇨2

## Թուրքիան, Ադրբեջանը եւ Պակիստանը չարիքի նոր առանցքն են կազմում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տասնամյակները համարվում են գլոբալ ապագաղութացման ժամանակաշրջան: Աֆրիկյան, միջինարեւելյան եւ հարավարեւելյան Ասիայի բազմաթիվ երկրներ անկախություն ձեռք բերեցին հենց այդ տարիներին: Օսմանյան կայսրությունը փլուզվել էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո եւ միայն թուրքերի առաջնորդ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի եւ ռուսների առաջնորդ Վլադիմիր Լենինի միջեւ գոյություն ունեցող բարեկամության շնորհիվ էր, որ Փոքր Ասիան փրկվել էր եւ դարձել արդի ժամանակների Թուրքիայի հանրապետությունը:



Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին Թուրքիան որպես նացիստական Գերմանիայի թաքուն համագործակիցը դարձյալ մսասեղանի վրա դրվեց, որպեսզի մասնատվի Ստալինի կարմիր բանակի հզոր ձեռքերով: Սակայն Մեծ Բրիտանիայի այդ ժամանակվա վարչապետ Ուինստոն Չերչիլն օգնության հասավ՝ փրկության օղակը գցելով Ֆուլտոնում (Միսուրի) արտասանած «երկաթյա վարագույրի» վերաբերյալ իր հայտնի ճառով, որն էլ սկիզբ դրեց սառը պատերազմին:

Այսպես, փաստորեն երկու անգամ ոչնչացումից փրկվելուց հետո, Թուրքիան վերջին տարիներին հառնել է որպես ամբարտավան գաղութարար մի պետություն:

«Կարոտախտ կայսրության հանդեպ: Նեոօսմանիզմի քաղաքականությունը» վերնագրով վերջերս հրատարակված գրքում, պատմաբան **Մ. Հաքան Յավուզը** նախկին վարչապետ (ապա նախագահ) Թուրգուտ Օզալին է վերագրում նեոօսմանիզմի սկզբնավորումը: Նրա հետքերով է գնում ներկայիս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը՝ կառուցելու համար ինչպես պատմաբանն է բնութագրում՝ «Իսլամական գողավարությունը» (Islamic Kleptocracy):

«London Times Literary Supplement» («Լոնդոն Թայմսի» գրական հավելված) հանդեսում տպագրված վերոնշյալ գրքի գրախոսականում **Ջերալդ Մակլինը** զարգացնում է թեման՝ գրելով. «Յավուզը ցույց է տալիս, թե ինչպես է Էրդողանի նվիրվածությունը օսմանյան սուլթան Աբդուլհամիդին մասամբ կապվում Նեջիպ Ֆազիլ Քիսակյուրեքի՝ «քաղաքական իսլամիստ գաղափարախոսության ֆաշիստ ջատագովի» գրությունների հետ: Վերջինիս հրատարակած «Բույուք Դողու» (Buyuk Dogu) խորագրով ազդեցիկ պարբերականը (1943-1975) խորին զայրույթով էր արտահայտվում Թուրքիայի արեւմտականացման բարեփոխումների մասին: Օսմանյան իսլամական արժեքներին վերադառնալու կոչ անելով **Նեջիպ Ֆազիլը** հորդորում էր, որ «ատելությունն ... է լավ հավատացյալի բնորոշ հատկանիշը», որ նաեւ վառ է պահում «քաղաքական կրքոտ աշխուժությունը»:

Կարեւոր է ճիշտ հասկանալ Էրդողանի աշխարհընկալման բուն սկզբնաղբյուրները, եւ նաեւ իմանալ նեոօսմանյան ապագա առաջնորդողի իր որդեգրած քաղաքականության դրդապատճառները: Հետաքրքրական է նաեւ հայտնաբերել արեւմտյան ոճի ժողովրդավարության հանդեպ նրա ունեցած արհամարհանքի ակունքները: Միայն դրանից հետո կարող ենք հասկանալ, թե ինչու է նա ատում այդ արժեքները եւ ցանկանում ոչնչացնել դրանք:

⇨4

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Երրորդը

Որեւէ երկրի մէջ, ուր իշխանութեան հանդէպ դժգոհանք կայ, բարեփոխումներու պահանջքով, կամ զայն արմատախիլ ընելու եւ երկրի ղեկը ստանձնելու նպատակով, սովորաբար ժողովուրդը երկու մասի կը բաժնուի՝ իշխանութեան կողմնակից եւ ընդդիմադրութիւն: Անոնք ընդհանրապէս մեծ եւ ազդեցիկ կուսակցութիւններ կ՚ըլլան, որոնցմէ մին կը մարտնչի, որ երկրի ղեկավարութիւնը իր ձեռքէն չելլէ, իսկ միւսը՝ որպէսզի ինք ձեռք անցընէ իշխանութիւնը:

Այս պայքարը կարգ մը երկիրներու մէջ բանաւոր ու գրաւոր խօսքի սահմանները չ՚անցնիր, իսկ ուրիշ երկիրներու մէջ ալ ցոյցերով, հանրահաւաքներով ու նոյնիսկ զինեալ բախումներով կ՚ըլլայ:

Այս երկու հակադիր կողմերէն անջատ՝ կայ երրորդ, աւելի մեծ զանգուած մը, որ չի խառնուիր իրադարձութեանց, որպէս դիտորդ կը մնայ՝ լռութիւն պահպանելով: Այս երրորդ կողմը կա՛մ երկրի իսկական մտաւորականութեան սերուցքն է, որ կը մնայ իր բարձունքին վրայ, նախընտրելով իր գիտական, գրական, արուեստի կամ այլ բնագաւառներուն մէջ շարունակել ստեղծագործել, կամ ալ լրիւ անտարբեր ամբոխ մը, որուն համար ով ուզէ թող ղեկավարէ, կարեւորը՝ ինք աշխատանք ունենայ եւ իր ապրուստը հոգայ:

Այս լուռ, եղելութեանց չխառնուող մասսան, որ միատարր չէ, եթէ միանայ եւ մէկ ճակատ կազմէ, կրնայ իր բարերար ազդեցութիւնը ունենալ երկիրը ցնցումներէ զերծ պահելու համար: Ան իր անտարբերութեամբ եթէ չի վնասեր երկրին, անտարբեր չըլլալով կրնայ օգտակար դառնալ:

Ամիսներէ ի վեր մեր մօտ ականատես կ՚ըլլանք ցոյցերու, հանրահաւաքներու եւ որ ամենաանհանդուրժելին է՝ ֆէյսպուքեան գրաւոր արտայայտութեանց, ուր իշխանամէտ կամ ընդդիմադիր անմակարդակ տարրեր անզուսպ, նոյնիսկ ջղագրգիռ ելոյթներ կ՚ունենան՝ բացած իրենց հայհոյանքներու եւ անէծքներու նեխած տոպրակը: Պահ մը կը տարուիմ մտածելու, որ ասիկա իսկապէ՞ս Հայաստանի մէջ է եւ հայաստանցիներու կողմէ՞ կ՚ըլլայ, քանի որ մենք, սփիւռքահայերս, մեր փոքր տարիքէն, միշտ Հայաստանը ընդունած ենք որպէս իտէալական հայրենիք, ուր ամէն ինչ կատարեալ է եւ որը մեզի ծառայելու է որպէս ուղեցոյց եւ արեւելումի թիրախ:

Օրերը կը սահին, բախումները կը շարունակուին, բարեբախտաբար ոչ անզուսպ ու մոլեգին ձեւով, ջանալով օրէնքի սահմանները չ՚ոտնակոխել: Օրերը կ՚անցնին, սակայն բան չի փոխուիր, ոչ մէկը տեղի կու տայ, ոչ ալ միւսը: Սակայն մայրաքաղաքը զգալի կերպով ցնցումներու կ՚ենթարկուի, քանի որ հանրահաւաքները պատճառ կը դառնան, որ քաղաքի կարգ մը բանուկ երթեւեկութեանց երակները խցանուին, վերը յիշածս երրորդ կողմի մարդիկ մեքենաներու եւ հանրակառքերու մէջ երկար մնան փակուած ու, մտովի, երբեմն ալ բարձրաձայն, անիծեն ընդդիմադիրներն ալ, իշխանամէտներն ալ:

Պսակաւոր ժահրի աւերները դեռ կը շարունակուին, անոր վրայ եկան բարդուելու Արցախի պատերազմն ու անոր ահաւոր հետեւանքները, երկիրը շատ լուրջ տագնապի մէջ է, սակայն «մարտնչող» կողմերը կացութեան համեմատ զգօնութիւն ցոյց տալու փոխարէն կը շարունակեն իրենց «գրոհները»:

Ահա՛, այստեղ է, որ երրորդ կողմը արթննալու է իր թմբիրէն, մեր մտաւորականութիւնը ոտքի կանգնելու է իր հեղինակաւոր խօսքը ըսելու եւ երկու կողմերուն ալ հրաւէր կարդալու լրջախոհութեան եւ զգաստութեան: Խումբ մը մտաւորականներու թեր կամ դէմ արտայայտութիւնները բան չեն փոխեր, բոլո՛րը անխտիր, որպէս երրորդ ոյժ հրապարակ իջնելով զսպելու են կողմերը, անշուշտ տրամաբանական եւ համոզիչ յորդորներով կիրքերը հանդարտեցնեն եւ երկիրը այս անել վիճակէն դուրս բերելու համար յատուկ ծրագիր առաջարկեն, որ կրնայ գոհացնել երկու կողմերն ալ:

Այս երրորդ ոյժը անգլուխ ըլլալու չէ, երկու հակադիր կողմերը երեքի վերածելու չէ: Բոլորին կողմէ յարգուած, իմաստուն ու խաղաղարար, համերաշխութեան ջատագով, սակայն անբեկանելի կամքով անձնաւորութիւն մը, որ իշխանութեան ձգտում չունենայ, սակայն ճամբայ հարթէ դէպի բաղձալի լուծում: Անկարելի՞ է, չեմ հաւատար, Հայրենի հողը միշտ ալ ծնունդ տուած է ցանկալիին. Սեւակի խօսքով՝ «ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած...»: Մաղթենք եւ սպասենք:

# Ռուսաստանի որոշ շրջանակներում ծավալվում են հայատյացության դրսեւորումներ

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Փետրվարի 5-ին ռուսական «glavnoe.net» կայքէջը «Ահավասիկ քեզ դաշնակից. Հայաստանը հավանություն տվեց հակառուսական պատժամիջոցներին» խորագրով հրապարակել էր հակահայ դիրքերից գրի առնված տեղեկատվական մի նյութ: Մինչ այդ, փետրվարի 3-ին, հատուկ ադրբեջանական «haqqin.az»-ի էջերում Մոսկվայից այդ նույն թեմային էր անդրադարձել **Յուլիա Մեդվեդեւան** «Հայաստանի դեսպանը Արեւմուտքին կոչ արեց պատժամիջոցներ կիրառել ընդդեմ ՌԴ-ի» վերնագրով: Մեդվեդեւայի հոդվածը շատ ավելի ընդարձակ էր: Երկու նյութերում էլ, որպես դաշնակից, Ռուսաստանի հանդեպ իր պարտավորությունները անտեսելու մեջ անիրավաբար մեղադրվում է Հայաստանը:

Համենայն դեպս, այս երկու հրապարակումներում էլ խոսքը Նիդեռլանդիայում ՀՀ դեսպան **Տիգրան Բալայանի** մասին է: Նա, ըստ ռուսական հրապարակումների, հարցազրույց է տվել նիդեռլանդական «Weekblad Elsevier» պարբերականին, արծարծելով Եվրոպական Միության կողմից Ռուսաստանի դեմ նախատեսվող պատժամիջոցների հարցը: Մի դեպքում ՀՀ դեսպանը դրանք գնահատել է դրական, իսկ մյուսում կիրառելու կոչ է արել Արեւմուտքին: Եթե դա զրպարտություն չէ եւ իսկապես այդպես է, ապա անտեղի է մեր դեսպանին դատապարտելը, որովհետեւ Ռուսաստանի դեմ պատժամիջոցների կիրառումը վեր է դեսպան Բալայանի ուժերից: Ի վերջո, պատժամիջոցների դրդապատճառը ՀՀ դեսպանի կոչերը չեն, այլ Արեւմուտքում նախագահ Պուտինի նկատմամբ վարվող քաղաքականությունը, ինչի մասին Մյունխենի անվտանգության կոնֆերանսում անձամբ ընդգծեց ԱՄՆ նորընտիր նախագահ Ջոզեֆ Բայդենը, որին նա մասնակցում էր տեսակապի միջոցով:



Հարկ է նշել, որ ռուսական որոշ շրջանակների մոտ հայատյացության ծավալման պարագայում խնդիրը սոսկ նշված հեղինակները չեն, այլ Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան անզգույշ որոշ արտահայտություններն ու մանավանդ Ադրբեջանում Ռուս ուղղափառ եկեղեցու թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Վլադիկա Ալեքսանդրի հրձիգ հայտարարությունները: Փետրվարի 3-ին Ղարաբաղ մարդասիրական օգնություն հասցնելու մասին պաշտոնական հաղորդագրության մեջ Ռուսաստանի դեսպանատունը Ստեփանակերտը դարձրել էր «Խանքենդի»: Կարծես դա բավական չէր, դեսպանատան մամուլի քարտուղար **Ալեքսանդր Գուչկովն** էլ դեռ ասել է, որ հրապարակումը միանշանակ չի ընդունվել հայերի կողմից: Այսինքն, ըստ Գուչկովի, պիտի միանշանակ ընդունվեր եւ մենք էլ Ռուսաստանի դեսպանատան նման «Խանքենդի» պիտի անվանեինք Ստեփանակե՞րտը:

Գալով Վլադիկա Ալեքսանդր կոչված արարածին, ապա նա էլ, ինչպես նշում է **Հարութ Սասունյանը** «Կալիֆորնիա Կուրիեր»-ում տպագրված հոդվածում, որը փետրվարի 9-ին թարգմանաբար արտատպել է «Առավոտ»-ը, ասել է, ստելով. «Ադրբեջանն ունի բազմամյա մշակութային ընկալման բարձր մակարդակ, Բաքվում հայկական եկեղեցիներն ու գրադարանները պահպանված են: Հաշտության պայմանագրի ստորագրման դեպքում դրանք կարող են կրկին օգտագործվել, ինչպես հարկն է»: Ավելին՝ ռուս արքեպիսկոպոսը նախ մեղադրել է հայերին «իրենք իրենց խաբելու մեջ», ապա ասել, որ հայերը «շատ են ցավում, որ ստիպված են եղել լքելու» Ադրբեջանը, մոռանալով, իհարկե, Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի հայկական ջարդերի մասին:

Ի պատասխան Հայոց ցեղասպանության վերաբերյալ հարցին, արքեպիսկոպոս կոչվող այս ռուս հոգեւորականը բառացիորեն նշել է. «Պետք է շատ զգույշ լինել ցեղասպանություն բառը օգտագործելիս: Մենք ունենք շատ տխուր փաստեր Ադրբեջանի տարածքում հայկական ուժերի գործողությունների վերաբերյալ: Ունենք հայկական կողմի սպանած հազարավոր ադրբեջանցիներ, ուստի ո՞ւմ պետք է դիմել ցեղասպանություն բառով»: Այնուհետեւ նա հավելել է. «Ադրբեջանցիներն իրենց սրտում ատելություն չունեն»: Չիմացողն էլ կկարծի հազար տարում հազիվ մարդասպան դարձած ադրբեջանցի հրոսակը հայ գերիների գլուխը սիրուց էր կտրում:

Ի դեպ, Ցեղասպանության ժխտողականությունը յուրահատուկ չէ սոսկ Վլադիկա Ալեքսանդրին: 2016 թ. հունվարի 11-ին, ինչպես նշել էր «Ազատություն» ռադիոկայանը, 36 երկրների, այդ թվում Լիբանանի, Սիրիայի եւ Լիբիայի ու նաեւ Ռուսաստանի Պետդումայի եւ միջազգային 8 կազմակերպության ճանաչած Հայոց ցեղասպանությունը Սուրբծննդյան հարցազրույցում ժխտել էր նաեւ Համայն Ռուսաստանի պատրիարք Կիրիլը, հայտարարելով, թե Թուրքիայում քրիստոնյաներ չեն ոչնչացվել: Ո՛չ, գերաշնորհ պատրիարք, ոչնչացվել են եւ ոչ միայն հայերը, որոնց հետ երիտթուրքերն ու քեմալական հրոսակները ցեղասպանության են ենթարկվել մոտ մեկ մլն. ասորիներին ու Պոնտոսի եւ Փոքր Ասիայի հարյուր հազարավոր հույներին, որոնք եղել են Ուղղափառ եկեղեցու հավատացյալներ: Մոռացության տալով այդ քրիստոնյաների ոչնչացումը, Ռուսաստանի պատրիարքը դեռ Կ. Պոլսո Հունաց տիեզերական պատրիարքի դեմ է պայքարում, որ աշխարհի բոլոր ուղղափառներին համախմբի իր հովանու ներքո: Թվում է, թե Կիրիլն էլ հավասարապես ժխտելով հայերի, ասորիների եւ հույների ցեղասպանությունները հաճոյանում է թուրքական իշխանություններին : Ինչ կարելի է ակնկալել ռուս հոգեւորականներից, որոնք կրելով հանդերձ Յիսուս Քրիստոսի սուրբ խաչը, ժխտում եւ դրանով խախտում են Աստուծո՝ «Սուտ վկայություն մի՛ տուր» պատվիրանը, այն էլ թուրքերին քծնելու մղումով:

Մեր հայրենակից Հարութ Սասունյանը հոդվածում Վլադիկա Ալեքսանդրի հայատյացությունն ու Հայոց ցեղասպանության փաստը նենգափոխելու նկրտումները վերագրում է հայատյացության անասնական բնազդով տառապող Իլհամին հաճոյանալու այս հոգեւորականի մղումներին:

Ռուսական զանգվածային որոշ լրատվամիջոցների պարագայում վերջերս ռուս խորհրդարանականների վայնասունները վերաճում են Հայաստանին եւ հայ ժողովուրդին հասցեագրված հայհոյանքների: Ինչ-որ մի տականք ռուսական հեռուստատեսության էկրանից Ղրիմի բռնակցումը չողջունելու համար ի լուր աշխարհի հայտարարում է, թե Ռուսաստանն այսուհետեւ իրավունք ունի թքելու Հայաստանի վրա: Մինչդեռ ի վերջո Ռուսաստանը ցարական, բոլշեւիկյան թե խորհրդային, վաղուց արդեն թքել է ինչպես Հայաստանի, այնպես էլ հայերի վրա: Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա նա էլ, ի դեմս նախագահ Վլադիմիր Պուտինի, ընդառաջել է հայատյացության անասնական բնազդով տառապող Ադրբեջանի եւ Թուրքիայի նախագահներին, որ Արցախի Հանրապետությանը ոչնչացնեն ֆիզիկապես, իսկ Հայաստանը՝ բարոյապես:

# Իրավունքի՞ ուժը, թե՞ ուժի իրավունքը

➪1 Կրկին կնիկական քմահաճ որոշմամբ Նա, իբր, իրավունքի ուժով նոր որոշմնագիր ուղարկեց Բաղրամյան 26, այս անգամ՝ Սպայակույտի պետ նշանակելով մի անձնավորության, որին հենց Ինքն էր ուժի իրավունքով պաշտոնազրկել դեռ մի քանի ամիս առաջ՝ Իր սարքած «դիմակահանդեսի» կանոնները չհարգելու համար: Նա կանխավ գիտեր, որ Բաղրամյան 26-ի Տերը չի հաստատելու Իր նոր որոշումը: Նրա բուն նպատակն էր եւ է՝ պառակտել Բանակը եւ ընդդիմությանը ստիպել բիրտ քայլերի: Այսինքն՝ ներքաղաքական վիճակը հասցնել լարվածության գագաթնակետի՝ «կա՛մ ես, կա՛մ ոչ ոք» մեզ ծանոթ սկզբունքով: Թույլ չտալու համար նման բան՝ Բաղրամյան 26-ի Տիրոջը մնում էր մեկ բան՝ վաղը, մարտի 13-ին, վարչապետին, ԱԺ խմբակցությունների եւ Հայրենիքի փրկության շարժման ներկայացուցիչներին հրավիրել խորհրդակցական հանդիպման՝ «իրավիճակը քննարկելու եւ ճգնաժամը հաղթահարելու փոխընդունելի լուծումներ գտնելու»:

Նիկոլը կգնա՞ հանդիպման. կասկածում եմ, խիստ:

# Սննդամթերքի գները թանկանում են, անշարժ գույքի շուկան՝ պասիվանում

## *Հայաստանը գտնվում է տնտեսական անկման եւ ճգնաժամի մեջ*

ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

*Անցյալ տարվա տնտեսական աղետալի՝ 7,5 տոկոս անկմանը անդրադարձել ենք մեր նախորդ հրապարակմամբ, նշելով, որ դա տեղի է ունեցել հակառակ Նիկոլ Փաշինյանի՝ «լավ կյանքի» մասին խոստումների: Այս տարին եւս սկսվել է տնտեսական անկման նույն տեմպով, սպառման ապրանքների, մասնավորապես սննդամթերքի գների կտրուկ թանկացմամբ եւ անշարժ գույքի շուկայի խորը պասիվացմամբ: Այժմ այդ ամենի մասին՝ հերթականությամբ:*



### Տնտեսական անկումն անկասելի ընթացք է ձեռք բերել

Վիճակագրական կոմիտեի հրապարակած 2021 թ.-ի հունվար ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշները փաստում են, որ տնտեսական անկումը շարունակվում է նույն տեմպով, որ պարտք վերցնելով եւ աշխատավարձեր, թոշակներ ու պարգեւավճարներ բաժանելով, տնտեսությունը չի կարող զարգանալ: **Ըստ վիճկոմի, հունվարին Հայաստանի տնտեսական ակտիվությունը նվազել է 7,5 տոկոսով**: Տնտեսության ճյուղերից արդյունաբերությունում անկումը կազմել է 1,8 տոկոս նախորդ տարվա հունվարի համեմատ: Առեւտրում, որտեղ զբաղված է բնակչության մի զգալի հատված, անկումը շատ ավելի խորն է՝ 15,1 տոկոս, որը նշանակում է, որ բնակչության եկամուտները նվազում են եւ մարդիկ ավելի քիչ գնումներ են անում: Ծառայությունների ոլորտում անկումը դարձյալ երկնիշ է՝ 10,3 տոկոս: Շինարարությունում արձանագրվել է 0,8 տոկոս աճ: Հիշեցնենք, որ անցյալ տարի այստեղ 9,5 տոկոս անկում էր: Գյուղատնտեսության ցուցանիշները բացակայում են, քանի որ հրապարակվում են եռամսյակը մեկ:

Բնականաբար, կտրուկ նվազել են թե արտահանման թե ներմուծման ցուցանիշները: Արտահանումը նվազել է 11,3 տոկոսով, ներմուծումը՝ արդեն 20 տոկոսով: Սրանք, թերեւս, մեր տնտեսության եւ սոցիալական վիճակի իրականությանը մոտ գտնվող տվյալներ են, քանի որ ապրանքաշրջանառությունը արձանագրվում է նաեւ գործընկեր երկրների մոտ եւ կարելի է հստակ պարզել, թե մեր Վիճկոմը իրակա՞ն տվյալներ է ներկայացնում, թե՞ հորինած: Տնտեսական վիճակի վատթարացմանը զուգահեռ գնաճը նոր հակառեկորդներ է խփում:

### Սննդամթերքի թանկացումներն իսկապես աննախադեպ են

Այս տարվա փետրվարին գնաճը նախորդ տարվա փետրվարի համեմատ կազմել է 5,3 տոկոս: Դա արդեն գերազանցում է Կենտրոնական բանկը որպես գնաճի նպատակային միջակայքի վերին շեմ սահմանած 4 տոկոսը: **Ընդ որում, ավելի բարձր գնաճ է արձանագրվում մարդկանց համար առավել կենսական սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների դեպքում՝ 7,8 տոկոս, ոգելից խմիչքների եւ ծխախոտի դեպքում՝ 8,7 տոկոս:** Առանձին ապրանքների թանկացումները պարզապես թռիչքային են:

Այսպես, բանջարեղենի ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 13,1 տոկոս գնաճ, մրգի ապրանքախմբում՝ 8,3 տոկոս: Յուղերի եւ ճարպերի ապրանքախմբում արձանագրվել է 19,7 տոկոս գնաճ, ընդ որում՝ բուսական յուղի միջին գնաճը կազմել է 50,4 տոկոս: Հացաբուլկեղենի եւ ձավարեղենի ապրանքախմբում գրանցվել է 9 տոկոս գնաճ: Կաթնամթերք, պանիր եւ ձու ապրանքախմբում 13,1 տոկոս գնաճ, ընդ որում՝ ձվի գինը 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ աճել է 52,5 տոկոսով: Շաքարի եւ շաքարավազի ապրանքախմբում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 40,6 տոկոս գնաճ: **Նախկինում Նիկոլ Փաշինյանի ընտանեկան թերթը շաքարավազի գնի աննշան բարձրացման ժամանակ աղմուկ-աղաղակ էր բարձրացնում, բայց հիմա՝ քար լռություն է:**

Ոչ պարենային ապրանքները նույնպես զգալի թանկացել են՝ 6,7 տոկոս: Բարձր է նաեւ այս ապրանքախմբի ամենակենսական ապրանքների՝ հագուստի եւ կոշիկի գնաճը՝ 5,2 տոկոս: Տնային գործածության առարկաների, կենցաղային տեխնիկայի եւ բնակարանների խնամքի ամենօրյա գործունեության ապրանքների գնաճը կազմել է 6,9 տոկոս:

Մատուցված ծառայությունների ոլորտում 2021թ. փետրվարին 2020թ. փետրվարի համեմատ արձանագրվել է սակագների ավելի ցածր՝ 1,6 տոկոս հավելաճ: Այստեղ ամենամեծ աճը գրանցվել է տրանսպորտի ոլորտում՝ 7,2 տոկոս: Դա ամենայն հավանականությամբ միջքաղաքային տրանսպորտի գների արտացոլումն է: **Տրանսպորտի սակագների նման թանկացումը կարծես թե բողոքի լուրջ ալիք չի առաջացրել, հակառակ նախկինում տեղի ունեցածի:**

Կենտրոնական բանկը բարձր գնաճը զսպելու համար իջեցնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Սակայն, փոխարենը այդպիսով վատթարացնում է տնտեսության ֆինանսավորման պայմանները տնտեսական խորը անկման պարագայում: Այս կացության լուծումը չի նշմարվում:

### Անշարժ գույքի շուկան հայտնվել է ճգնաժամի մեջ

Այս տարվա հունվար ամսվա Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի վերլուծությունները փաստում են, որ անշարժ գույքի շուկան հայտնվել է ճգնաժամի մեջ: **Այսինքն, նվազել են մարդկանց եկամուտները եւ կատարվող ներդրումները, ավելացել է ռիսկայնությունը, որը այս իշխանության նկատմամբ բնակչության անվստահության եւս մեկ ապացույց է:**

Այսպիսով, ըստ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի վերլուծության, 2021 թ.-ի հունվարին Հայաստանի Հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքները 22,4 տոկոսով ավելի քիչ են անցած տարվա հունվարի եւ 44,6 տոկոսով դեկտեմբերի համեմատ: Առքուվաճառքի գործարքների քանակը հունվարին անցած տարվա հունվարի համեմատ նվազել է 32,1 տոկոսով, դեկտեմբերի համեմատ՝ 45,1 տոկոսով: Նվազման տեմպի ցուցանիշներն ինքնին խոսուն են:

Առքուվաճառքի հիմնական օբյեկտներից բնակարանների առքուվաճառքը անցած տարվա հունվարի համեմատ նվազել է 24,2 տոկոսով, դեկտեմբերի նկատմամբ՝ 39,3 տոկոսով: Անհատական բնակելի տների առքուվաճառքի գործարքները անցած տարվա հունվարի համեմատ նվազել են 23,8 տոկոսով, դեկտեմբերի համեմատ՝ 44,1 տոկոսով: Հողատարածքների առքուվաճառքի գործարքները անցած տարվա հունվարի համեմատ նվազել են 26 տոկոսով, դեկտեմբերի համեմատ՝ 49,7 տոկոսով: Ընդհանուր գործարքների եւ առքուվաճառքի գործարքների քանակների կտրուկ նվազում առկա է թե՛ Երեւանում, թե՛ առանց բացառության բոլոր մարզերում:

**Օտարերկրյա քաղաքացիները ավելի շատ վաճառում են իրենց գույքը Հայաստանում, քան գնում:** Մասնավորապես, հունվարին օտարերկրացիները Հայաստանում գնել են 27, վաճառել 48 անշարժ գույք:

Անցած տարվա հունվարի համեմատ մարզերում բնակարանների գները նվազել են հունվարի համեմատ՝ 3,5 տոկոսով, դեկտեմբերի համեմատ՝ 0,2 տոկոսով: Երեւանում բնակարանների գները նվազել են 4,9 տոկոսով, դեկտեմբերի համեմատ՝ 0,5 տոկոսով: 1 քմ մակերեսի հաշվարկով շուկայական միջին գները դրամով հետեւյալն են եղել.

| | 2020թ. հունվար | 2020թ. դեկտեմբեր | 2021թ. հունվար |
|---|---|---|---|
| Կենտրոն | 659 000 | 613 050 | 608 500 |
| Արաբկիր | 456 600 | 440 200 | 436 500 |
| Քանաքեռ-Զեյթուն | 334 500 | 317 200 | 315 000 |
| Նոր-Նորք | 293 000 | 292 200 | 293 000 |
| Ավան | 297 000 | 289 000 | 288 000 |
| Էրեբունի | 291 500 | 282 000 | 280 500 |
| Շենգավիթ | 302 000 | 296 500 | 297 000 |
| Դավթաշեն | 344 500 | 317 000 | 315 200 |
| Աջափնյակ | 317 000 | 304 000 | 303 000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 293 500 | 283 200 | 281 000 |
| Նուբարաշեն | 188 000 | 175 000 | 174 500 |

Հետաքրքրական են հիպոթեկային գործարքների թվերը: Հունվարին Հայաստանում իրականացվել են 148 հիպոթեկային գործարքներ, որը 38,1 տոկոսով պակաս է նախորդ տարվա հունվարի եւ 61,2 տոկոսով՝ դեկտեմբերի համեմատ: Սա այն ոլորտն է, որտեղ Նիկոլ Փաշինյանը զորուգիշեր ինչ-որ երեւակայական աճի եւ «բումի» մասին էր խոսում:

Ամենից ցավալին սակայն այն է, որ այս պայմաններում Փաշինյանին հաջողվում է իրեն գովերգող ինչ որ զանգված հավաքել: **Գուցե այդ զանգվածն իսկապես արժանի է այս կացությանը, բայց չմոռանանք, որ բոլորս ենք պատասխանատու մեր երկրի համար: Հետեւաբար, չի կարելի թողնել իշխանությունը մեզ կործանման տանող վարչախմբի ձեռքին:**

# Արցախի էներգետիկան կանոնավորվում է

Հարկ է նշել, որ 2020թ. պատերազմական գործողությունների հետեւանքով ոչնչացվել կամ վնասվել էին Արցախի էլեկտրամատակարարման գրեթե բոլոր ենթակայաններն ու ցանցի բազմաթիվ հատվածներ: Շնորհիվ համակարգի աշխատակիցների նվիրված ու արհեստավարժ աշխատանքի՝ անգամ պատերազմական դժվարին պայմաններում հնարավոր է դարձել երաշխավորել կայուն էլեկտրամատակարարում բնակավայրերի հիմնական մասում:

Ներկայումս Արցախի էլեկտրաէներգետիկական համակարգը կանոնավորվում է: Չնայած դրան, հուսալի էներգամատակարարում ապահովելու համար պարբերաբար իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Օրինակ, 2021թ. փետրվարի 15-ին այդ նպատակի համար ժամը 09:00-ից - 15:00-ն ընկած ժամանակահատվածում անջատվելու է 110/35/10 կՎ «Հայկավան» ենթակայանից սնվող 10 կվ «30-րդ քաղաքային» օդային գիծը, հոսանքազրկելով՝ Ճարտար քաղաքը, Սոս, Մաճկալաշեն, Խնուշինակ, Քերթ, Քարահունջ, Կոլխոզաշեն, Խերխան, Ծովատեղ, Հերհեր, Կարմիր շուկա, Թաղավարդ, Կավահան, Մսմնա, Շոշ, Քարաշեն, (Դաշուշեն), Մխիթարաշեն,Կարմիր գյուղ, Խաչմաչ, Սարուշեն համայնքները:

Կարծում եմ անհրաժեշտ է մշակել Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման համալիր ծրագիր եւ փուլ առ փուլ իրականացնել:Այստեղ կան բազմաթիվ լուծումներ՝արեւային վահանակներ,ինչպես նաեւ միկրո հիդրո-էլեկտրակայաններ,որոնք հնարավորություն կտան ստանալ ցանկալի արդյունք: Կարեւոր խնդիր է նաեւ էներգախնայող տեխնոլոգիաների՝ ԼԵԴ լամպերի զանգվածային օգտագործում,արեւային լուսավորման լամպեր եւ այլն:Այստեղ մեծ օգնություն կարող են ցույց տալ բարեգործական միությունները եւ գործարար մարդիկ:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ

# Թուրքիան, Ադրբեջանը եւ Պակիստանը չարիքի նոր առանցքն են կազմում

⇨1 Երբ պատմաբաններն ու քաղաքական վերլուծաբանները Էրդողանին նկարագրում են որպես Հիտլերի ճանապարհով գնացողի, նրանք բոլորովին էլ չեն ցանկանում նշավակել նրան, այլ պարզապես մատնանշում են նրա ատելությամբ լցված փիլիսոփայությունը, որի սնուցողը Օսմանյան կայսրության կորսված տարածքները վերանվաճելու մարտական իսլամի անզուսպ փութաջանությունն է:

Ղարաբաղյան քառասունչորսօրյա պատերազմից հետո երեւան եկած զեկույցներն ու վերլուծությունները բացահայտում են, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի մտադրությունները չէին սահմանափակվում սոսկ իրենց վերանվաճած հողային տարածքներով: Նրանց փառասիրությունը շատ ավելի հեռուն էր գնում, հասնելով գլոբալ չափերի: Նրանց նպատակն է Կենտրոնական Ասիայում ստեղծել պանթյուրքական մի կայսրություն, ներգրավելով իրենց ծրագրերում նաեւ գերհզոր պետություններին:

Հայաստանը երկար ժամանակ հակամարտությունը դիտարկում էր որպես հայ-ադրբեջանական տարաձայնություն: Երբ Բայրակդար ԱԹՍ-երը խորտակեցին մեր երկրի օդային պաշտպանությունը պատերազմի առաջին տասնհինգ րոպեների ընթացքում, մենք հասկացանք պատերազմին թուրքական բանակի ներգրավվածության չափը: Հավաստացած էինք, որ հայկական բանակը դիմակայում էր թուրք-ադրբեջանական միացյալ ուժերին, որոնց եկել էին միանալու մոտ 2700 վարձկան ահաբեկիչներ Սիրիայից: Չէինք գիտակցում, որ մեկ այլ հավելյալ ուժային կառույց՝ Պակիստանն իր պաշտոնական օդային ուժերի համակարգով եւ անկախ ջիհադիստների բանակով ամբողջովին ներգրավված էր պատերազմում:

Մենք կարող ենք հայկական կողմին մեղադրել պատրաստված չլինելու եւ թշնամու ուժերի վերաբերյալ հետախուզական պատշաճ տվյալներ չունենալու համար, բայց չենք կարող նրան մեղադրել երեք պետությունների միացյալ բանակներից պարտվելու մեջ, մանավանդ որ նրանց թիկունքում կռվում էին նաեւ ահաբեկիչների գումարտակներ:

Էրդողանի իշխանության օրոք Թուրքիան օրինականացրել է ահաբեկիչների օգտագործումը բոլոր այն հակամարտություններում, որ ինքն է սանձազերծել (կամ մասնակցել) համաշխարհային հանրության եւ մասնավորապես ՄԱԿ-ի ամենատես հայացքի ներքո:

Պակիստանը ահաբեկիչների որջ է: Պատճառը, որ աֆղանական պատերազմը ձգձգվում է երկար տասնամյակներ շարունակ այն է, որ Պակիստանը ապաստան է տալիս եւ վարժեցնում թալիբան ահաբեկիչներին, որպեսզի ամերիկյան զորքերին պահի պատերազմներից հյուծված այդ երկրում՝ ձեւացնելով, որ դաշնակից է:

Պակիստանի ահաբեկիչները զբաղված են հատկապես Ջամու եւ Քաշմիր անկլավներում, որոնք 1947 թվից ի վեր Պակիստանին լարել են Հնդկաստանի դեմ:

«Մեմրի» (MEMRI) կայքէջի մարտի 2-ի համարում **Թուֆայիլ Ահմադը** գրում է. «Ադրբեջանի, Թուրքիայի եւ Պակիստանի համար միջազգային հարցերը կարեւոր չեն, քանի որ այդ երեք պետություններն էլ առաջնորդվում են միմիայն իսլամի գաղափարախոսությամբ: 1980-ականների վերջերից Պակիստանը ջիհադիստ ահաբեկիչների է սնուցել Ջամուում եւ Քաշմիրում: Իր զորքերը Քաշմիրից ետ չքաշելու Պակիստանի որոշումը սոսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի խախտում չէ, այլ Քաշմիրից ամբողջովին ձեռք քաշելու մերժում»:

Բազմաթիվ փաստեր կան, որ բացի Պակիստանի պաշտոնական օդային ուժերից, ջիհադիստների մեծաքանակ միավորումներ մասնակցել են ղարաբաղյան պատերազմին: Պակիստանը այն հազվագյուտ երկրներից է աշխարհում, որ չի ճանաչել Հայաստանի Հանրապետությունը եւ հետեւողականորեն նրա դեմ է քվեարկել ՄԱԿ-ի եւ համաշխարհային այլ ֆորումներում: Պատերազմից հետո **Իլհամ Ալիեւը** առատորեն գովեց Պակիստանին «Ադրբեջանին եղբայրական օգնություն ցուցաբերելու համար»:

Այժմ, երբ չարիքի այս առանցքը կազմող երկրները հաղթական են դուրս եկել ղարաբաղյան պատերազմից, սկսել են թիրախավորել աշխարհի այլ անհանգիստ, թեժ կետերը: Թուֆայիլ Ահմադը միեւնույն կայքում գրում է, որ «Ադրբեջանի բանակին օգնելուց հետո Պակիստանին Քաշմիրի հարցում զորակցություն է հայտնել Ադրբեջանը: Այս փոխադարձ սիրալիրությունը, որն ստեղծվել է եռակողմ (Թուրքիայի ներգրավվածությամբ) զինվորական դաշնությունից, այժմ թիրախավորել է Քաշմիրին, որպես զինվորական հաջորդ բախումների օբյեկտի»:

Քաշմիրի հակամարտությանը ներգրավվելով Ադրբեջանը փաստորեն Հնդկաստանի դեմ է դիրքորոշվում, միջուկային հզոր մի երկրի դեմ, որը նաեւ զենքերի ու զինամթերքի արտահանությամբ է ճանաչված աշխարհում:

Մենք հազվադեպ ենք ականատես լինում այն երեւույթին, որ հայկական դիվանագիտությունը նշանակալիորեն զբաղվի Հնդկաստանի հետ հարաբերությունների զարգացման հարցերով, մի կարեւոր խնդրի, որ ոչ միայն դիվանագիտական պաշտպանություն կարող է խոստանալ Երեւանին, այլ վստահաբար նաեւ ռազմական եւ տնտեսական օժանդակություն:

Մինչ Հայաստանը դժգոհ է, որ ստիպված զիջումների է գնացել Զանգեզուրի շրջանում միջանցք տրամադրելու հարցում (Ադրբեջանի առաջնորդ Ալիեւը այդ վայրը պատմական ադրբեջանական տարածք անվանեց), իսլամական աշխարհում տոնախմբություն է նկատվում՝ համարելով, որ այդ միջանցքով նախ ուղի է հարթվում դեպի պանթուրանական ծրագրերը եւ երկրորդ՝ որ Թուրքիան դրանով հասու է լինում Կասպից ծովի մատույցներում հայտնվելու:

Թուրքական ռազմանավերը արդեն մարտահրավեր են նետում ռուսական նավատորմին Սեւ ծովում: Կասպից ծովը թուրքական եւ ռուսական նավատորմերի համար դառնալու է բռնկման հաջորդ թեժ կետը: Թուրքիայի կողմից Ադրբեջանի գաղութացումը այդ երկիրը դարձրել է հարթակ՝ ընդարձակելու իր ներկայությունը Կենտրոնական Ասիայում:

Բաքուն էլ, իր հերթին, օգտվելու է աշխարհի այլ վայրերում Թուրքիայի կատարած շահագործումներից:

Թուրքիան եւ Ադրբեջանը ոչ միայն շարունակում են օգտվել Պակիստանի ջիհադիստական զորամիավորումների ծառայություններից, այլեւ հպարտանում են, որ նրանց գործընկերության շնորհիվ իրենք դարձել են իսլամական աշխարհի միջուկային կարողության կրողները:

Պակիստանը ապացուցել է, որ ծավալապաշտական երկիր է, որին բազմաթիվ անգամներ զինվորականությունն է ղեկավարել, իշխել: Այդ երկիրը 1968-ի միջուկային զենքի տարածումն արգելող պայմանագրի տակ չի ստորագրել: Այդ պատճառով էլ իրավաբանական տեսակետից պարտավորված չէ Թուրքիայից թաքցնելու իր միջուկային զենքերի տեխնոլոգիական հագեցվածության մանրամասները: Նախագահ **Էրդողանը** վաղուց է պնդում, որ Թուրքիայի նման քաղաքական հզոր ուժ ներկայացնող մի երկիր պետք է միջուկային զենք ունենալու հնարավորություն ստանա: Որպես ծավալապաշտ ղեկավար Էրդողանը կկարողանա իր սեփական միջուկային զինանոցը ունենալ այն բանից հետո, երբ Ռուսաստանը կավարտի երկու ատոմակայանների կառուցումը իր երկրում, սակայն ներկա պահին Պակիստանի պատրաստի ռումբերը շատ ավելի ձեռնտու են եւ գրավիչ: Միջին Արեւելքում եւ դրանից այն կողմ Թուրքիայի նվաճողական դիրքորոշումը հաշվի առնելով կարելի է ասել, որ տարածաշրջանի ռազմաքաղաքական կոնֆիգուրացիան բավականին մեծ փոփոխությունների է ենթարկվելու մոտիկ ապագայում:

«Foreign Policy» (Արտաքին քաղաքականություն) պարբերականի մարտի 2-ի համարում **Վալի Նասրի** «Փաստարկ» խորագրի ներքո զետեղված հոդվածը նշում է, որ «Հաջորդիվ Միջին Արեւելքում ընթացող հակամարտությունները արաբական պետությունների եւ Իրանի միջեւ չեն լինելու»: Նա կանխատեսում է, որ այդ տարածաշրջանը Թուրքիայի, Իրանի եւ Իսրայելի կողմից է ղեկավարվելու, չնայած որ երեք երկրներն էլ իրար հետ բախման մեջ են գտնվում եւ շարունակելու են գտնվել:

Իրանը ենթադրաբար ավելի բարեկամական դիրքորոշում ունի Հայաստանի հանդեպ: Սակայն տնտեսական համագործակցության բոլոր ծրագրերն ու խոստումները շատ բան չեն տվել մինչ օրս: Իրանի հոգեւորականներն ու արտաքին քաղաքականության աշխատակիցները ոգեւորվել են եւ շնորհավորում են Ադրբեջանին Հայաստանից տարածքներ «ազատագրելու» համար, գիտակցելով, որ Ադրբեջանն ու Թուրքիան ծրագրում են մասնատել իրենց երկիրը: Բացի այդ, Իրանի ղեկավարությունը տեղյակ է, որ Իսրայելը Ադրբեջանի միջոցով հետախուզական տվյալներ է հավաքում եւ ծրագրում է մի օր հանկարծակի հարձակվել Իրանի վրա: Զվարճալի չպետք է թվա հարցնել, թե արդյոք Հայաստա՞նն էլ պետք է որդեգրեր Ադրբեջանի քաղաքականությունը, որպեսզի արժանանար նման հարգանքի: Գուցե այդ դեպքում Իսրայելը հակված չէր լինի ընդարձակելու Ադրբեջանի սահմանները, այլ կգոհանար Հայաստանի ընձեռած հնարավորություններով:

Թուրքիայի գերհզոր պետություն դառնալով տարածաշրջանը թեւակոխում է շատ ավելի վտանգավոր մի ժամանակաշրջան: Թուրքիան օգտվում է մեծ ու փոքր ուժերի թշնամությունից եւ առաջ է տանում իր սեփական օրակարգը: Եթե հիմա չկանգնեցնեն, Անկարան չի դադարելու առաջ գնալուց: Նման սցենար աչքի առաջ ունենալով՝ ղարաբաղյան պատերազմը, դժբախտաբար, վերջին ողբերգությունը չի լինելու Հայաստանի համար:

Անգլ. թարգմանեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Պրոդյուսերական մրցանակ՝ Նաթալի Գասապյանին



Նաթալի Գասապյան

«Սանդենս» ինստիտուտի եւ «Ամազոն» ստուդիաների գեղարվեստական ֆիլմերի պրոդյուսերական աշխատանքների մրցանակներ շնորհող ժյուրին այլոց շարքում այս տարի մրցանակ է շնորհել նաեւ հայազգի ֆիլմարտադրող Նաթալի Գասապյանին իր «Վազիր» ֆիլմի համար: Մրցանակը շնորհում է խիզախ տեսլական ունեցող եւ պրոդյուսերական ոլորտում անկախ ստեղծագործելու պարտավորվածությունն ստանձնած անձանց: Գասապյանի ամուսինը եւ գործընկերը՝ Սեւ Օհանյանը երկու տարի առաջ արժանացել էր միեւնույն մրցանակին իր «Որոնում» ֆիլմի համար, որը կնոջ հետ միասին էին թողարկել: Նաթալին մրցանակը ստացել է իր համագործակից Անիշ Չագանտի հետ, որ վերոնշված երկու («Վազիր» եւ «Որոնում») ֆիլմերի ռեժիսորն է:




«Վազիր» (Run) ֆիլմի սցենարը գրել են Օհանյանն ու Չագանտին: Դերասանական կազմում ընդգրկված են Սառա Պոլսոնը եւ Կիերա Ալենը:

«Որպես պրոդյուսերներ կարող ենք կասկածել, թե ինչ-որ բան կարող ենք անել կամ փոխել աշխարհում, բայց երբեք չենք կարող կասկածել, որ արժի փորձել եւ այդ քայլը կատարել: Եթե մենք նոր մարդկանց հետ չշփվենք, նոր պատմություններ չլսենք եւ նոր հնարքներ չբանեցնենք, ապա երբեք էլ չենք իմանա, թե ինչ են մտածում ուրիշները: Եվ երբեք էլ չենք առաջադիմի: Այնպես որ շնորհակալություն «Sundance»-ին եւ «Amazon»-ին, որ հավանության արժանացրեցին մեր աշխատանքը», նշել է Նաթալին մրցանակն ստանալիս:

Նաթալին այժմ աշխատում է 2018-ի «Որոնում» (Searching) ֆիլմի շարունակության վրա՝ «Սոնի» ընկերության համար եւ «Ապագան» (The Future) ֆիլմի վրա՝ «HBC Max» ընկերության համար:

Հ.Ծ.

# Քրիստոս Ղալիլեաս. «Ես ինձ հարյուր տոկոս հույն եմ զգում եւ հարյուր տոկոս հայ»

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

*Բազմաթիվ երաժշտական քննադատներ նրան անվանել են «հին դպրոցի վիրտուոզ», «շլացուցիչ վիրտուոզության եւ անթերի երաժշտության անհավանական խառնուրդ», «հազվագյուտ ինքնատիպության եւ առավելագույն հստակության տեր արտիստ»: Քրիստոս Ղալիլեասը միջազգային աշխույժ կարիերա է ունեցել՝ որպես ջութակահար, կամերային երաժիշտ եւ ուսուցիչ:*

*Ծնվել է 1975 թվականին, Հունաստանի Սալոնիկ քաղաքում: Ջութակի իր առաջին դասերը չորս տարեկանում ստացել է հորից՝ հույն հռչակավոր ջութակահար եւ դիրիժոր Կոսմաս Ղալիլեասից, ապա ուսումը շարունակել է պրոֆեսոր Ստելիոս Կաֆանտարիսի մոտ: 1994-ին Աթենքի կոնսերվատորիան ավարտելուց հետո արժանացել է առաջին մրցանակի եւ ոսկե մեդալի՝ իր բացառիկ երաժշտական ընդունակությունների համար: Տասնվեց տարեկանում կայացել է Քրիստոսի առաջին հանրային ելույթը Սալոնիկի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ Պագանինիի ջութակի 1-ին կոնցերտի կատարմամբ: 1994-1995 թվականներին նա սովորել է պրոֆեսոր Զախար Բրոնի մոտ՝ Գերմանիայի Լյուբեկ քաղաքում, այնուհետեւ՝ Օբերլինի կոնսերվատորիայում (ջութակի անվանի մանկավարժներ Ռոլանդի եւ Ալմիտա Վամոսի մոտ), որտեղ արժանացել է մրցանակի եւ երաժշտության բակալավրի աստիճանի: 1995-ին Հունաստանի «Կրթաթոշակների ազգային մրցույթում» շահել է առաջին մրցանակ, իսկ երկու տարի անց նրան շնորհվել է Աթենքի «Մեգարոն» համերգասրահի «Ալեքսանդրա Տրիանդի» կրթաթոշակը: Այդ ժամանակից ի վեր Ղալիլեասը որպես մենակատար հանդես է գալիս բազմաթիվ նվագախմբերի հետ եւ միջազգային փառատոներում: 1999 թվականին նա ուսումը շարունակել է Ջուլիարդի դպրոցում՝ ջութակի լեգենդար մանկավարժ Դորոթի Դելեյի մոտ եւ ստացել մագիստրոսի կոչում: 2002-ին հիմնադրել է 22 հոգուց բաղկացած «Հելլենիկ կամերատա» կամերային նվագախումբը, շրջագայել Հյուսիսային, Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայում: 2005 թվականին ստացել է ջութակի կատարման դոկտորի կոչում Սթոնի Բրուքի Նյու Յորքի Պետական համալսարանից: Դոկտոր Ղալիլեասը հրավիրվել է ջութակ եւ կամերային երաժշտություն դասավանդելու մի շարք հայտնի հաստատություններում, զբաղեցրել է կարեւոր վարչական պաշտոններ, օրինակ՝ եղել է Հունաստանի Աֆիտոս քաղաքի ամառային երաժշտական ակադեմիայի գեղարվեստական ղեկավարը: 2007-ից Քրիստոս Ղալիլեասը Ջորջիայի պետական համալսարանի ջութակի դոցենտ է եւ կամերային երաժշտության համակարգող: Նրա վերջին աշխատանքը Հունաստանի եւ Հայաստանի կին կոմպոզիտորների երաժշտության պատվիրումն ու ձայնագրումն է: 2015-ին Ղալիլեասը Սալոնիկում հիմնադրել է «Անատոլիա» ամառային երաժշտական ծրագիրը, որի գործադիր եւ գեղարվեստական ղեկավարն է: Քրիստոս Ղալիլեասը նվագում է 1705 թվականի Ջուզեպպե Գուառներիի ջութակ...*

**-Սիրելի՛ Քրիստոս, մեր զրույցը սկսենք հեռավոր 1994 թվականին վերաբերող իմ հիշողությունից, երբ ելույթ ունեցար Երեւանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Անմոռանալի համերգ էր: Հայաստանի համար այդ ծանր ժամանակաշրջանում մի շատ երիտասարդ երաժիշտ, նույնիսկ կիսով չափ հայ լինելով, փայլուն կատարմամբ հանդես եկավ իր մոր նախնիների երկրում: Ես նույնիսկ հիշում եմ, թե ինչպես էր քո մայրն արտասվում հուզմունքից եւ հպարտությունից...**

-Այո՛, դա շատ յուրահատուկ եւ անմոռանալի փորձառություն էր: Ես տասնինը տարեկան էի եւ առաջին անգամ Հայաստան այցելելն իմ մեջ շատ հուզիչ զգացմունք առաջացրեց: Դրան գումարվում էր այդպիսի հիանալի նվագախմբի եւ հայտնի դիրիժոր Լորիս Ճգնավորյանի հետ ելույթ ունենալու ոգեւորությունը: Իրոք, շա՜տ, շա՜տ յուրահատուկ պահ էր: Ես անհամբեր սպասում եմ կրկին Հայաստան այցելելուն, ինչը շատ եմ կարոտում:

**-Ինչպե՞ս ընթացավ քո կարիերան:**

-Բողոքելու տեղ չունեմ: Ես շատ երջանիկ եմ՝ որպես մենակատար եւ կամերային երաժիշտ ծավալելով աշխույժ կարիերա աշխարհի ավելի քան երեսուն երկրներում: Ելույթներ եմ ունեցել աշխարհի ամենահեղինակավոր համերգասրահներում, ինչպիսիք են Վիեննայի «Մյուզիքֆերեյնը» եւ «Կոնցերտհաուզը», Մյունխենի «Գաստայգը», Պրահայի «Ռուդոլֆինումը» եւ «Սմետանա» համերգասրահը, Նյու Յորքի «Քենեդի» կենտրոնը, Բուխարեստի «Աթենաումը»՝ ի թիվս բազմաթիվ այլ վայրերի: Համագործակցել եմ այնպիսի նշանավոր երաժիշտների հետ, ինչպիսիք են թավջութակահար Միշա Մայսկին, դաշնակահարներ Դիմիտրի Սգուրոսը եւ Յուրի Մարգուլիսը, ինչպես նաեւ «Բորոդին» եւ «Կոմիտաս» լարային քառյակները:

**-Դասական երաժշտության վիճակը շա՞տ է տարբեր Հունաստանում եւ ԱՄՆ-ում:**

-Ոչ այնքան: Գիտենք, որ երաժշտությունը միջազգային լեզու է, որը հիմնականում միավորում է մարդկանց ու մշակույթներին եւ մեզ ավելի մոտեցնում միմյանց: Դասական երաժշտության վիճակը գուցե մի փոքր այլ է արվեստի ոլորտում՝ աջակցության առումով: Հունաստանում արվեստը դեռեւս մեծապես աջակցում եւ սուբսիդավորում է պետությունը, ինչը լավ բան է, իսկ ԱՄՆ-ում՝ հիմնականում՝ մասնավոր սեկտորը (նույնպես լավ բան է): Ես իսկապես կարծում եմ, որ այդ երկուսի համադրությունը իդեալական կլինի:

**-Քույրդ՝ Նվարդ-Վերոն Ղալիլեասը, նույնպես երաժիշտ է, որը երկու անգամ մասնակցել է Գյումրիում Վերածննդի երաժշտական փառատոնին...**

-Այո, Նվարդ-Վերոնը փայլուն ֆլեյտահար է՝ հիանալի կարիերայով: Մենք համագործակցել ենք բազմաթիվ առիթներով, միասին ենք սկսել «Անատոլիա» երաժշտական փառատոնը: Այո, նա նույնպես այցելել է Հայաստան եւ մոտ ապագայում մենք ցանկանում ենք միասին հանդես գալ Հայաստանում:

**-1994-ի քո համերգից հետո երեւանյան մի թերթ հրատարակեց հոդված՝ «Ղալիլեաս-Գալֆայան խենթերի ընտանիքը» վերնագրով: Ինչո՞ւ այդպես:**

-Հոդվածը վերաբերում է շատ հայտնի «Սարդարապատ» երգին, որտեղ նշվում է «երկրիդ հանդեպ խենթ սերը»: Չնայած ծնվել եւ մեծացել եմ Հունաստանում եւ հույն հորից, սակայն մայրս՝ Տիրուհի Գալֆայան-Ղալիլեասը, ամեն ինչ արեց, որ քույրս եւ ես դաստիարակվենք որպես «իսկական հայ»: Նա մեզ հետ խոսում էր միայն հայերեն՝ համոզվելու համար, որ մենք սովորում ենք լեզուն ու մեզ սովորեցրեց մեր հպարտ ազգի պատմությունը: Ընտանիքի իմ հայկական կողմը շատ ակտիվ էր Սալոնիկի համայնքում: Իմ մեծ պապը՝ Կարապետ Ղազարյանը, այն մարդկանցից էր, որը հող էր գնել Սալոնիկի հայկական եկեղեցու համար եւ ֆինանսավորել դրա շինարարությունը: Պապս՝ Ռուբեն Գալֆայանը, երեսուն տարի Սալոնիկի հայ համայնքի նախագահն էր, հորեղբայրս՝ Կարապետ Գալֆայանը, Խորհրդային Միության փլուզումից հետո Հունաստանում Հայաստանի Հանրապետության առաջին ներկայացուցիչն էր: Նա նաեւ պատասխանատու էր հումանիտար օգնության կազմակերպման համար, որը Հունաստանից Հայաստան է ուղարկվել 90-ականների սկզբին: Մայրս ավելի քան 30 տարի եղել է Սալոնիկի Համազգային մշակութային միության նախագահ: Ինչպես տեսնում ես, իմ մեջ առկա է հայության շատ երկար եւ ամուր պատմություն: Այն հարցին, թե ինձ ավելի շատ հույն եմ զգում, թե՞ հայ, պատասխանում եմ, որ ես ինձ հարյուր տոկոս հույն եմ զգում եւ հարյուր տոկոս հայ:

**-Ի դեպ, 2011-ին Սալոնիկում ես այցելել եմ «Գալֆայան թանգարան» եւ հյուրընկալվել Կարապետ եւ Անահիտ Գալֆայանների տանը, այժմ երկուսն էլ՝ լուսահոգի: Ի՞նչ հետք են նրանք թողել Հունաստանի թանգարանային կյանքում:**



-Հավանաբար այցելել ես Սալոնիկի Բյուզանդական մշակույթի թանգարանում գտնվող Գալֆայան մասնավոր հավաքածուի ցուցահանդեսը: Գալֆայան ընտանիքի երեք սերունդ երկար ժամանակ զբաղվել է արվեստի գործեր հավաքելով եւ հնաոճ իրերի վաճառքով: Հայ արվեստի նրանց մասնավոր հավաքածուն կոթողային է: Մեր հայկական մշակութային ժառանգությունը խթանելու գործում նրանց նվիրվածությունը հատկանշական է եւ հիացմունքի արժանի:

**-Հայ երաժշտությունը որքանո՞վ է ներկա քո աշխատանքում:**

-Իմ համերգային ծրագրերում ես մշտապես ընդգրկում եմ հայ կոմպոզիտորների երաժշտություն: Հաճախ եմ համագործակցում նաեւ հայ արվեստագետների հետ: Դասախոսություններ եմ կարդացել հայ երաժշտության, Կոմիտասի եւ «Հայկական հնգյակի» վերաբերյալ: Բախտավոր էի՝ մանկությանս տարիներին հնարավորություն ունենալով հանդիպել հայ երաժշտության այնպիսի լեգենդար գործիչների, ինչպիսիք են կոմպոզիտորներ Ղազարոս Սարյանը, Էդվարդ Միրզոյանը, դիրիժորներ Հովհաննես Չեքիջյանը եւ Լորիս Ճգնավորյանը, Կոմիտասի հայտնի քառյակը եւ այլք: Այս հիանալի արվեստագետներն այցելել են Սալոնիկի մեր տուն՝ Հունաստան եկած լինելով հորս՝ ականավոր ջութակահար եւ դիրիժոր Կոսմաս Ղալիլեասի հրավերով: Մայրս՝ Տիրուհի Գալֆայան-Ղալիլեասն էր հորս առաջարկել, որ նա Հայաստանից հյուրախաղերի հրավիրի այս բոլոր մեծ երաժիշտներին եւ համույթներին: Նրանց թվում են Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Արամ Ղարաբեկյանի ղեկավարած Հայաստանի կամերային նվագախումբը, «Սերենադ» կամերային նվագախումբը, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը, «Հայաստանի փոքրիկ երգիչները», «Կոմիտաս» եւ «Խաչատրյան» քառյակները եւ շատ ուրիշներ: Այո, հայ երաժշտությունը միշտ եղել է իմ կյանքի շատ մեծ մասը, ինչի համար ես շնորհակալ եմ:

**-Կապ պահո՞ւմ ես ԱՄՆ-ի եւ աշխարհի հայերի հետ:**

-Այո, ես մշտական կապի մեջ եմ ամբողջ աշխարհի հայերի հետ: Ես շատ ակտիվ եմ նաեւ որպես Հունաստանի եւ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի անդամ: Ներկայումս ներգրավված եմ Հունաստանում մարդասիրական օգնություն հավաքելու եւ Հայաստան ուղարկելու մի ծրագրի մեջ, որպեսզի արցախյան պատերազմից հետո անհրաժեշտ շատ աջակցություն ցուցաբերենք: Որպես հայ՝ ես վրդովված եմ այս հակամարտության արդյունքներից եւ մեր կրած զոհերի համար: Մենք պետք է շարունակենք պայքարել հանուն մեր գործի, որպեսզի համոզվենք, որ մեր քաջ հերոսների զոհաբերությունն իզուր չէր: Փառք ու պատի՛վ մեր հերոսներուն:

## Բրիտանական պարբերականը Դիանա Ադամյանի մասին



**Լոնդոնի «Սթրադ» երաժշտական ամսաթերթը (նվիրված լարային նվագարաններին եւ ակադեմիական երաժշտությանը) փետրվարի համարում հրատարակել է «Ջութակահարուհի Դիանա Ադամյանը պայմանագիր է ստորագրում «Օպուս 3 արտիստսի» հետ» հոդվածը: Հիշված է, որ հայ երիտասարդ ջութակահարուհի Դիանա Ադամյանը 2018 թ. հաղթել է «Եհուդի Մենուհին» միջազգային մրցույթում եւ առաջին մրցանակակիր դարձել 2020 թ. առցանց կայացած Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների մրցույթներում: «Սթրադը» տեղեկացնում է նաեւ, որ 2000 թվականին Երեւանում ծնված Ադամյանը ներկայումս սովորում է Մյունխենի Կատարողական արվեստի համալսարանում (ուսուցիչ՝ Աննա Չումաչենկո): Ադամյանը ելույթներ է ունեցել տարբեր նվագախմբերի հետ, Լոնդոնի Թագավորական ֆիլհարմոնիկում եւ Ճապոնիայում անցկացվող Մացումոտոյի միջազգային երաժշտական փառատոնում: Առաջիկայում նախատեսվում են ջութակահարուհու ելույթները Տոկիոյում եւ Ֆրանսիայում, եւ առաջին անգամ՝ Գերմանական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Ադամյանին իսրայելացի նշանավոր ջութակահար եւ դիրիժոր Պինխաս Ցուկերմանը հրավիրել է մասնակցելու Օտտավայի արվեստի ազգային կենտրոնի ամառային վարպետության դասերին: Հայ ջութակահարուհին վերջերս նաեւ միացել է Ցուկերմանին՝ Լոնդոնի Քադոգան Հոլում կայանալիք համերգին՝ Թագավորական ֆիլհարմոնիայի հետ նվագելու Բախի երկու ջութակի համար գրված կոնցերտը: Համերգը ոգեկոչելու է Հայոց ցեղասպանությունը:**

Ա. Բ.

ՍԵՐԺ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ

*Բակունց գրողին տակավին դպրոցական տարիներից սիրեցի՝ ընթերցողական վայելում ունենալով նախ նրա «Ալպիական մանուշակ» գոհարակերտ պատմվածքը: Հետո, արդեն դպրոցական ծրագրերից զատ, հափշտակված ընթերցեցի «Միհրավ», «Սպիտակ ձիավորը», «Խոնարհ աղջիկը», «Ծիրանի փողը», «Այս սարի լանջին» ու էլի շատ սքանչելի գործեր: Եվ քանի դեռ չունեի բանասիրական կրթություն, շահեկանորեն միաժամանակ զերծ էի կանխակալ գրականագիտական, հաճախ սուբյեկտիվ ուղղորդումներից, տարակարծիք մեկնաբանություններից, ուստի կարդացածս ընկալում էի զուտ պատանեկան ջինջ հոգով՝ անմիջական ու յուրովի:*

*Բակունցը կյանքիս ուղեկիցն է. տասնամյակներ շարունակ վերընթերցում եմ ոսկեգրիչ սիրելի գրողին կրկին ու կրկին: Եվ ամեն անգամ զարմանալիորեն չնկատված բակունցյան մի նրբերանգ, նոր ծալք եմ հայտնաբերում կամ բացահայտում ինձ համար: Օրինակ, բավականին ուշ նկատեցի, որ հավերժական սիրո առասպել «Միհրավ»-ի հերոսուհի Սոնան, Դիլան դայուն «տաք հնձանում» աշնան հանդիպումին հաջորդած ամռանը «մեռավ երեխայի վրա»: Ինչու՞ է հեղինակը մատնանշում՝ «Այդ աշնան հաջորդ ամառը»: Ուրեմն, ինն ամիս է անցել, եւ ցավալիորեն չապրեց նրանց մաքրամաքուր սիրո պտուղը եւ հենց ինքը՝ ոսկեփետուր միհրավի պես Սոնան... Եվ «Սոնային լաջվարդ շապիկով թաղեցին...»:*

❖❖❖

... 2020-ի սեպտեմբերի 20-ին, վերահաս աղետաբեր պատերազմից ուղիղ յոթ օր առաջ, որպես սրտի վաղեմի փափագ, Ակսել Բակունցի ծննդավայր՝ Գորիս մեկնեցի: Նպատակս տարիներ առաջ իմ ձեռքբերած, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Հենրիկ Մամյանի՝ Ակսել Բակունցին վայելուչ հագուկապով պատկերած գեղարվեստական ուշագրավ գրաֆիկ աշխատանքը գրողի տուն-թանգարանին նվիրելն էր: Միշտ խորհում էի, որ նկարի ճշմարիտ հասցեատերը, արդարեւ, թանգարանը եւ նրա հազարավոր այցելուներն են:

Բացվող օրվա վաղ առավոտյան իմ մեքենայով ճամփա ելա: Նորածագ արեւի առաջին շողերի հետ արդեն Աշտարակից Գորիս՝ 280 կիլոմետրանոց երկարուձիգ ճանապարհին եմ:

Խաղաղ այգաբաց է Արարատյան դաշտում: Ոսկեւորված հսկայաբերձ Մասիսների դիմաց, լայնահուն մայրուղու երկու կողմերում, հողի աշխատավորները բերքի այգիներում, դեռ ցողը վեր չելած, խաղողի բերքահավաքի են: Ե՛վ նրանք, եւ՛ Հայաստան աշխարհում ու Արցախում բոլոր-բոլորը, խաղաղ սրտով իրենց աշխարհաշեն առտնին գործերին են՝ մեր թշնամյաց կողմից նյութվող մոտալուտ դավերին անտեղյակ, միամիտ ու անհոգ... Մտադիր եմ ճանապարհային հանգույց Գորիսում, փոքրիկ առաքելությունս ավարտելուց հետո, զբոսաշրջել՝ կա՛մ Տաթեւ, Կապան, Մեղրի ուղղությամբ, կա՛մ էլ՝ Խնձորեսկ, Ստեփանակերտ, Ամարաս ու Գանձասար:

Երանավետ ժամանակներ. գործնականում բաց են իմ առջեւ երկրիս բոլոր ճանապարհները, եւ ոչ մի խոչընդոտ, արգելափակոցներ, այլազան դրոշներ, որ շուտով պիտի ցցվեն մեր պատմական հողերի վրա եւ մեր սրտի մեջ...

Արեւն ավելի բարձրացավ: Անցա Վայոց Ձորը, Սարավանդը եւ հիմա Որոտանի լեռնանցքի ամենաբարձր կետում եմ՝ ծովի մակարդակից 2344 մետր բարձր: Հենց այստեղ, լեռների գրկում, վեր է խոյացել «Զանգեզուրի դարպասներ» բազալտակուռ, լեռնային տեղանքին ու ճանապարհին հիանալիորեն ներդաշնակվող հոյակերտ կառույցը, որին ժողովուրդը նաեւ «Զանգեր» է անվանում:

1980-ականների վերջին այս կոթողը ստեղծվեց Սիսիանի շրջանի երկարամյա ղեկավար, գրականագետ եւ լրագրող Շչորս Դավթյանի մտահղացմամբ եւ անդուլ ջանքերով: Ճարտարապետը մեծաքանքար Ռաֆայել Իսրայելյանի տաղանդաշատ որդին է՝ Արեգ Իսրայելյանը, քանդակագործը՝ Սյունյաց աշխարհի բարի ծնունդ, ՀՀ ժողովրդական նկարիչ Գետիկ Բաղդասարյանը: Հուշարձանի քիվերին Զանգեզուրի խորհրդանիշ զանգերն են քանդակված:

Այստեղից է սկսվում ներկայիս Սյունիքի մարզը՝ հասնելով մինչեւ Արցախ եւ Արաքս: Մտածում եմ՝ տեսնես այս լեռնաշխարհում կա՞ գեթ մեկ հողակտոր, որին չի դիպել Զանգեզուրի գավառային հողբաժնի գյուղատնտես Ալեքսանդր Թեւոսյան-Բակունցի օրհնված ոտքը...

Արդեն վայրէջք ճանապարհով եմ ընթանում: Առջեւս հորիզոնից-հորիզոն, լայն ու ընդգրկուն լեռնային լանդշաֆտին հատուկ բնապատկեր է փռված՝ դեղնականաչավուն գույներով ողողուն: Հեռվում կարծես Սիսիան քաղաքից ինչ-որ բան է նշմարվում, որից շատ այն կողմ բանաստեղծ Համո Սահյանի գովերգած Գյազբել, Աղոթարան վիթխարահասակ լեռներն են՝ կաթնասպիտակ մշուշով շղարշված: Այնտեղ, ձորերի մեջ ծվարած, բանաստեղծի հայրենի Լոր գյուղն է, ուր մեկ ուսումնական տարի ուսուցչություն է արել Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի 16-ամյա սան Ալեքսանդր Թեւոսյանը: Ապագա գրող Ակսել Բակունցի գրական հասունացման ճանապարհին, գյուղական բուն կյանքի եւ գեղջկական հոգեբանության ճանաչողության իմաստով, անտարակույս, ծանրակշիռ դեր է ունեցել հայկական հնամենի այս շենը, որտեղ էլ պատանի Ալեքսանդր վարժապետի սրտում ծլարձակում է... Նորին մեծություն սե՜րը («Խոնարհ աղջիկը»): Համո Սահյանն իր մի հուշագրում Բակունցի մասին, ի խորոց սրտի, ասում է. «Տեսնում եմ նրան... Եվ հուշերիս մեջ նրա ասպետական կերպարի առաջ իրենց ճերմակ գլուխներն են խոնարհում իմ ծննդավայրի երախտապարտ լեռները»:

Հեռաստանում թանձրապատ մշուշների պատռվածքից փորձում եմ տեղորոշել Որոտանի կիրճը: Մտաբերում եմ ԽՍՀՄ եւ Հայաստանի ժողովրդական նկարիչ Մարիամ Ասլամազյանի՝ ինձ պատմած այն հիշարժան դրվագը, երբ որ ինքը, իր նկարչուհի քույրը՝ Երանուհին եւ նրանց հյուրընկալած Բակունցը, ձիեր հեծած Տաթեւի վանք են գնում (ի դեպ, հետագայում գրողի մասին նկարչուհին հուշեր հրատարակեց պատմաճանաչողական անչափ արժեքավոր «Կյանքիս դավթարը» հուշագրությունների գրքում, եւ որի մասին ամբողջական երկու էջով, իմ նախաձեռնությամբ, անդրադարձ տպագրվեց «ԱԶԳ» թերթի 2006թ. հոկտեմբերի 14-ի համարում):

Մինչ վանական համալիր հասնելը, Որոտանի գեղատեսիլ կիրճի՝ «Սատանայի կամուրջ» անվանվող վայրում, Մ. Ասլամազյանն առաջարկում է երեքով լուսանկարվել: Սակայն Բակունցը հրաժարվում է:

- Ակսե՛լ, կարծում ես, որ մենք արժանի չե՞նք քեզ հետ լուսանկարվելու, - վիրավորված գանգատվում է խորհրդային երկրում արդեն բավականին ճանաչում ունեցող Մ. Ասլամազյանը: Բակունցը տխուր ժպտալով, դառը մի իրողություն է խոստովանում.

- Սիրելինե՜րս, իմ գլխին օրավուր «սեւ ամպեր» են թանձրանում... Պարզապես չեմ ուզում սույն ֆոտոփաստով վտանգեք ձեր ծաղիկ կյանքը...

Բակունցի կանխագուշակումը, ցավոք, իրականացավ. լուսեղեն մարդուն, մեր մեծագույն գրողին զրպարտում, հանիրավի ձերբակալում, ապա երկար ու տանջալի հարցաքննություններից հետո, Երեւանի բանտից ծածուկ Հրազդանի կիրճ են տանում, գնդակահարում ու թաղում իր իսկ ձեռքով փորած խորշում... Ցայսօր տակավին անհայտ է նրա շիրմատեղին, ինչպես որ իր ընկերոջ ու գրչեղբայր հանճարեղ Եղիշե Չարենցինը...

1930-ականների խորհրդային բիրտ իրականություն... Նախ կալանեցին միտքն ու հոգին, ապա ֆիզիկապես ոչնչացրեցին անզուգական մի գրողի, որի արձակը համաշխարհային մեծությունների գլուխգործոցների մակարդակի վրա է: Հզոր գեղարվեստականությամբ, անզուգական հայերենով, համամարդկային գաղափարներով, քնարականությամբ առլեցուն բակունցյան գրական հունձքը, ինչը նա սրտաբուխ հանձնեց ժողովրդին եւ որն, ինքնին, մի ամբողջ գրականություն է, իրականում դարձավ գրողի անձնական ողբերգությունը, նրա Գողգոթան...



Կապտագորշ, սահուն ասֆալտուղին, ասես կիլոմետրեր ձգվող լայն ու երկար ժապավեն, անընդհատ քանդվում-բացվում ու փռվում է իմ առջեւ: Հընթացս Բակունցի ժամանակակիցներից էլի մի դրվագ եմ վերհիշում: Շատ տպավորիչ ու ճանաչողական է Վախթանգ Անանյանի «Բակունցի հետ» հուշը: Այն հրապարակվել է 1959-ին, երբ տեւական լռությունից հետո, առաջին անգամ պետականորեն նշվել է շինծու մեղադրանքով դատապարտված, իսկ հետստալինյան տարիներին, 50-ականների կեսին, արդարացված գրողի ծննդյան 60-ամյակը (ի դեպ, Վ. Անանյանը ժամանակին ինձ պատմել է, որ հոբելյանի առթիվ նա վերջապես պատեհություն է ունենում արտահայտելու ավելի քան քսան տարի սրտում անթեղված սերն ու ցավը՝ առ «անբասիր հոգի սիրելի Ակսելը»):

Քեզանից հողի հոտն եմ առնում, - գյուղատնտեսական «Մաճկալ» թերթի խմբագիր Վ. Անանյանին մի օր զգացված ասել է հանգամանքների բերումով մայր բնությունից կտրված, մայրաքաղաքում աշխատող եւ ապրող հողապաշտ Բակունցը:

Սրտառուչ է հուշ-պատմվածքի վերջին հատվածը: Բանտարկված Վ. Անանյանը վկայում է. «...նրա ձեռագիրը տեսա բանտի կամերայի մի մութ անկյունում՝ խոնավ պատի ծեփին. «Այսօր տանում են գլուխս ուտելու: Ակսել Բակունց...»: Չոքեցի երեսով դեպի պատը՝ գլուխս ափերիս մեջ, եւ լուռ ողբացի իմ ընկերոջ, իմ ուսուցչի ողբերգական վախճանը: Կսկծացի կախարդական Միհրավի համար, որ արյուն տալով գնաց թաղվեց անհայտության մեջ...»:

Ակսել Բակունցի մասին գրված գրականագիտական բազում աշխատությունների ու հոդվածների մեջ հարկ է առանձնացնել Հակոբ Կարապենցի գնահատականը:

«Մենավոր մի գագաթ է Բակունցը,- գրում է սփյուռքահայ անվանի գրականագետը: Նրանից առաջ եւ նրանից հետո արեւելահայ արձակը երբեք չհասավ այն բարձունքին, որ Բակունցն էր՝ ինքնատիպ, բյուրեղ, գրեթե անառիկ: ... Զանգեզուրի մթին կիրճերից բարձրացավ գրանիտե հասակը Բակունցի: Ինքն էր ու իր ներքին տիեզերքը: ... Բակունցի դեմքում գունատվում են բնորոշումները:...Անակնկալ եկավ Բակունցը, մի բացարձակ ֆենոմեն, որ մեծ գաղտնիքի պես կախվել է հայ գրականության ճակատին»: Հ. Կարապենցը նաեւ ընդհանուր աղերսներ է տեսնում Բակունցի եւ Ու. Ֆոլկների, Է. Հեմինգուեյի, Ալբեր Քամյուի, Ջեյմս Ջոյսի ստեղծած բարձրակարգ արձակի հետ, եւ դա ամենեւին չափազանցված չէ...

❖❖❖

Մայրուղու վերջնամասի աջ կողմում հին օրերի մի ցուցանակ կա՝ Օդանավակայան: Այո, մոտերքում էր Գորիսի երբեմնի աշխույժ առօրյայով ապրող ու գործող օդանավակայանը, որից այսօր ընդամենը բարի հիշողություններ են մնացել:

Մտքիս կիզակետում դարձյալ մեր ժողովրդի պանծալի զավակ Ակսել Բակունցն է, լուսավոր, անհասանելի հանճարը, նա, որի հոգու թարգման գրիչը խոսքարվեստի ինչպիսի՜ նոր որակ, ինչքա՜ն շռայլ, անխամրելի գույներ բերեց գրականություն...

Խորին հարգանքով եմ աչքերիս մեջ առնում Բակունց ծնած այս լեռնաշխարհը...

Վերջին կեռմանի բարձունքից, լեռնագոգ տափարակի վրա, մեկեն բացվում է հիասքանչ քաղաք Գորիսի համայնապատկերը՝ կանոնավոր, ուղիղ փողոցներ, վարչական ու բնակելի շենքեր: Իսկ կանաչավետ պարտեզներով պարուրված առանձնատները բնաշխարհիկ, հայկական ժողովրդական, նաեւ ավանդական եւ արդի ճարտարապետական տարրերի համադրումով զուտ գորիսյան ոճի ինքնատիպ գեղեցկագույն նմուշներ են, որոնք քաղաքին առանձնահատուկ կոլորիտ են հաղորդում: Այնուամենայնիվ, Գորիսի «առանձնաշնորհյալ» դիմագիծ են երկինք միտող կոնաձեւ «ցից» քարաժայռերը՝ քերծերը: Դրանցից փուխրերի ներսում հնում համառ մարդիկ անձավ-կացարաններ են փորել եւ այդ յուրատեսակ քարափոր տներում ապրել սերունդներով...

Բարձունքից զմայլված դիտում եմ քաղաքը, շրջակա լեռներն ու ձորերը: Մտաբերում եմ գորիսյան տեղանունները, սակայն առանց տեղացի օգնական-հուշարարի դժվար է որոշակիորեն զանազանել, թե որն է Լաստի խութը, որը՝ Դրնգանը, Գյունեյ թաղը կամ Գայլաբունի ձորը, Պղնձաքարը, Շորը... Չէ՞ որ դրանց մասին իրենց գրվածքներում բազմիցս հիշատակել են Ակսել Բակունցը («Կյորես», «Բրուտի տղան» եւ այլն) եւ Վահան Բակունցը իր հեղինակած «Մեծ հույզերի սերմնացանը»՝ ավագ եղբորը նվիրված հիշողությունների հիանալի գրքում:

Հասնում եմ Մեղրի-Իրան եւ Արցախ տանող ճանապարհների հանգույց-խաչմերուկը, ավտոմեքենան վարում նվիրական անուններ կրող քաղաքի՝ Դավիթ-Բեկ, Գարեգին Նժդեհ, Անկախության փողոցներով եւ Մաշտոցի 41-ում կայանում

# ՈԳԵՂԵՆ ՕՋԱԽՈՒՄ

իմ փնտրած նշանավոր տան մոտ:

Գրանիտե եռալեզու ցուցանակը ծանուցում է՝ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, ցուցատախտակի վերնամասում գրողի պրոֆիլով պատկերված դիմանկարն է: Տան պատի ոճավորված խորշում Բակունցի բազալտե կիսանդրին է՝ բարեհարմար ագուցված:

Փողոցում ուշադրությունս գրավում է սիզամարգում ամուր ու աներեր կանգնած վիթխարի ընկուզենին՝ բունը դալար լիանաներով ընդելուզված (հետո կիմանամ, որ ծառը պատանի Սանթրի-Ալեքսանդրի տնկածն է՝ դարահասակ կենդանի մասունք-հուշարձան.... Ցանկանք, ուրեմն, որ այն էլի մեկ դար այսպես խշշա կանաչ...):

Կամարաձեւ փայտե դարպասի բաց փեղկով ներս եմ մտնում՝ սալարկված կոկիկ բակ, խնամված, ընդարձակ այգի եւ, իհարկե, գրողի հորենական տունը: Այն, կարելի է ասել մեկուկես հարկանի է՝ լայն պատշգամբով, հնաոճ ցանցապաս դռներով ու լուսամուտներով: Տունը 19-րդ դարի վերջին կառուցել է Ակսել Բակունցի խոհեմ հայրը՝ Ստեփան Թեւոսյան Բակունցը:

Ծանոթանում եմ թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանի, աշխատակցուհիներ՝ Անժելա Միքայելյանի, Անահիտ Հարությունյանի, Լարինա Սարգսյանի հետ:

Ավարտվել է հերթական էքսկուրսիան: Այցելուները մոտենում, երախտիքի անկեղծ խոսքեր են ասում աշխատակիցներին՝ սիրելի գրողի կյանքի ու գործունեության մասին նոր, հարուստ ու հանգամանալի տեղեկություն ստանալու համար: Այցելուներից ճանաչում, ողջունում եմ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արամ Վարդանյանին, որի հայրենի Թալինի նշանավոր Աշնակում («Դու ծանո՞թ ես Աշնակ գյուղին, / Ուր ծիրանն է հասնում ճյուղին...», Գ. Էմին, «Սասունցիների պարը»), մենք ընդհանուր շատ ընկերներ ու բարեկամներ ունենք: Նա տիկնոջ հետ է Երեւանից Գորիս եկել, եւ պարզապես հաճելի է իմանալ, որ նրանք էլ են բակունցագետներ...

Վարդան Սարգսյանն է ինձ առաջնորդում թանգարան: Նրանից տեղեկանում եմ, որ մշակութային այս օջախը 1970թ.-ին բացվել եւ կայացել է տեղական իշխանությունների ջերմագին հոգածության շնորհիվ, իսկ 1976թ.-ից՝ դարձել Երեւանի Ե. Չարենցի անվան արվեստի եւ գրականության թանգարանի մասնաճյուղը: Հետագայում գրողի ծննդյան բարեառիթ հոբելյանների՝ 90 եւ 105-ամյակների կապակցությամբ, այն հիմնովին նորոգվել ու բարեկարգվել է՝ վերափոխվելով հուշահամալիրի: Գովելի է եւ սրտացավ վերաբերմունքը՝ անխաթար պահպանվել են տան բնօրինակ ճակատը եւ, ընդհանրապես, նրա ճարտարապետական կերպը գրեթե այնպես, ինչպես Բակունցի բնակության ժամանակ էր: Բակունցների տունը գրավիչ ու ակնահաճո է նաեւ իր պարզությամբ, ինչը այցելուներին հնարավորություն է ընձեռում լավագույնս պատկերացնելու զանգեզուրյան հայկական օջախի կենդանի կյանքն ու կենցաղը:

Տնօրենը գործիմացորեն, սիրով ու արժանի հպարտությամբ է ներկայացնում թանգարանը: Անցնում ենք բոլոր չորս սրահներով, ծանոթանում հարուստ ու բազմաբովանդակ ցուցանմուշներին: Դրանք տան հնաոճ կահույքը, գրողի անձնական իրերն են, գրքերը, տետրերը ու փաստաթղթերը, ժամանակի պարբերական մամուլում հրապարակված նյութերը՝ գրական եւ մասնագիտական (ճիշտն ասած, թող ինձ ներվի, հոգուս խորքում ափսոսանք եմ զգում, որ մեր արձակի անզուգական Վարպետը, մասնագիտության եւ աշխատանքի բերումով, թանկագին ժամանակ է վատնել բազմաքանակ գյուղատնտեսական թեմաներով հոդվածների, ուղեցույցների ու գրքույկների վրա...):

Գրողի ննջարանում նրա մահճակալն է, հագուստը, աշխատասեղանն ու աթոռը, մայրիկի գործած գունագեղ գորգերից: Հարեւանությամբ նաեւ փոքրիկ խոհանոց կա եւ թոնիր, որտեղ հոգատար, անխոնջ Բաղչագյուլ մայրիկը լավաշ է թխել, հետը մեջը համով բաղարջ ու գաթա...

Հաջորդ սրահի պատին «Ակսել Բակունցի մոր դիմանկարը» յուղաներկ աշխատանքն է, որի հեղինակը մեծն Մարտիրոս Սարյանն է: Կտավից՝ Վարպետի հավերժացրած անթարթ հայացքով նայում է Բաղչագյուլ մայրիկը:

Այստեղ՝ անհրաժեշտ փոքրիկ նախապատմություն.

1935թ.-ի ամռանը, նկարիչ ընկերների հետ Գորիս է գալիս Մ. Սարյանը եւ իր պարտքն է համարում անպայման այցելելու Ակսել Բակունցին:

- Ակսելի հրճվանքին չափ ու սահման չկար, - գրում է Վահան Բակունցը: Նրանք երկարատեւ ուրախ զրուցում են:

- Այստեղ ինչ-որ կարոտ էր առաջացել գույների ու խոսքի մեծ Վարպետների միջեւ, - դիպուկ նկատում է Վ. Բակունցը:

Ե՛վ Վահան Բակունցը, ե՛ւ Մարիամ Ասլամազյանը ականատես են եղել նկարի կերտմանը: Իրենց հուշագրություններում նրանք հաճույքով են պատմում այդ եղելությունը: Վ. Բակունցն իր «Մեծ հույզերի սերմնացանը» գրքում հիշում է, որ Մ. Սարյանը Գորիս էր եկել նկարելու «ինքնատիպ ու գեղեցիկ բնությունը»: Գորիսով հիացած Վարպետին արդեն հասկանալի է դառնում, «թե որտեղի՞ց են Ակսելի սքանչելի սյուժեները... Այդ բոլորը Գորիսի աննման բնությունն է նվիրել նրան»:

Մարիամ Ասլամազյանն էլ «Կյանքիս դավթար»-ում հիշատակում է. «Ակսելը Սարյանին հրավիրեց իր տանն ապրելու եւ ստեղծագործելու: Այս ընթացքում Մարտիրոս Սերգեյիչը նկարեց Ա. Բակունցի մայրիկի դիմանկարը եւ նվիրեց նրան»: Ակսելը երեխայի պես ուրախացել էր նկարի համար: Նա հիացմունքով մորը ասում էր. «Դու գիտե՞ս, թե ո՞վ է նկարել քո դիմանկարը: Մենք բոլորս էլ կհեռանանք այս աշխարհից, իսկ այս նկարը կմնա հավերժ»:

Այստեղ արժե մեջբերել նաեւ Վահան Բակունցի հիշատակած այն դրվագը, թե անոթխած մայրը ինչքան է նեղվել նկարվելիս: Նա հետո գանգատվել է, որ իրեն անշարժ «մին ժամից ավել էդ մարդը նստացրել ա չոր աթոռին, թա պատկերդ քաշում եմ: Հոգիս տյուս եկավ, համութից քիչ էր մնում տափը ճղվեր մեջը մտնեմ: Բա կնիկարմատը էդքան վախտ խալխի տղամարդու երեսին կյեչի՞»:

Երախտագետ Մարիամ Ասլամազյանն էլ է բարի հիշատակ թողել տուն-թանգարանին, ասել է թե՝ բակունցների հյուրընկալ օջախին:

Նկարչուհին, ի սեր անմոռաց ընկերոջ՝ Ակսելի, հետագայում պատկերել է նրան սիրելի մայրիկի հետ՝ Գորիսի երկնամուխ, արեւառ ժայռերի ֆոնին: Հիմա թանգարանին մի առանձնակի շուք ու հմայք է տալիս այս բազմախոսուն հոյակապ յուղաներկ կտավը:

Կանգ ենք առնում ցուցանակի պատին փակցված մի հնօրյա փաստաթղթի առջեւ եւ ուշադիր ընթերցում եմ:Դարձյալ փոքրիկ ծանոթագրություն. Ակսել Բակունցի կենսագրության հայտնի փաստ է, որ 1910թ. մայիսին նա բարձր առաջադիմությամբ ավարտում է Գորիսի հնգամյա ծխական դպրոցը: Ճակատագրորեն բախտորոշ է լինում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի առաջադեմ սան, ազգակից Երեմիա Բակունցի խորհուրդը Ալեքսանդրին՝ ուսումը շարունակելու հեղինակավոր նույն կրթօջախում՝ ճեմարանում: Գործը հաջող ընթացք է ունենում. մի մեծ խումբ համախոհ, մտավոր գործիչներ «ԽՈՆԱՐՀ ԽՆԴԻՐ»-ով եւ «որդիական վստահությամբ» դիմում են հղում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մաթեոս Բ-ին՝ «Ձեր հայրական խնամքը վայելող ճեմարանի գիշերօթիկ սաների շարքում ընդունելու տեղույս ծխական դպրոցը ամենագովելի ու առանձնայատուկ ընդունակութեամբ աւարտած Ալեքսանդր Ստեփանի Թեւոսեան Բակունցին»: «Առ որ մնամք Ձերդ Սրբազան Օծութեան Սրբազնագոյն աջը համբուրող ամենախոնարհ որդիք: 1910թ. 10-ն օգոստոսի, քաղ. Գորիս»:

Խնդրագրի վերջում հերթով ստորագրել են 152 մարդ: Այսպիսով, բարի կամքի տեր արժանապատիվ այդ մարդիկ, տաղանդավոր, օժտված պատանու առջեւ բացեցին լույսի ու լուսավորության նախադուռը՝ ժամանակի հետ գիտության դժվարավերելք, բարձրագնա աստիճաններով ելնելու ... հայ արձակի գագաթը...

Դրսում, արեւոտ պատին հենած ցանցավանդակներում, զանազան թռչուններ են պահվում: Դրանցից ամենաշքեղն, իհարկե, փասիանն է՝ միրհավը՝ իբրեւ կենդանի խորհրդանիշ Ակսել Բակունցի անմահ «Միրհավի»: Խորհրդանշական է եւ այն իրողությունը, որ տուն-թանգարանին կից գործող գրական ակումբը նույնպես «Միրհավ» անունն ունի: Այստեղ հանրության համար պարբերաբար կազմակերպվում են գրական-երաժշտական միջոցառումներ, ընթերցումներ, գրքերի շնորհանդեսներ, ավելի խորությամբ է ուսումնասիրվում Բակունցի գրական ժառանգությունը, անդրադարձումներ կատարվում Հայաստանի գրական եւ մշակութային կյանքին:

Իջնում ենք ներքնահարկ: Այստեղ Բակունցի ընտանիքի մառանն է, հացատունը եւ խոհանոցը՝ մեծ թոնիրով, առաստաղից չորս լարով կախված՝ դարս-դարս լավաշի տախտակամածով, հնաոճ կոմոդով, մեծ ու փոքր կճուճներով, կուժ ու կուլայով, պղնձե, փայտյա եւ խեցեղեն կենցաղային իրերով: Այցելել եմ նաեւ Վահան Տերյանի եւ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան դարձած հայրական օջախները: Ճշմարիտ է՝ բոլորն էլ հայկական-հայաշունչ են, սակայն առաջինում Ջավախքին, մյուսում՝ Լոռուն, իսկ այստեղ Զանգեզուրին բնորոշ իրերն ու կենցաղավարությունն են՝ նկատելի զանազանություններով: Եվ դա բնական է. չէ՞ որ Պատմահայր Խորենացու համար Հայաստանի ամեն երկրամաս մի ... աշխա՞րհ էր ...

Հուշահամալիրի ուշագրավ մաս են բազալտյա ժանեկազարդ խաչքար-շատրվանը՝ ցայտաղբյուրով եւ ծառաբների վրա արված քանդակները: Հատկանշական է, որ ժամանակին Ակսել Բակունցի ձեռքով տնկված թթենին եւ երկու ընկուզենին, մոտ 80-90 տարի մարդկանց առատ պտուղներ շռայլելուց հետո, երբ ծերացան ու չորացան, գորիսեցի շնորհաշատ քանդակագործ Ժիրայր Մարտիրոսյանը դրանց հաստաբուն բնափայտը կերպավորեց իբրեւ բակունցյան գրական հերոսներ՝ Սոնա («Միրհավ»), Արթին պապ («Նամակ ռուսաց թագավորին») եւ գրողի մայրիկին՝ զանգեզուրյան գլխակապով:

Քայլում ենք այգու բարձր ծառերի եւ վարդենիների միջով: Ոտքերս գետնին եմ դնում մի տեսակ երկյուղածորեն, ավելի հուզումնալի... ախր ուրիշ խորհուրդ ունի այս այգին, ուր մեծն Բակունցի հեռավոր ոտնահետքերն են...Այգին փթթում է կանաչ շնչով ու արեւահամ պտուղներ տալիս: Թանգարանի տնօրենին խնդրում եմ ցույց տալ բաղասանձի այն ծառը, որի զովասուն սաղարթների ստվերում փռված կարպետների ու գորգերի վրա հանգստացել է Բակունցը, պարապել ժամերով ու գրել, հաճախ էլ՝ խնջույքներ արել: Ահավասիկ հիշատակման արժանի մի քանի պերճախոս տողեր Մ. Ասլամազյանի «Կյանքիս դավթար»-ից.

«Մի անգամ Գիշոկը (Բակունցի փոքր եղբայրը-Ս. Մ.) եկավ մեզ մոտ սովորականից շուտ: Ակսելն էր ասել, որ թողնենք ամեն ինչ եւ շտապենք նրա մոտ: Բակ մտնելով բոլորս մնացինք զարմացած. չորս կողմը հյուրեր: Սեղանի գլխամասում Ակսելն էր. նա թամադա էր: Մոտեցավ մեզ եւ ասաց. «Ես կատարում եմ Շիրվանի պատգամը: Նա ինձ պարտավորեցրել է, որ իր մահվան օրը մեծ սեղան գցեմ, հրավիրեմ նրանց, ում ես կցանկանամ, ինքս լինեմ թամադա ու քեֆ անենք եւ հիշենք նրան առանց տխուր խոսքերի՝ որպես ընկերոջ եւ գրող Ալեքսանդր Շիրվանզադեի: Այսօր առավոտյան ես հեռագիր ստացա եւ հիմա կատարում եմ հանգուցյալի կամքը»: Այդ երեկո Ակսելը ավելի սրամիտ ու նրբախոս էր, երկար պատմում էր իր ու Շիրվանի հանդիպումների եւ արկածների մասին»:

Վ. Սարգսյանն ասաց, որ, ցավոք սրտի, այլեւս չկա այդ «պատմական» տանձենին, սակայն «մի հուսադրող փաստ. նախկին ծառի դեռեւս կենսունակ արմատից ահա այս դալար շիվն է աճում եւ մենք հատուկ խնամք կտանենք, որպեսզի աճի, կրկին մեծ տանձենի դառնա»: Ջեռնահաս տնօրենը տնկարան է հիմնել, որով շարունակաբար կազնվացնի, կերիտասարդացնի այս նշանավոր այգին: (Ես էլ, ի դեպ, խոստացա Աշտարակի իմ այգուց այստեղ հասցնել արտասովոր խոշոր պտուղներ տվող ընկուզենու տունկ, որի «հայրը», ասում են, սերում է Հնդկաստանի նախկին վարչապետ Ինդիրա Գանդիի նստավայրի այգուց...):

Արեւը դեպի մայրամուտ է թեքվում: Ես տուն-թանգարանին եմ հանձնում բերածս նկարը: Հաճելի անակնկալ կար. պարզվեց Վարդան Սարգսյանը արձակագիր է եւ նա ջերմ ընծայագրով ինձ նվիրեց վերջերս Ստեփանակերտում լույս տեսած իր «Երկաթե թիթեռնիկների մեղեդին» պատմվածքների գիրքը:

Այգու տաղավարում եղավ հյուրասիրություն: Թարմ լավաշ, ընկույզ ու ծաղկաբույր մեղր, մրգեր... Հյութեղ խնձորների «հեղինակն» էլ է Բակունցը: 1920-ականների կեսին գյուղատնտես Ալեքսանդր Բակունցի ներմուծած ծառերի «ժառանգներից են», որոնք պատվաստի եղանակով վաղուց ի վեր տարածվել են Գորիսում եւ շրջակայքում:

Թեյ են մատուցում Բակունցի ընտանիքի մեծ ինքնաեռից: Բուրավետ է, քանզի Գուսան Աշոտի գովերգած «ծաղկավառ Զանգեզուրի հազար տեսակ վարդերից» ու լեռնային թեյախոտերից է «առել սնունդ»:

Ես շնորհակալություն եմ հայտնում եւ հրաժեշտ եմ տալիս մեծն Ակսել Բակունցի հիշատակը վառ պահող նվիրյալ աշխատակազմին: Հրաժեշտ եմ տալիս եւ Ակսել Բակունցի նորօրյա ոգեղեն, հայաշունչ օջախին ու բռնում վերադարձի ճանապարհը:

Քաղաքի կենտրոնում Բակունցի տպավորիչ հուշարձանն է՝ բաց գիրքը ձեռքին, քարեղեն անքթիթ հայացքը հարազատ ծննդավայրին: Գիշեր ու զօր նա իր շողշողուն Գորիսի բարգավաճումն է լռին տեսնում, քաղաք, որին երախտավոր զավակը յուօրինակ գրական հուշարձան նվիրեց՝ անկրկնելի «Կյորես»-ը:

# Անփարատ կորուստ

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դժբախտաբար, մենք հնուց սնցի, ավելի քան երկու հազար տարի, փոքր ածու ենք եւ զորությամբ տկար, իսկ մեր անհատականություններն էլ, որոնք ազգ եւ ժողովուրդ են պահում եւ պատիվ են բերում ժողովրդին, այսօր թվով այնքան քիչ են, որ դեղին հուսահատություն է իջնում վրադ: Այդ նրանց ուսերի վրա է պահվում մեր մշակույթի եւ գրականության, ասել է, թե մեր ազգային գիտակցության բարձր առաստաղը: Եվ երբ նրանցից մեկնումեկը հեռանում է կյանքից, իր տեղը մնում է անլցելի մի դատարկություն եւ իր հեռացումը դառնում է անփարատ կորուստ:

Մարտի 3-ին Բեյրութում կյանքից հեռացավ հանրային ու մշակութային հայտնի ու ճանաչված գործիչ Հարություն Նագուլյանը, որն ինձ համար ճիշտ այդպիսի մի եզակի անհատականություն էր: Մասնագիտությամբ եւ աշխատանքով նա բժիշկ էր, էությամբ, նկարագրով ու խառնվածքով՝ արվեստագետ: Մարդը ծնվել էր արվեստագետ լինելու ավելի ճիշտ՝ արվեստագետ էր ծնվել, բայց կյանքի հանգամանքների թելադրանքով ու պարտադրանքով դարձել էր բժիշկ: Բժշկությունը՝ բժշկություն, Նագուլյանը իրականում բանաստեղծ էր, արվեստաբան եւ նկարիչ: Պատանի Հարությունը բանաստեղծությամբ մտավ հայ գրականության ասպարեզը եւ այնտեղ իր պատվավոր ներկայությամբ մնաց մինչեւ կյանքի վերջը:

1962 թվականին Հարությունը սփյուռքահայ մի խումբ պատանիների հետ եկավ Հայաստան ուսանելու Երեւանի պետական բժշկական ինստիտուտում: Երեւանում Հարություն Նագուլյանը ապրեց ավելի քան ութ տարի, եւ այդ տարիները ապրեց բուռն ու հեւքոտ կյանքով: Հոգով ու սրտով արվեստին սիրահարված պատանի Հարությունը շատ շուտով հայտնվեց երեւանյան բոհեմի մեջ, եղավ Լեւոն Ներսիսյանի եւ ընտիր նկարիչների ու արվեստագետների՝ Մինասի, Արտո Չաքմաքչյանի, Օննիկ Մինասյանի, Ռոբերտ Էլիբեկյանի, ուրիշների առօրյա ընկերն ու մտերիմ բարեկամը: Մի երկու տարի չանցած երիտասարդ Հարությունը արդեն անվանի գրողների, բանաստեղծների ու արվեստագետների կրտսեր ընկերն ու բարեկամն էր, նրանց հետ սեղան նստեց ու վեր կացավ: Այդ կյանքն ու միջավայրը Հարությունի համար գեղարվեստի իսկական ակադեմիա եւ համալսարան եղան: Այդ ութ տարում նա խորապես ներշնչվեց Հայաստանի հողով, իր մեջ հայաստանյան ավիշ եւ կենսանյութ գոյացավ, հայաստանյան արյուն վազեց իր երակներում: Հարութը, մեր սիրելի Նագուլը, ինչպես նրան անվանում էին մտերիմ ընկերները, այլեւս ուրիշ մարդ էր:

1970 թվականին Հարություն Նագուլյանը ավարտեց բժշկական ինստիտուտը եւ մեկնեց Լոնդոն՝ այնտեղ իր բժշկական կրթությունը շարունակելու:

Լոնդոնից երիտասարդ արվեստաբան Հարությունը մի քանի հոդված գրեց եւ հրատարակեց հանիրավի չգնահատված Երվանդ Քոչարի, Հարություն Կալենցի, Սարգիս Փարաջանյանի մասին: Եվ սովետական գաղափարական անողոք մեքենան անմիջապես շուռ եկավ լոնդոնյան ուսանողի դեմ: «Հայրենիքի ձայն» եւ մյուս լրագրերը իրենց գաղափարական ծանր հրետանիով եւ թնդանոթներով կրակի տակ առան Հարություն Նագուլյանին: Տարիներ անցան, եւ կյանքն ու ժամանակը ցույց տվեցին, որ երիտասարդ արվեստաբանը ամենեւին էլ երկրի թշնամին չէր եւ ճիշտ էր ու արդարացի: Այսօր Քոչարը, Կալենցը, Փարաջանյանը արժանի թանգարաններ ունեն, եւ դրանք շատ սիրված ու հայտնի թանգարաններ են:

Հարութը Լոնդոնից վերադարձավ Բեյրութ, եւ շատ շուտով դարձավ ճանաչված ու փնտրված բժիշկ, զբաղվեց իր մասնագիտական գործով, բայց էությամբ, նկարագրով ու խառնվածքով մնաց արվեստագետ, ոտից գլուխ արտիստիկ անձնավորություն:

Հարութի տունը Բեյրութում արվեստի ու գրականության իսկական սալոն էր, սալոն ֆրանսիական իմաստով: Իր դռնից մտնում էիր, այլեւս ուրիշ հող էր, դու այլեւս Հայաստանում էիր: Հայ նկարիչների գործերի ընտիր հավաքածու ուներ, որ վկայում էր ոչ միայն արվեստագետի եւ արվեստաբանի իր բարձր ճաշակը, այլեւ իր սերը Հայաստանի, հայության եւ հայ արվեստի հանդեպ: Իր ժամանակակից ընտիր նկարիչների ընկերն էր, եւ շատերը սիրով նվիրել էին նրան իրենց լավագույն կտավները: Հարութը փաստորեն իրեն շրջապատել էր Հայաստանով, իր տան պատերը շնչում էին Հայաստանի օդով: Նա հեռվից հեռու միշտ ուշադիր հետեւում էր Հայաստանի գրական-մշակութային կյանքին, ապրում էր այդ կյանքի իրողություններով, ըմբոստ հոդվածներ էր գրում, ամեն կերպ օգնում եւ սատարում էր Բեյրութ այցելած հայ նկարիչներին (ես սա չեմ մանրամասնելու):



Հայաստանից Բեյրութ հասած ամեն մի գրող կամ արվեստագետ անպայման հյուրընկալվում էր Հարութի տանը: Հարութը մի տեսակ դարձել էր Հայաստանի մշակութային դեսպանը Բեյրութում: Ինքն ու իր ազնվական տիկինը՝ մեր բոլորի սիրելի Էմման, առանձնակի սիրով ու բավականությամբ էին իրենց տանը ընդունում Հայաստանից եկած մարդկանց: Հարութը Հայաստանի պակաս ուներ, շնչահեղձ էր լինում առանց Հայաստանի, իսկ Հայաստանից եկվորները իրենց հետ Հայաստան էին բերում, երեւանյան կյանքի մաս էին բերում, եւ Հարութը փոխվում էր ողջ էությամբ:

Իբրեւ արվեստագետ, իբրեւ գրող, իբրեւ հարուստ ներաշխարհի տեր անհատ Հարութը ասելիք ուներ, որ չէր սպառվում: Նա լի էր ասելիքով եւ ձգտում էր կատարյալ ինքնարտահայտության: Բանաստեղծություն էր գրում, որովհետեւ բանաստեղծ էր: Իր բանաստեղծությունները ցրված էին մամուլի էջերում:

Նկարում էր, որովհետեւ նկարիչ էր եւ լավ նկարիչ էր, ընտիր նկարիչ: Նկարչությամբ էլ ասելիք ուներ եւ ասում էր, իր հարուստ, գեղեցիկ, գունավառ ներաշխարհն էր փոխադրում կտավներին:

Շատ էր սիրում հայկական գորգերը, ողջ կյանքում ուսումնասիրել էր գորգարվեստը եւ մանավանդ հայկական գորգարվեստը: Տարիներ շարունակ ուշագրավ գրառումներ էր արել, բավական ծավալով, մոտ 150 էջ, հետաքրքրական շարադրանք ուներ: Համոզում էի, որ նստի եւ ամբողջացնի, պատրաստի գիրք էր:

Միշտ կարող էր իր նկարների ընտիր պատկերագիրքը հրատարակել, բայց դա էլ չարեց... Ըստ երեւույթին, տարիների հետ մարդու մեջ եսասիրական մղումներն ու ձգտումները աստիճանաբար մարում են...

Վերջին տարիներին բանաստեղծության երեք գիրք հրատարակեց՝ «Requiem» (2017), «Ճերմակ պատուհան» եւ «Սաղմոսներ» (երկուսն էլ՝ 2020): Մեր կյանքի ժամանակը, մեր իրականության ժամանակը, ցավոք, գրքի ու բանաստեղծության ժամանակ չէր, այլապես իր պոետական խոսքը՝ հայեցի, հախուռն, կրքոտ, ուժական, պետք է ունենար իր արժանի արձագանքը: Անտիպ մնացին իր բազմաթիվ գրությունները, մամուլի էջերում ցրված բանաստեղծությունները, «Վան Գոգ» դրամատիկական պոեմը, որից միայն հատվածներ են տպագրվել զանազան հանդեսներում:

Հարություն Նագուլյանը հանրային կյանքի մարդ էր: Երկար տարիներ Հայկազյան համալսարանի հոգեբարձուների խորհրդի անդամ էր եւ իր կարեւոր դերակատարությունն ուներ համալսարանի կյանքում, մանավանդ համալսարանի կրթական-մշակութային առօրյան կազմակերպելու, մշակութային ծրագրերը իրականացնելու գործում:

Հանրային-համայնքային հավաքներին եւ ձեռնարկներին իր մասնակցությունն ու ներկայությունը միշտ պատվավոր էր ու իմաստավոր:

Անկարելի է չխոսել իր մարդկային նկարագրի մասին: Հարութը նուրբ ճաշակ եւ արվեստի բարձր զգացողություն ունեցող մարդ էր, նրբակիրթ խոսքի տեր, բոլորի հետ՝ միշտ պատշաճությամբ եւ նրբավար: Իր նկարագրի, իր պահվածքի, մարդկանց հետ հարաբերվելու իր կերպի մեջ զարմանալի արիստոկրատիզմ կար, եւ ինքն էլ եղավ ու մնաց ոգու արիստոկրատ, առանց ցուցանքի ու ցուցադրանքի, ապրեց ազնվականորեն համեստ, պարզ եւ միշտ ջանաց լինել ու մնալ աննկատ:

Հարությունը ոտից գլուխ շաղախված էր հումորով, իր հումորը յուրօրինակ էր՝ մեղմաձայն ու մեղմախոս: Այլոց թերությունները երբեք չտեսավ, նուրբ հումորով սիրեց իր ընկերների մանր թուլությունները, գրեթե աննշմար հեգնանքով նայեց մերժելի մարդկանց կենսակերպին ու կյանքի մերժելի կողմերին:

Իր հեգնանքի հիմնական թիրախը ինքն էր, ես չգիտեմ մեկ այլ մարդու, որ ինքն իր մասին խոսեր միշտ անթաքույց հումորով ու հեգնանքով:



*Հարություն Նագուլյանը՝ Երեւանի պետական բժշկական ինստիտուտի շրջանավարտ, 1970 թ. հունիս*

Շատ, շատ էր սիրում իր ընկերներին, սիրում էր իրեն շրջապատել մտերիմ մարդկանցով, իր սիրելի ընկերներով: Սիրով ու գուրգուրանքով էր վերաբերվում իր մտերիմներին ու բարեկամներին, սիրով ու նրբավարությամբ հոգ էր տանում նրանց համար, անում էր ավելին, քան կանեին արյունակիցն ու հարազատը: Միայն Սեդա Կանաչյանի հետ Էմմայի եւ Հարությունի բարեկամությունը այնքան շատ բան է ասում նրանց ճանաչողներին: Երբ Հայաստան, Երեւան էր գալիս, այստեղ էլ տարված էր մերձավորների հոգսերով՝ մեկի ուսման վարձը, մյուսի բժշկության վճարը, երրորդի բնակարանի վարձը, չորրորդի...

Նա իր հրավերքների ամեն օրը ընկերների ու բարեկամների համար դարձնում էր տոնական օր, դարձնում էր բարձր տրամադրության, հումորի, ուրախության եւ ցնծության օր: Դա իր նկարագրի, իր կերպարի անկապտելի հատկությունն էր:

Ժպտադեմ, կենսուրախ, լույս ճառագող իր նկարագրի ետեւում միշտ լրջախոհ, ես կասեի՝ ծանրախոհ ու լրջակյաց մարդն էր, խորհող ու ներհուն անհատը, ինչը ինքը խնամքով թաքցնում էր: Նա շատ խորունկ հայ էր, ինձ համար՝ իսկական հայ մարդու տիպար:

Հարութը կարդացած եւ կարդացող մարդ էր: Գիրք կարդացող եւ չկարդացող մարդկանց միջեւ անդունդ կա, ահռելի պարապություն: Ինքը իհարկե, ինտելեկտուալ մարդ էր, թեեւ մեզ սիրով ձեռք էր առնում՝ այս հայաստանցի ինտելեկտուալները...

Ուղղակի ապրում-այրվում էր մեր պատմությամբ, մեր ճակատագրով, մեր ժողովրդի բախտով: Մենք երբեմն շատ երկար խոսում-զրուցում էինք, եւ ես հետո զարմանքով ինքս ինձ հարցնում էի՝ սա նո՞ւյն մարդն է, իմ գիտցած ամեն օրվա նույն զվարթախոս-զվարթախոհ Հարո՞ւթը...

Ինչ ծանր տարավ Բեյրութին պատահած աղետը, ուղղակի կոտրվեց: Հայաստանին պատահածի մասին էլ չեմ ասում, ժամերով խոսում էինք, ինքը ուղղակի անճանաչելի էր, ջախջախված, ճնշված, թեւաթափ եղած, հուսահատ...

Հայաստանի հանդեպ իր սերը ուրիշ էր, եզակի, աննման, Հարութին պատշաճող, Հարութին վայել...

Ցավով, ափսոսանքով եւ ավաղանքով եմ գրում ես այս տողերը. մի վայրկյանում ամեն ինչ հուշ դարձավ եւ անդառնալի անցյալ: Եվ միայն կորուստի ցավը մնաց: Ուրեմն ներիր եւ արտոնիր իմ կցկտուր, վշտախառն հրաժեշտի այս խոսքը եւ իմ եղբայրական արցունքները քո վերջին ճանապարհին, սիրելի Հարութ, սիրելի ընկեր, սիրելի Նագուլ...

**4 մարտի 2021**

Սիրելի Հարութ,

Մեծ նկարիչ ու բժիշկ, համեստության եւ պարկեշտության տիպար, գեղագետ, էներգիայի անսպառ աղբյուր, գիտելիքի շտեմարան, վերլուծության ինքնատիպ վարպետ, նկարիչ, նորարար:

Կեցվածքդ՝ զուսպ, միշտ համեստ, աշխարհայացքդ՝ անսահման լայն, ազգային, արդիական: Խոսքդ՝ համոզիչ, արդար, անբեկանելի, գույնդ ու ծավալդ տեղին՝ ներդաշնակ, գաղափարներդ՝ բազմակողմ ու ծանրակշիռ:



Մկրտիչ Մազմանյանի հետ

Հարութ, սիրելիս, դու նուրբ էիր, բարի, միշտ կարեկից ու հավասարիմ: Վսեմ անձնավորություն էիր եւ բացառիկ անհատականություն եւ քեզ մեծապես սիրում էր թե՛ լիբանանահայ, եւ թե՛ արաբ հասարակությունը:

Վստահ եմ, որ քո լավ եւ մեծ ընկերները՝ Մինաս Ավետիսյանը, Արա Շիրազն ու Խարազը, Վրույրն ու Էլիբեկը, Երվանդ Տեր-Խաչատրյանը, Զավեն Խտշյանն ու Պոլ Կիրակոսյանը, Մովսեսը նույն խորունկ վիշտ ու կորուստը կապրեին ու ապրում են:

Դու ինձ համար մի ահռելի երեւույթ էիր: Եվ իմ սրտի խորքում կմնաս իբրեւ տիպար եւ չափանիշ, քանի ես կամ եւ շնչում եմ:

Թող քո հոգու լույսը առհավետ լուսավորի մեզ երկնքի անհուն հեռուներից:

Քո անկեղծ եւ մշտապես ընկեր՝

**ՄԿՐՏԻՉ ՄԱԶՄԱՆՅԱՆ**
**Քանդակագործ,**
**Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր**

# Մարդ մը, որ...

Որոշ հարցի առնչութեամբ, ընդհանրացած է մեր ժողովուրդին մէջ ըսել. «Ո՛րքան մարդիկ, այնքա՛ն կարծիք» խօսքը: Սակայն անձի մը նկատմամբ կարծիք յայտնել, կը նշանակէ նկատի ունենալ երկու եզրեր. մարդը՝ իր նկարագիրով, եւ մարդը՝ իրագործումներով:

Ծանօթ չէի՛ Տօքթ. Յարութիւն Նագուլեանի անձին, բայց անունին հանդիպած էի «Արծիւ»ի էջերուն, ուր կ՚աշխատակցէի նաեւ ես: Զուշացայ այն պատեհ առիթը, երբ գրականագէտ Երուանդ Տէր Խաչատուրեանի միջոցով, իրար ձեռք սեղմեցինք: Առաջին տպաւորութիւնը ունեցած էի, երբ իրմէ լոյս տեսած գրութիւնները ուրուագծած էին անձ մը, եւ այդ տողերը մէկական պատուհաններ, կ՚արտացոլէին նկարագիր մը: Թէեւ յաճախակի չէի՛ն հանդիպումները, սակայն մեր ունեցած զրոյցներէն կրցած էի բնորոշել ա՛յն նկարագիրը, որ հարազատօրէն կը շնչէր իր գործերու մէջ:

Անշուշտ բացառիկ երեւոյթ է, նկարագիր եւ արուեստի իրագործում մէկտեղել նո՛յն անձին մէջ հաւասարապէս, որով՝ կրնան այդ երկու եզրերը հակադիր ըլլալ իրարու, առանց դոյզն կասկած ներշնչելու անձին հետ փոխյարաբերութեան ընթացքին: Բայց Նագուլը, այն բացառիկ անձերէն էր, որ «մա՛րդ» հասկացողութեան լոյսին տակ կը միանային այն երկու եզրերը, նկարագիրն ու իրագործումները:

Իմ մէջ հաստատուցեա՛ւ այդ կարծիքը, երբ ծանօթացայ իր գրական վերջին երկու հատորներուն, որոնց մէջ ներկայ էր ինք, իր յստակ եւ փայլուն մտածողութեամբ եւ զգացումներու ներքին զօրութեան արտայայտութեամբ, բառերուն ընդմէջէն:

Երբ անոր մահուան լուրը հասաւ ականջիս, շփոթի՛ մատնուեցայ, որովհետեւ՝ ... գիտէ՛ք, դժուար է հաշտուիլ այն գաղափարին հետ, որ «իրա՛ւ մարդ» մը հեռանայ այս կեանքէն, ճակատագրի աննշան մէկ այցելութեամբ:

Ան պիտի ապրի բոլո՜ր ժամանակներու մէջ, այնքան ատեն, որ իբրեւ շունչ կ՚ապրի մեր յիշողութեան մէջ:

**ԼԵՎՈՆ ԱՐՏԱԶԵԱՆ**
**5 Մարտ 2021**

Հեռախոսազանգը հայտնեց հերթական գույժը. Ոչ եւս է Հարություն Նագուլյանը: Հոգեկան ինչ կերտվածքի տեր պետք է լինի այն մարդը, որն առաջին պահի կարողանա համաստեղել Հարություն Նագուլյան եւ վախճան... Բայց ծնունդն ու մահը, ինչպես ասում են՝ Աստծո գործն է:

Անհավատալի, անընդունելի, անհամաստեղելի մի բան կա այս լուրի մեջ, բայց որքան էլ համարժեք բառեր փնտրես. Հարությունը չկա... հաշվիր եւ վերջ:

Չկա ժպտերես ու հումորով լի Նագուլը, կոչումով ու կրթությամբ բժիշկը, անաչառ վերլուծողն ու գնահատողը: Անսեթեւեթ հայրենասերը, արվեստաբանը, արվեստագետը ու ճշմարտախոսը:

Հարությունին հաջողվեց վեր մնալ հատվածականության վարակից եւ թե՛ Սփյուռքում, թե՛ Հայրենիքում ունենալ իր՝ Նագուլյանական պատվանդանը:

Ցավակցում եմ նրանց՝ ով ճանաչել է, վայելել նրա առինքնող ներկայությունը, իսկ սիրելի Էմային հոգեկան ուժ ու կամք դիմակայելու վշտին:

**ՌՈՄԵՆ ԿՈԶՄՈՅԱՆ**
**10.03.2021**

Մարտի 3-ին Բեյրութում իր մահկանացուն կնքեց մեր ազնիվ բարեկամը՝ բժիշկ, նկարիչ, բանաստեղծ, Հայաստանում ուսանած սփյուռքահայ ուսանողների առաջին սերնդի ներկայացուցիչ Հարություն Նագուլյանը: Թագաժահրը իր ամենակուլ երախն առավ հայ մշակույթով ապրող եւ ապրեցնող հայրենասեր, կենսախինդ եւ յուրահատուկ հումորով լի մարդուն, որին հետայսու հանդիպելու ենք մեր հուշերում, իր գործերի մեջ, մեր մտապատկերներում: Մեր խորազգաց ցավակցությունները հայտնելով իր ազնվագույն տիկնոջը՝ Տիկին Էմմային, միաժամանակ հայցում ենք Ամենակալ Տիրոջը իր երկնային լույսերի մեջ բնակեցնի մեր սիրելի ընկերոջ հոգին եւ մխիթարություն պարգեւի իր բոլոր հարազատներին:

**ԵՐՎԱՆԴ ԵՐԿԱՆՅԱՆ**
**Կոմպոզիտոր,**
**Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր**

# Կինը եւ խորհրդային Երեւանի տնտեսությունը

Այս տարի լրանում է Երեւան քաղաքի պատմության թանգարանի հիմնադրման 90-ամյակը, եւ մինչեւ տարեվերջ թանգարանում անցկացվելիք բոլոր միջոցառումները նվիրվելու են թանգարանի գործունեության հոբելյանին:

Երեւանի պատմության թանգարանի այս տարվա ցուցահանդեսների ծրագրում առանձին տեղ է հատկացված մարտի 8-ին՝ կանանց միջազգային օրվան. ցուցահանդեսն անցկացվում է «Կինը եւ խորհրդային Երեւանի տնտեսությունը» խորագրով:



Երեւանի տնտեսության մեջ նշված ժամանակաշրջանում անփոխարինելի դեր են ունեցել կանայք, ուստի այս ցուցահանդեսում ներկայացված են այն ցուցանմուշները, որոնք պատրաստվել են նրանց կողմից:

«Քանի որ մենք խորհրդային շրջանի արտադրանքների հարուստ հավաքածու ունեինք, հենց տարեսկզբից որոշվեց, որ այն ներկայացնենք հանրությանը: Հատկապես, որ այսօրվա երիտասարդությունն այնքան էլ ծանոթ չէ խորհրդային Երեւանի տնտեսությանը եւ դրանում կնոջ դերին»,- ասաց թանգարանի տնօրեն **Արմինե Սարգսյանը**: Զրուցակիցս իր խոսքում նշեց, որ միջոցառումների շարքում կարեւոր տեղ է հատկացված զոհված զինվորների հիշատակը հավերժացնող միջոցառումներին, որոնցից մի քանիսն արդեն անց են կացվել:

Ցուցահանդեսում ներկայացված են 450-ից ավելի ցուցանմուշներ, որոնք, թանգարանի տնօրենի խոսքով, նվիրել են հենց արտադրողները:

Թանգարանում ցուցադրված են բազմաձեւ կոշիկներ, հագուստներ, մետաքսե շարֆեր, ծխախոտ, գորգեր, սպասք ու բազմաթիվ այլ իրեր, որոնք տարբեր արտադրամասերում պատրաստվել են կանանց ձեռքերով:

«Ներկայացված են կոշիկի «Մասիս», կարի «Գառնի», «Հայգորգ» արտադրական միավորումների արտադրատեսակներից, ինչպես նաեւ Երեւանի ժամացույցների, պահածոների, հուշանվերների, հախճապակիների գործարանների արտադրատեսակներից»,- ներկայացրեց թանգարանի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող **Արմինե Կորեկյանը**:

Այս ցուցադրությանը զուգահեռ անցկացվում է նաեւ Մոսկվայի նկարիչների միության անդամ, Ֆիզմաթ դպրոցի գրադարանավարուհի **Օլգա Հակոբյանի**՝ «Հեղինակային զարդերը» խորագրով ցուցահանդեսը, որը ներկայացնում է **անկարս ֆրիվոլիտե** ոճով ստեղծագործող հեղինակի հեղինակային հավաքածուն:

«Արդեն 20 տարի է՝ տարբեր ցուցահանդեսներ եմ անում: Երեւանի պատմության թանգարանում արդեն չորրորդ անգամն է: Սկզբում, երբ այս ցուցահանդեսի հրավերը ստացա, այնքան էլ չէի ուզում մասնակցել, քանի որ նոր էի եկել Մոսկվայի ցուցահանդեսից եւ հոգնած էի: Բայց երբ տնօրենն ասաց, որ հրավիրատոմսերը բաժանելու են զոհված զինվորների մայրերին եւ քույրերին, արդեն նույն րոպեին համաձայնեցի»,- ասաց **Օլգա Հակոբյանը**:

Իր աշխատանքները տիկին Օլգան չի վաճառում եւ հազվադեպ է նվիրում, ասում է՝ եթե սկսեմ վաճառել եւ անընդհատ նվիրել, ցուցադրությունների համար ոչինչ չի մնա:

Երեւանի պատմության թանգարանում ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ ապրիլի 7-ը:

**ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ**
**ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետ**
**Լրագրության բաժին 3-րդ կուրս**

# Դիրքերը այսօր էլ ամուր են

Առաջնագծում ամեն դիրքը մի պատմություն է, մի նվաճում եւ մի հաղթանակ:

Հրամանատարը մեծ ոգեւորությամբ եւ հպարտությամբ է խոսում զինվորների մասին...

«Կարեւոր ու պակաս կարեւոր դիրքեր չեն լինում, դիրքը դիրք է ու թեկուզ կյանքի գնով պետք է պահել, որովհետեւ ամեն մի դիրք ապրելու տենչով է դրվում: Մի բարձունքը նվաճում է հազար բարձունքի՝ բարձրում մնալու համար. Ամեն զոհողության պետք է պատրաստ լինենք. բարձունքն իսկապես անգին է»,- ասում է N զորամասի հրամանատարը:

Ամեն անգամ դիրք բարձրանալիս հրամանատարը լրացուցիչ անգամ հրահանգավորում է, շրջում խրամատներով, դիտակետում հսկող զինվորին ցուցումներ տալիս, հորդորում զգոն լինել եւ ոչ մի դեպքում չտրվել հակառակորդի սադրանքներին:

«Զինվորները ավելի զգոն են, հերթապահությունները ավելի աչալուրջ են տանում՝ մինչեւ խորքը դիտարկվում է թշնամու ամեն մի շարժը»,- իր հերթին նշում է հրամանատարի տեղակալը:

Փոխգնդապետը վստահեցնում է՝ առանձնահատուկ կարեւոր են անձնակազմի ու հրամանատարի անկեղծ շփումները:

Կարեւոր է, որ զորքն իսկապես ճանաչի իր հրամանատարին, զորքն ու հրամանատարը մեկ գաղափարի շուրջ պետք է համախմբված լինեն, եւ հաճախ միմյանց հանդեպ այդ հավատն է լինում վճռորոշը:

Այո, մարտերը թեժ են եղել, բայց զինվորները մինչեւ վերջ պայքարել են...

Այս պահին հրադադարի ռեժիմը պահպանվում է, բայց մի փոքր խախտման դեպքում հայկական կողմը պատրաստ է տալ համարժեք պատասխան:

Մեր զինվորները իսկական հերոսներ են...

**ՕՍԻՊՅԱՆ ԼԱՈՒՐԱ**
**ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետ**
**Լրագրության բաժին 3-րդ կուրս**

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Վստահության պակաս

*«Մարդը մի բան է, որ պետք է հաղթահարվի»*

**Ֆրիդրիխ Նիցշե**

Ատամնացավին դիմանալ չի լինում: Բժիշկը, որին արդեն տարիներ այցելում եմ, գտնվածներից է, այն հազվադեպներից, որ և՛ լավ մասնագետ է, և՛ լավ մարդ ու բացի դա, արվեստ ու պոեզիա է գնահատում: Իր մոտ ապահով ու հանգիստ ես զգում: Թեթեւ ձեռք ունի, ինչպես սովորաբար ասում են: Մեղմ, բարեսիրտ միջին տարիքի մարդ է Նաիրի Գալստյանը. դրական էներգիան անմիջապես է փոխանցվում հիվանդին: Նույնը եւ երիտասարդ բուժքույրերը՝ գեղեցիկ ու միշտ ժպիտով: Երբ աշխատանքն ավարտում է, ընկերներիցս մեկի՝ որ արտերկրում է բնակվում, հարցն եմ ուղղում իրեն: Պատասխանում է: Ասում եմ՝ շատերն այնտեղից գալիս, ատամներն այստեղ են բուժում: Ասում է՝ կգան այնքան, մինչեւ այստեղից բոլոր լավ բժիշկները կհեռանան:

-Գիտեք, բժիշկ,- ասում եմ,- ձեզ զանգահարելուց առաջ մտքիս հենց դա էր՝ իսկ եթե Նաիրին գնացած լինի՞: Լռում է մի փոքր, հետո ասում՝ ես ամենավերջին գնացողը կլինեմ, այն էլ՝ եթե պարտադրված լինենք: Լույսերը վերջինը կանջատեմ ու դուրս կգամ:

Հայրենիքի, երկրի լույսերը... Հիշեցի ընկերներիցս մեկի՝ կյանքի ճանապարհը ազնվորեն անցնող մտավորական հայ մարդու վերջերս ասածը, թե՝ ես Հայաստանից ելնողը չեմ: Դուք գնացեք՝ ուր ուզում եք:

Մի քանի րոպե անց տաքսու վարորդը, համացանցում գրանցված բավական բարձր ռեյտինգով մեկը՝ մեքենան հանգիստ վարելու, լավ զրուցակից լինելու, բարեկիրթ սպասարկման, լավ երաժշտություն մատուցելու (իմ ժամանակ այդպես չէր՝ մի կիսառաբիզ հիմար երգ էր), շատերի պես մտահոգ էր մեր ներկա վիճակով, թե երկիրն էս ուր հասցրին: Մտովի հակադարձեցի, իսկ ինչո՞ւ հասցրին, գուցե յուրաքանչյուրս իր մասն էլ տեսնի՞ այդ ճանապարհին, ինչպես՝ բարեկամուհիս, որ պատերազմի ավարտից օրեր անց կեղեքում էր ինքն իրեն, թե այս ողջ ընթացքում մտածել եմ՝ ի՞նչ ես կարող էի անել երկրիս համար, որ չեմ արել, որտե՞ղ եմ արդյոք թերացել, երբ վստահ գիտեմ աշխատանքի հանդեպ իր պատասխանատվության աստիճանը, անհանդուրժողականությունը անարդարության հանդեպ եւ չլռելը:

Փետրվարի 18-ն էր՝ 1921-ի Փետրվարյան ապստամբության 100 -րդ տարին: Վարորդին ասում եմ՝ այ տեսնում եք՝ հիմա էլ անկախությունից ենք դժգոհում, հասցրեցին այն աստիճանի, որ ինքներս մեզ խոստովանենք, թե հայերը սեփական երկիրը կառավարել չեն կարողանում, որ մեր գլխին միշտ մի օտար վերակացու պիտի լինի, թե չէ մենք մեզանով ոչնչի ընդունակ չենք, միայն իրար ենք գզում: Նա էլ՝ թե երեսուն տարի է՝ անկախ ենք, ինչ մի լավ բան տեսանք, միայն թալան, մեծ մասը թողին, գնացին երկրից, հիմա էլ շունը տիրոջը չի ճանաչում, ամեն ինչ խառնվել է իրար, անպաշտպան ենք մնացել, չգիտենք՝ ինչ անենք, որն է ճիշտ, որը՝ սխալ:

-Այսքան դժվարությունների ու զրկանքների գնով ձեռք բերած պետականությունը կորցնե՞նք, նորից դառնա՞նք Ռուսաստանի պրովինցիա:

- Ավելի լավ չի՞, - հակադարձում է, - գոնե կիմանաս՝ ապահով ես, մի մեծ երկրի հովանու տակ ես, հանգիստ կապրես, համ էլ կզարգանա երկիրը:

-Որեւէ երկրի զարգացման երաշխիքը անկախ պետականության գոյությունն է, ազատությունը, - ասում եմ: Մոտ 200 տարի այդ երկրի իշխանության տակ ինչի հասավ մեր հայրենիքը՝ շագրենի կաշվի պես փոքրացավ ու փոքրացավ, մեր զինվորների ու մեր հողերի հաշվին տարածաշրջանում իրենց



քաղաքական հարցե՞րն են լուծում:

Հետո մտածում եւ միեւնույն հարցը այս էլ որերորդ անգամ սեղմում է կոկորդս՝ իսկ ինչո՞ւ միայն մեր հաշվին են կարողանում դա անել՝ ամենաթույլ կետն ե՞նք, ամենախոցելի՞ն ենք, ամենից հարմա՞րն ենք: Բայց մենք հո նոր չէ, որ կորցնում ենք մեր տարածքները, մեր պատմությունը կորուստների ու աղետների շարան է: Չէ, այնպես չէ, թե մենք մեր երկիրը չենք սիրում. ոչ էլ կեղծ հայրենասիրություն է պետք փաթաթել մեզ: Մենք մե՛զ չենք սիրում, միմյանց ենք ներհակ, ու սա տեսնում է օտարը, տեսնում է ու օգտվում, օգտագործում ըստ իր սեփական շահի, ու դա ոչ էլ պախարակելի է: Հայրենասիրությունը հո դատարկ բա՞ռ չէ, երկիրը մարդով է երկիր, մարդով է գոյատեւում: Իսկ մենք մարդո՛ւ հանդեպ ենք անտարբեր, անկարեկից եւ, այո՛, դաժան: Մենք միմյանց հետ հաշտ չենք: Լավը տեսնելու կարող չենք. հորիզոնում չերեւա այդպիսի մեկը, երեւակայությանը զոռ են տալիս ու սկսվում է մարդուն հեղինակազրկելու վարպետ գործընթացը... Ահա որտեղ է պետք նաեւ փնտրել մեր անհաջողությունների պատճառները:

Հայերիս պատմության մեջ փետրվարի 18-ը ընդվզումի, ապստամբության օր է՝ ազատության, անկախության համար պայքարի օր: Երկիրը «ապահովության զոնայի» մեջ տեղավորելուն կողմնակից հայը չգիտեր էլ՝ դա ինչ օր է: Մենք մեր իրական պատմությունը չգիտենք: Մեզ կերակրել են հորինովի պատմություններով ու ստերով, իսկ հիմա դա հասել է հնարավորի սահմանները: Մի սփյուռքահայ, որ երկու տարի առաջ Լոս Անջելեսից Հայաստան էր տեղափոխվել ու հիմա ետ է գնում, վերջերս մի հաղորդման ժամանակ ասաց, թե՝ Հայաստանն այսօր դարձել է ստի ու կեղծիքի կենտրոն:

Հիմա նաեւ շատ խոսում են, որ ատելության մեծ դոզա է կուտակվել հանրության ներսում, ու դա վտանգավոր է: Սակայն դա այնքան էլ այդպես չէ, կամ ուղղակի այդպես չէ: Ատելություն եթե կա, ապա երկու հակադիր ճամբարներում է՝ Բաղրամյանից Հրապարակ. միմյանց ատում են մարդիկ, ովքեր իրար չեն ճանաչում: Աբսուրդ է:

Այ ուրիշ բան, եթե ասենք՝ վստահության պակաս կա, ու սա իսկապես վտանգավոր է: Անվստահությունը ծնում է փախուստ, իրականության ոչ ճիշտ գնահատում, որից էլ՝ սխալ վերաբերմունք, նաեւ անինքնավստահություն, նաեւ մեկուսացում: Այսպիսի հասարակությունը մերժում է ամեն դրական բան, քանի չի վստահում, չի հավատում ոչնչի ու ոչ մեկի: Եվ որքան անկեղծ է խոսքը՝ այնքան վստահությունը քիչ է, որքան զգացմունքային ու բաց է, այնքան կասկածներն ավելի շատ են: Խեղաթյուրված ու հիվանդ վիճակ է սա: Մեր իրականությունը, մեր կյանքն է այսպիսին դարձրել մարդուն՝ անառողջ հարաբերությունները, հոգեբանական վնասվածքները: Մարդը հակված չէ հավատալ մի բանի, որը չի տեսել, չի զգացել:

Դժվար է, երբ վստահության, հավատի այսչափ պակաս կա:

Շատ է խոսվում նաեւ անտարբերության մասին, այս վտանգը տարիներ ցեցի պես ուտում է մեր հոգիները: Սակայն արտառոց է անտարբերությունը ներկա պայմաններում: Այնպես չէ, թե մենք հանգիստ մի հասարակություն ենք. ներքաղաքական, սոցիալական, կրթական, էկոլոգիական եւ բազմաթիվ այլ խնդիրների հետ կապված անպակաս են եղել հանրային ընդվզումները: Սակայն այսօր երկրի, հայրենիքի, ամենքիս ճակատագիրն է հարցականի տակ, վտանգված է մեր պետականությունը, մեր գոյությունը, եւ մարդկանց մի ստվար հատված անտարբեր է, շարունակելով ապրել միմիայն առտնին կյանքով, հարեւանցի է նայում կատարված ողբերգությանը, ներկայիս վտանգավոր իրադարձություններին: Ասես հանգիստ հետեւում է իր կործանմանը, նման զառամյալ մի ծերունու, որ վաղուց հոգնել է կյանքից:

# Ավետիս Զենյան

## (1935-2021)



Փետրվարին Մոսկվայում կյանքի 87-րդ տարում կյանքից հեռացել է խորհրդային եւ ռուսական կինոյի օպերատոր **Ավետիս Զենյանը**:

Նա ծնվել էր 1935-ին, Բեյրութում, Ցեղասպանությունից փրկված բնիկ այնթապցիների ընտանիքում: Հայրը՝ Նազար Զենյանը, հետագայում դարձել է ճարտարագետ, անդամագրվել կոմունիստական կուսակցությանը: Ավետիսը, որ երեք եղբայրներից կրտսերն էր, հիշում է, թե ինչպես է մի անգամ հայրը մոր հետ գաղտնի զենք լցրել ֆայտոնի մեջ՝ փոխադրման համար: Հալեպում նա հաճախել է ֆրանսիական դպրոց, երգել եկեղեցում: 1946-ին մոր եւ եղբայրների հետ հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան: Բաթումում նրանց իրերի մեծ մասը չեն վերադարձրել: Ընտանիքին ուղարկել են Տավուշի Ուզունթալա (այժմ՝ Այգեհովիտ) գյուղը: Այնտեղ ձյուն-ձմեռ էր, մինչդեռ Ավետիսը եւ եղբայրները շոգ Սիրիայից եկել էին կարճ տաբատներով: Ապրուստ վաստակելու համար մայրը կոտլետ եւ փախլավա է պատրաստել, իսկ փոքրիկ Ավետիսը վաճառել է շուկայում: Մի անգամ գումար վաստակելու համար դիմել է խորամանկության. մարդկանցից հավաքել է անվավեր մթերային քարտեր, ռետինից դրոշմ է պատրաստել եւ վրան գրելով տարբեր խանութների համարներ՝ կնքել է քարտերը: Դրանցով նա ձեռք է բերել 50 կիլոգրամ շոկոլադ եւ վաճառել: Շուտով նվեր ստանալով լուսանկարչական սարք՝ Ավետիսը ամառները շրջել է պիոներական ճամբարներում ու դրամ վաստակել լուսանկարչությամբ: Բեյրութից հայրենադարձված մի լուսանկարիչ ընկեր, որն Ավետիսից քսան տարով մեծ էր, շատ բան է սովորեցրել նրան: Նրա խորհրդով էլ Ավետիսը մեկնել է Մոսկվա եւ 1954-ին ընդունվել ՎԳԻԿ-ի օպերատորական բաժինը: Եղել է նույնպես ուսանող Լյուդմիլա Գուրչենկոյի, Վասիլի Շուկշինի եւ այլոց ընկերական շրջապատում: Իր դիպլոմային աշխատանքը ցանկացել է նկարահանել Արման Մանարյանի հետ՝ հայ հայրենադարձների մասին: Նրանք Գառնիում նկարահանել են մի դրվագ Մարտիրոս Սարյանի եւ Իլյա Էրենբուրգի մասնակցությամբ, սակայն հայրենադարձների հետ ոչինչ չի ստացվել, որովհետեւ վերջիններն անկարող էին կոծկել իրենց դժվարին կյանքը: Զենյանը մասնակցել է Մանարյանի դիպլոմային աշխատանքի՝ «Տժվժիկի» նկարահանմանը, սակայն նրա անունը ենթագրերում բացակայում է: Երեւանում չունենալով բնակարան՝ Զենյանը վերադարձել է Մոսկվա: Մարկ Հովսեփյանի հետ նկարահանել է տեսարաններ Մոսկվայից, այն ՎԳԻԿ-ի դիպլոմային աշխատանքների մրցույթում արժանացել է առաջին մրցանակի, եւ Զենյանին աշխատանքի են հրավիրել «Մոսֆիլմ»: Այդ ժամանակ Բոնդարչուկը սկսել էր նկարահանել հետագայում օսկարակիր դարձած իր «Պատերազմ եւ խաղաղություն» կինոէպոպեան եւ Զենյանին աշխատանքի հրավիրել որպես բեմադրող օպերատոր: Նա միակ օպերատորն էր, որն աշխատել է ֆիլմի բոլոր չորս մասերի վրա: Զենյանն է գործի դրել ինը կինոխցիկները, կես միլիոն ժապավեն է անցել նրա ձեռքով, որոնք նա հայտածել է եւ տպել, այնուհետեւ ստեղծել ֆիլմի օրինակները արտասահմանի համար: Տարիներ անց Բոնդարչուկը, հանդիպելով նրան, գրկել է եւ ասել. «Ներիր, որ քեզ այդքան տանջել եմ»...

Որպես օպերատոր Զենյանն աշխատել է նաեւ Ալեքսանդր Միտտայի «Վառվիր, վառվիր, աստղ իմ», «Սա Հաղթանակի օրն է», «Խոպան», «Հեղափոխությամբ ծնվածը», «Ընկեր Սիբիր» ու այլ ֆիլմերում: Եղել է նաեւ օպերատոր Դավլաթնազար Խուդոնազարովի խորհրդականը «Ռուստամ եւ Զոհրաբ» ֆիլմում: Զենյանն է նաեւ 1986-ին ուղղաթիռից նկարահանել Չեռնոբիլ քաղաքն աղետից անմիջապես հետո: Նա շատ է աշխատել նաեւ խորհրդային դասական կինոնկարների («Ուրախ տղաներ», «Չապաեւ», «Ալեքսանդր Նեւսկի», «Իվան Ահեղ») վերականգնման վրա՝ հաճախ հրագործելով տեխնիկական «հրաշքներ» հին ժապավեններին նոր կյանք տալու գործում...

**Ա. Բ.**

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Անվտանգության հարցերով փորձագետ

# «Խլուրդը» - «MI-6»-ում

*Շատ տարիներ առաջ Բրիտանիայի թագավորական ծովային հետեւակի երիտասարդներից մեկը՝ **Ջորջ Ասթոնը,** հրահանգ ստացավ Լոնդոն ժամանելու: Նա պետք է զինվորագրվեր բրիտանական նավատորմի ինչ-որ առեղծվածային, նոր ստեղծված ստորաբաժանումում:*

*Այդ ստորաբաժանումը կոչվում էր «Ռազմական, գաղտնի, քաղաքական բաժնի հետախուզական կոմիտե Ծովակալության կազմում»:*

*Երբ Ջորջը մտավ շենք, հանդիպեց իր վաղեմի ծանոթներից մեկին, եւ վերջինս ողջունեց նրան հետեւյալ խոսքերով.*

*«Ողջույն, Ասթոն, այդ դո՞ւք եք մեր նոր ինտելիգենտ սպան (inteligence officer): Inteligence բառը անգլերենից թարգմանաբար նշանակում է նաեւ հետախուզություն:*

Ահա այսպես առաջացավ բառը, հասկացությունը եւ հետախուզությունը: Ավելի պարզորոշ - հետախուզությունը այն է, երբ ինչ-որ կա մեկ ուղեղում, դուրս է հանվում եւ փոխանցվում է մեկ այլ վայր:



Շոն Քոներին՝ Ջեյմս Բոնդի դերում

Պատահական չէ, որ Ջեյմս Բոնդը նույնպես անգլիացի է: Այս կերպարը ստեղծել է անգլիացի լրագրող, գրող Յան Ֆլեմինգը, որը 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայում էր բրիտանական թագավորական նավատորմի հետախուզության պետի օգնականի պաշտոնում: Նրա առաջին գիրքը Ջեյմս Բոնդի մասին կրում էր «Կազինո «Ռոյալ» անվանումը: Կերպարը վերցված էր բրիտանացի հետախույզ (1-ին համաշխարհային պատերազմի ժամանակորդ) Սիդնեյ Ռեյլիի անձից, որ 1918թ. Ռոբերտ Լոկարթի հետ աշխատում էր տապալել Լենինին եւ ոչնչացնել հոկտեմբերյան հեղափոխության «պտուղները»:

Ջեյմս Բոնդի հերոսը աչքի էր ընկնում արկածախնդրությամբ, վճռականությամբ, համարձակությամբ, նպատակին հասնելու համար հաճախ դիմում էր ուժակիրառման հնարքներին: Միեւնույն ժամանակ նրա ցայտուն հատկանիշներն էին նաեւ կիրքը կանանց նկատմամբ, խաղամոլությունը եւ ալկոհոլի մշտական օգտագործումը: Բայց Բոնդը, չնայած իրական հետախույզներից էր մշակված, այնուամենայնիվ գրքային եւ էկրանի հերոս էր: Իսկ իրականում բրիտանական հետախուզությունը համարվում էր դասական, օրտոդոկսալ (համոզմունքներում խիստ հետեւողական), որը միշտ փնտրել եւ գտել է ստրատեգիական որոնումներ, անհրաժեշտության դեպքում հակառակորդին հասցնելով նաեւ կաթվածահար անող, ջլատող հարվածներ, ընդ որում՝ ուրիշի ձեռքերով (proxy ուժերով): Ահա այդպիսի ունակություններով եւ հատկանիշներով էր աչքի ընկնում նշանավոր բրիտանացի հետախույզ Թոմաս Էդվարդ Լոուրենսը, որն ավելի հայտնի էր Լոուրենս Արաբացի մականունով (ծառայության տարիները՝ 1914-1935թթ., զինվորական կոչումը՝ գնդապետ, գործունեության հիմնական վայրը՝ արաբական աշխարհը):

Այսօր բրիտանական հետախուզությունը աշխարհի ուժեղագույն, վտանգավոր (հատկապես հայերիս եւ Հայաստանի համար), ճկուն, ռազմավարական օպերացիաների մասնագետ, վարագույրների ետեւում գործող հատուկ ծառայություններից մեկն է եւ ղեկավարում է այդ ծառայությունը Էրդողանի եւ Ալիեւի մեծ բարեկամ Ռիչարդ Մուրը (ում մասին պատիվ ունեցել եմ գրելու այս թերթում):

Սակայն ամենաուժեղ եւ օրթոդոկսալ հետախուզություններում անգամ կան խոցելի կետեր եւ դավաճաններ:

Այս պատմությունն այդ կերպարներից մեկի մասին է:

❖❖❖

«Վստահություն չկա նրա հուսալիության եւ նպատակասլացության մեջ, սակայն չկան նաեւ ապացույցներ, որ նրան չի կարելի վստահել: Եռանդուն, դյուրըմբռնող, բայց եւ աննշմարելի անձնավորություն, որը բացարձակ նման չէ բրիտանացու» - ահա այս բնութագիրն էր տրված բրիտանական հետախուզության (Mi-6) ապագա սպա **Ջորջ Բլեյքին** նրա հետախուզական դասընթացների անմիջական ղեկավարի կողմից:

«Մշտապես կարիք ունի ուղղորդման: Այնպիսի զգացողություն կա, որ նա պատրաստ չէ այն բարդ աշխատանքին, որի համար նրան պատրաստում են: Չեն արտահայտվում այն հատկանիշները, որոնք բնորոշ են գաղտնի հետախուզական ծառայության աշխատակիցներին». ահա՛ Բլեյքի բնութագիրը ամփոփող արտահայտությունը: Եվ այնուամենայնիվ, Ջորջ Բլեյքը, չնայած նրա ղեկավարի գնահատականին, ընդունվեց հետախուզության կազմ եւ շուտով գործուղվեց Կորեա:

Հետախուզության մի այլ սպա, «Mi-6»-ից, **Կիմ Ֆիլբին** (գաղտնի համագործակցում էր խորհրդային հետախուզության հետ) իր հարցազրույցներից մեկում այսպիսի հայտարարություն արեց. «Դավաճանելու համար նախ պետք է պատկանել, մտնել ինչ-որ կազմի մեջ: Ես ոչ մեկին չեմ պատկանել»:

**Լորդ Ռեդկլիֆֆը**, ում հանձնարարվել էր ուսումնասիրել ձախողված հետախույզների, դավաճանների, երկդիմի գործակալների շատ գործեր, գտնում էր, որ Ֆիլբին, որն ավարտել էր Լոնդոնի լավագույն դպրոցներից մեկը եւ Քեմբրիջի հեղինակավոր համալսարանը, ստում էր հոգու խորքում, երբ հայտարարում էր, որ երբեք չի պատկանել բրիտանական մշակույթին եւ պետական իստեբլիշմենտին:

Սակայն երբ նույն միտքը արտահայտեց Ջորջ Բլեյքը, ապա այդտեղ որեւէ կեղծիք չէր կարող լինել, որովհետեւ նա հայրենիք որպես այդպիսին չուներ: Ջորջը ի ծնե կրում էր Բեհար ազգանունը, ծնվել էր Ռոթերդամում (Հարավային Հոլանդիա) եգիպտացի հրեայի եւ հոլանդուհու ընտանիքում: Նրա մայրը բողոքական եկեղեցու ակտիվ ծխական էր: Ջորջի հայրը՝ Ալբերտ Բեհարը ծագումով եգիպտացի, բրիտանական անձնագիրն ստացել էր բրիտանական բանակում ծառայելու համար դեռ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եւ միակ որդուն անվանել էր Ջորջ՝ ի պատիվ բրիտանական թագավորի:

Գաղտնի օպերացիաներով Ջորջը սկսեց զբաղվել շատ վաղ տարիքում: Երբ նոր էր լրացել նրա 17 տարին, նա սկսեց հեծանիվով շրջագայել Նիդեռլանդներում եւ տեղափոխել գաղտնի գրություններ եւ ուղերձներ ֆաշիստների դեմ պայքարող դիմադրության շարժման անդամներին:

1943թ. Ջորջը հասկացավ, որ կարող է հայտնվել ֆաշիստների ճանկերում եւ իրականացրեց իր կյանքում առաջին փախուստը: Նիդեռլանդներից Ֆրանսիայի օկուպացված տարածքներով նա անցավ Իսպանիա, իսկ հետո՝ Անգլիա: Այստեղ նա ազգանունը փոխեց եւ Բեհարից դարձավ Բլեյք եւ որպես կամավոր գրանցվեց բրիտանական թագավորական նավատորմ: Շատ շուտով Բլեյքը աչքի ընկավ նավատորմում, քանի որ տիրապետում էր մի քանի օտար լեզուների եւ ուներ ընդհատակյա աշխատանքի փորձ: Բլեյքը հայտնվեց բրիտանական հետախուզության տեսադաշտում:

Այնուհետեւ Բլեյքը հայտնվեց հետախուզական դպրոցում եւ չնայած իր դասընթացների ղեկավարի բացասական բնութագրի, 1948թ. գործուղվեց Կորեա: Նրա գործուղումից կարճ ժամանակ անց պատերազմ սկսվեց Կորեայի հյուսիսի եւ հարավի միջեւ: Հայտնի է, որ Հարավային Կորեային սատարում էր Արեւմուտքը, իսկ Հյուսիսայինին՝ ԽՍՀՄ-ը:

Տասնամյակներ անց, 2012թ., արդեն Մոսկվայում, Բլեյքը հարցազրույց տվեց (որպես բացառություն) հոլանդական լրագրող **Սայմոն Կուպերին**, ընդ որում, ըստ պայմանավորվածության, Կուպերը կարող էր հոդվածը տպել միայն Բլեյքի մահից հետո:

«Որպես Արեւմուտքի հետախուզության ներկայացուցիչ ես ինձ շատ մեղավոր էի զգում եւ ինքս ինձ հարց էի ուղղում՝ ի՞նչ ենք անում մենք Կորեայում, ի՞նչ իրավունքով ենք մենք եկել այստեղ եւ քանդում ամեն ինչ: Այս մարդիկ մեզնից շատ հեռու են ապրում եւ իրավունք ունեն ինքնուրույն որոշել՝ ինչպես կառուցեն իրենց կյանքը»: Ահա թե ինչ մտքեր եւ կարծիք ուներ անգլիացի հետախույզ Բլեյքը Կորեայում պատերազմի հենց սկզբում:

Բլեյքին տրված առաջադրանքը գործակալական ցանց ստեղծելն էր, որը պետք է լրտեսական աշխատանք վարեր Հյուսիսի դեմ: 1950թ., երբ Հյուսիսի զորքերը ժամանակավորապես գրավեցին Սեուլը, Բլեյքը հայտնվեց գերության մեջ:

«Ես գիտակցեցի, թե որքան փխրուն է մարդկային կյանքը, եւ փորձում էի մտորել՝ ի՞նչ եմ արել ես մինչեւ այս պահը: Եվ հենց այդ ժամանակ մտածեցի կյանքիս մնացորդը նվիրել արժանի գործի»: Սրանք էին Բլեյքի մտորումները բանտախցում:

Բրիտանական հետախուզության, ինչպես նաեւ ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետախուզության որոշ վետերաններ թերահավատորեն են մոտենում Բլեյքի մտորումներին եւ գտնում են, որ Բլեյքը հավաքագրվեց խորհրդային հետախույզների կողմից կորեական ռազմագերիների ճամբարում ոչ թե գաղափարական հիմքերի վրա, այլ վարկաբեկիչ նյութերով (վարկաբեկիչ նյութերը հաճախ են օգտագործվում հավաքագրման գործընթացներում): Ջորջ Բլեյքին վարկաբեկող հիմնական փաստը այն էր, որ նա ուներ հոմոսեքսուալ հակումներ, եւ այդ փաստի հրապարակումը մեծ պրոբլեմներ կառաջացներ նրա համար ռազմագերիների ճամբարում:

Ինչպիսին էլ որ լինեին Բլեյքի հավաքագրման դրդապատճառները, փաստն այն էր, որ Կորեայից Բրիտանիա Ջորջ Բլեյքը վերադարձավ որպես խորհրդային հետախուզության գաղտնի գործակալ:

*(շարունակելի...)*



Ջորջ Բլեյք



Ջորջ Բլեյք



Ջորջ Բլեյքը մոր հետ



Ջորջ Բլեյքը կնոջ հետ

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Մեր լավը չուզողի...

Հայաստանյան առօրյան եռացող կաթսա է հիշեցնում, ուր որ է բարձր ջերմության արդյունքում մասսայի ժայթքում կիրականանա, որի հետեւանքները դժվար է պատկերացնել: Կարելի է կանխագուշակել, որ այսօրվա նորերի ու փրկություն խոստացողների առճակատումը կշարունակվի աննախադեպ դրսեւորումներով:

Այսօրինակ շիլաշփոթի պատճառներից մեկը թերեւս ՀՀ տնտեսության արտառոց անմխիթար վիճակն է, որն իշխանություն հռչակվողի պատկերացմամբ հաղթահարելի է... տրանսպորտային ապաշրջափակում կոչվող յուրօրինակ երկնային մանանայի շնորհիվ: Տխուր է, եթե ցավալի չասենք: Անգամ փորձ չի արվում գործընթացի տարրական մանրամասների մեջ մտնել,համաշխարհային զարգացումներն ուսումնասիրել, պարզ հաշվարկներով առաջնորդվել: Ասենք. տրանսպորտային բեռնափոխադրումների միջազգային փորձը հաստատում է, որ որոշակի ների փոխադրում՝ շինանյութերի ու վառելիքի, քարածխի ու փայտի, հանքահումքի ու հացահատիկի:

Այսօրինակ խնդիրները համաշխարհային տնտեսվարական հանրությունը հղկել, կարգավորել ու կանոնակարգել է վերջին մի քանի տասնամյակներում, եւ որեւէ պարզունակ ու պարզամիտ քաղաքական խաբկանքով հնարավոր չէ այն վերաիմաստավորել: ՀՀ առկա իշխանությունը փորձում է ինչպես միշտ իրեն բացառություններ կրող դասակարգել եւ հանրությանը հերթական անգամ ցանկալին իրականություն ներկայացնելու փորձեր անել: Անիմաստ է, եթե այլ գնահատական չինչեցնենք: Իսկ ինչքան տեղին կլինի այդօրինակ գործընթացի փոխարեն ՀՀ տնտեսությունը կազմակերպել իրական բարեփոխված արդյունքների հասած երկրների փորձը ներդնելով: Հենց թեկուզ մեր երբեմնի բախտակից Էստոնիայի: Հազիվ 1,3 մլն բնակչությամբ այս երկիրը, որտեղ էթնիկ բնակչությունը հազիվ 70 տոկոսն է, մնացյալն անհասկանալի կարգավիճակով, նորանկախ շրջանի արդեն 8-րդ տարում, 1999 թվա-




հեռավորությունների վրա ապրանքների առաքումն ու մատակարարումները հազար, երկու հազար, անգամ երեք հազար կիլոմետրերի պարագայում առավել հարմար է իրականացնել խոշոր բեռնատարների, որոնց դեպքերում նաեւ դրանց կցորդիչների օգտագործման շնորհիվ: Պատճառները մի քանիսն են. հարկ չկա բեռը երկաթուղային կայարան հասցնելով բեռնաթափման աշխատանք կատարել, սպասել թե երբ երկաթուղային ծառայությունը բեռն ստացողի ուղղությամբ տեղափոխելու շարժակազմ կունենա, այն կբեռնավորի եւ գնացք կազմելով կուղարկի հասցետատիրոջ տեղաբաշխման վայրի տեսակավորման կայարան: Տվյալ երկաթուղային հանգույց հասնելուց հետո վագոնը կա՛մ պետք է հասցվի բեռնատիրոջ երկաթուղային փակուղի, կա՛մ բեռն ավտոմեքենաներով հարկ կլինի տեղափոխել ստացողի պահեստային տնտեսություն: Հնարավոր է տարբերակ, երբ 60 տոննա բեռնատարողության պարագայում վագոնում մեկից ավելի բեռնատիրոջ ապրանք հայտնվի, որոնք լուրջ բարդություններ են ստեղծում բեռնափոխադրումների ընթացքում, կապված թե՛ երկաթուղայինների, թե՛ մաքսային ծառայությունների համար: Այնպես որ երկաթուղային փոխադրումներն օրեր են տեւում, երբեմն շաբաթներ, իսկ ահա խոշոր ավտոմեքենաների պարագայում բեռները մատակարարի արտադրությունից ստացողին հասցնելը ժամերով է չափվում, առանց լրացուցիչ բեռնաբարձման ու բեռնաթափման աշխատանքների իրականացման: Այստեղից էլ՝ տնտեսական ակտիվ գործունեություն իրականացնող երկրների մայրուղիներում հարյուր հազարավոր խոշոր բեռնատարների առկայությունը: Վերջին տարիներին դրանց մենք հանդիպում ենք նաեւ ՀՀ տարածքում, որոնց հարաբերական սակավությունը պայմանավորված է մեր երկրի նվաղող տնտեսությամբ: Ինչ մնում է երկաթուղային տրանսպորտին, այն ողջ աշխարհում իրականացնում է սահմանափակ թվով բեռների խոշոր ծավալ-

կանին 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով 5600 դոլար արդյունք ուներ, 2,5 մլրդ դոլարի արտահանում էր իրականացնում: Ինչպե՞ս, ո՞ր ոլորտներում, ինչի՞ շնորհիվ հարցերի պատասխանները պարզելը ՀՀ տնտեսվարական մտքի ներկայացուցիչների խնդիրն է, ովքեր կենտրոնացած են նախարարություններում ու կառավարությունում եւ աշխատանքային բարձր վարձատրվող օրն արդյունավետ անցկացնելու պարտականությունն ունեն: Նրանց օգնելու նպատակով նշեմ, որ Էստոնիայի ներկայիս ՀՆԱ-ն անցել է 50 մլրդ դոլարը, 1 բնակչի հաշվով մոտեցել 40 հազար դոլարի, արտահանումը գերազանցել 13 մլրդ դոլարը, որը մեր 3 մլն բնակչությամբ ողջ երկրի ՀՆԱ-ն է: Էստոնիայում 1 զինվորականի հաշվով ռազմական ծախսը կազմում է 100 հազար դոլար, որը եռակի գերազանցում է, ասենք, Ադրբեջանի ցուցանիշը: Այսօրինակ արդյունքների մենք տեսանելի ապագայում հասնել չենք կարող, քանզի այսօր ունենք այս թվերի հազիվ 10 տոկոսը: Էստոնիայի գյուղոլորտում զբաղված է աշխատունակ բնակչության հազիվ 3 տոկոսը, երկիրն առաջնահերթ պարենով գրեթե ինքնաբավ է, որը մեզ չի հաջողվում գյուղատնտեսությունում 30 տոկոս զբաղվածության պարագայում. ներկրում ենք սոխ ու սխտորից մինչեւ կարագ ու բուսայուղ, շաքարավազ ու հացահատիկ: Այնպես որ մեր պատասխանատուների հետ որոշակի շփումների արդյունքում կարծիք է կազմավորվում, որ ներկա տեմպերի դեպքում հեռու եւ անորոշ է ՀՀ տնտեսությունը գոնե առաջիկա տասնամյակում փոքր-ինչ բարելավված տեսնելու հեռանկարը: Ապաշրջափակում հռչակվածը միայն խորացնելու է առկա վիճակը, այն, ինչի ձգտում են հայերիս հակառակորդները: Թե ինչո՞ւ հայտնվեցինք այս վիճակում, երբ հաճախ ենք մտաբերում մեր դարավոր պատմությունն ու ազգային ներուժը, քարից հաց քամելու ունակությունը, դժվար է պատասխանել:

Այսուհանդերձ... հուսանք, որ եկող օրերը կխափանեն մեր լավը չուզողների ծրագրերը:

**09.03.2021 թ.**

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

# «Մեծ Մռովից մինչ Հորադիզ». ո՞ւր մնաց Պետոյի փառքի ճամփան

Դաժան պարտությունը կոտրեց բոլորիս, համենայն դեպս նրանց, ովքեր հասկանում են՝ ինչ ենք կորցրել...

Դավադիր պատերազմը հայրենիքից բացի մեզանից խլեց նաեւ մեր ազատագրական երգերից շատերի բովանդակությունը: Անբովանդակ դարձան Ջրականի, Հադրութի, Ամուրի ու Շուշիի մասին երգերը: Անշոշափելի մի կարոտով մենք այսօր երգում ենք Շուշիի մասին այնպես, ինչպես հարյուր տարի երգել ենք Արարատ լեռան, Վանա լճի, Մուշի, Էրզրումի ու Ստամբուլն արյան ծով դարձնելու մասին:

Այդ երգերն Արցախյան փառապանծ ազատամարտի աննկուն անձնագրերն էին, մեր ազգի լավագույն երազների խտացումն ու անկախության վաղեմի երազանք-նպատակների դրական պատասխանները.

*«...Դեռ ճամփա ունենք,*
Պիտ հասնենք Սասուն...»:

Ազատագրական-ֆիդայական այդ երգերի ցանկում կա մեկը, որը միշտ երգել եմ, բայց արդեն ամիսներ շարունակ ոչ միայն անկարող եմ երգել այն, այլեւ մնացել է կոկորդիս՝ որպես եղբորից գողացած մի կտոր հաց եւ ծանր քարի պես կուլ չի գնում: Խոսքն Արցախյան ազատամարտի մասնակից-խորհրդանիշներից մեկի Պետոյի՝ Պետրոս Արշալույսի Ղեւոնդյանի մասին հյուսված մի գեղեցիկ երգի («Պետոյի հիշատակին») մասին է, որն սկսվում է հետեւյալ բառերով.

*«Մեծ Մռովից մինչ Հորադիզ*
Փառքի ճամփա ես անցել...»:

Իր կյանքը դնելով հայրենիքի փրկության զոհասեղանին՝ Պետոն զոհվեց՝ մեզ կտակելով ազատ ու անկախ հայրենիք, պատիվ ու հաղթողի կեցվածք: Նա մարտական փառքի ճամփա անցավ՝ հյուսիսից մինչեւ հարավ՝ Մռովից մինչ Հորադիզ:

Այսօր ես չեմ կարողանում երգել այդ երգը, լսել այդ երգը, որն իմ կյանքում ամենաշատ երգված ու լսված երգն է եղել, որովհետեւ... որովհետեւ հասկանում եմ, թե ո՞ւր մնացին Մռովն ու Հորադիզը եւ ովքե՞ր են հիմա ոհմակներով վխտում Մռովի ու Հորադիզի արանքում ընկած՝ Պետոյի փառքի ճամփին:

Չեմ կարողանում, ամաչում եմ երգել այդ երգը, որովհետեւ թուրքերն անալի անասունի նման նման լիզում են Պետոյի փառքի ճամփին ընկած՝ մեր պապերի շիրմաքարերը:

Երգել չի լինում, որովհետեւ այն գյուղը, որտեղ ընկել է Պետոն եւ իր արյունը որպես սրբազան ուխտ խառնել այդ հողին, օսմանի թոռները յաթաղանն օդում ճոճելով՝ խեղպար են բռնել եւ Մռովի տխուր հայացքի ներքո ոտնատակ են տալիս այն դրոշը, նաեւ որի իմաստավորման համար ընկավ Պետոն:

Ինչպե՞ս երգեմ այդ երգը, երբ Պետոյի փառքի ուղու ամբողջ երկայնքով ոռնալով վխտում են թուրքերը՝ կարծես վերահաստատելով այն հին-հին առածը՝ «ձորը՝ դատարկ, աղվեսը՝ տեր»:

Երգե՞մ: Երգե՞մ, ուրեմն:

Մռովի ծերպերերին տապալված են մեր հավատի բոլոր խաչերը, պղծված են մեր Աստծուն աղոթելու բոլոր մատուռները եւ այնտեղ անարգել, առանց որեւէ անհանգստության, եւ առանց որեւէ երկյուղի նամազ են կաղկանձում արդեն հազար տարի մեր լեռների վրա գրոհող շնագայլերը՝ իրենց ողջ գարշահոտությունը տարածելով Պետոյի փառքի ուղու վրա:

Դավադրության ու անտարբերության հետեւանքում՝ մենք պարտվեցինք այս պատերազմում եւ կորցրեցինք մեր հայրենիքը:

Շուշիից հետո Նախիջեւանի մասին էինք մտածում, բայց հիմա Զանգեզուրը պաշտպանելու, ավելի ճիշտ՝ փրկելու խնդիր ունենք:

Այո՛, մենք պարտվել ենք, ամենադաժան եւ ամենաողբերգական ռազմաքաղաքական պարտությունն ենք կրել 21-րդ դարում: Թող արդարացումներ ու ազգային սփոփանքի խոսքեր չլինեն, հայրենիքի կորստի ցավի դարման չէ դա, մենք պարտվել ենք, հակառակը պնդողներին առաջարկում եմ գնալ Պռոշյան, կանգնել Պետոյի հուշարձանի առաջ եւ պնդել, որ չենք պարտվել եւ հստակ պատասխանել՝ ուր մնաց Մեծ Մռովից մինչեւ Հորադիզ ընկած ճամփան՝ Պետոյի փառքի ուղին:

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## Ռամկավար Ազատական կուսակցության 2020 թվականի ֆինանսական հաշվետվություն

| | |
|---|---|
| 1. Մնացորդը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ | 33 041 |
| 2. Մուտքի վճարներ (վարձակալություն և անդամակցության վճար) | 4 158 000 |
| **Ընդամենը մուտք** | **4 191 041** |
| 1. Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ) | 781 000 |
| 2. Գույքի վարձակալության վճար | 1 241 000 |
| 3. Կոմունալ վճարումներ | |
| -գազ | 225 000 |
| -էլ. էներգիա | 130 000 |
| -ինտերնետ | 174 000 |
| -հեռախոս | 70 000 |
| 4. Հարկեր, տուրքեր | |
| -եկամտային հարի | 241 000 |
| -սոց վճարներ | 26 000 |
| -դրոշմանիշային վճար | 12 000 |
| -գույքահարկ | 35 000 |
| 5. Տրանսպորտային ծախսեր | 150 000 |
| 6. Այլ ծախսեր | 1  050 000 |
| **Ընդամենը ծախս** | **4 135 000** |
| **Մնացորդը 31.12.2020 դրությամբ** | **56 041** |

*ՌԱԿ ատենապետ՝ Հրաչյա Կարապետյան*

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

ռգդ, պրոֆեսոր

# Եթե չսթափվենք՝ վաղը ուշ կլինի

Իմ սերունդը, որ այսօր ավագ է համարվում, կյանքի կեսից ավելին ապրել է խորհրդային համակարգում, այսօր մի տեսակ շփոթված է, զայրացած ու զարմացած այն ամենից, ինչ կատարվում է մեր երկրում: Չեմ ուզում այդ տարիների գովքն անել, կարոտախտով էլ չեմ տառապում: Պատմաբան եմ եւ գիտեմ բոլոր ցավոտ կեռմանները, որոնք շատ անգամներ պատուհասել են մեզ, երբ Ռուսաստանը չի օգնել, «ուշացել է» մի քանի օր, խորհրդավոր նահանջներ իրականացրել, մեր հաշվին ձեռքբերումներ ունեցել Բալկաններում կամ մեկ այլ տեղ: Սակայն ինձ թույլ եմ տալիս նաեւ ենթադրել, թե ինչպիսի արմատական փոփոխություն եւ անհավատալի ձեռքբերումներ կունենայինք այսօր, եթե 1828 թվականին ամբողջ Արեւմտյան Հայաստանը եւս միանար Ռուսական կայսրությանը ու թեկուզ ենթարկվեր ցարական դաժան շահագործման: Մեծ հարցական է նաեւ, որ եթե դա տեղի ունենար, արդյոք հայ ժողովուրդը կցեղասպանվեր, արդյոք այսօր չէինք ունենա 40-50 միլիոնանոց Հայաստան եւ ով կլիներ գլխավոր խաղացողը Հարավային Կովկասում...

Ինչու հանկարծ մտաբերեցի խորհրդային տարիները, երբ ամենուր իշխում էր ռուսերենն ու ռուսականությունը, երբ եթե հրաշքով թույլտվություն էինք ստանում (ինձ այն տրվեց մեծ դժվարությամբ, ութ ամիս քաշքշուկից հետո եւ այն էլ երջանկահիշատակ ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի կոշտ միջամտությունից հետո միայն) ազգային գրադարանի հատուկ ֆոնդից օգտվելու, ապա չտեսի նման հարձակվում էինք հետապնդումների տարիներից հրաշքով պահպանված եւ մեզ հասած մտավորականների հուշերի վրա, կլանում դրանք, ժամանակի մամուլն էինք փորփրում եւ հետո միայն մեր թեմաները... Երբ ֆիլմերում տեսնում էինք ապրանքալեցուն ու գույնզգույն լույսերով զարդարված խանութները, երբ զարմանում էինք, որ փողոցները լուսավորվում էին գովազդների լույսերով, երբ հասարակ ջինսը պաշտամունքի առարկա էր, երբ...գործում էին հազար ու մի սահմանափակումներ ու արգելանքներ, բայց իմ սերունդը ոչ միայն չէր ընկճվում այդ ամենից, այլ ատամները սեղմած սպասում էր հարմար պահի: Երբ այն եկավ, միանգամից դուրս եկավ եւ անկախ պետություն վերստեղծեց, կռվեց ու հաղթեց: Հաղթեց 1991-1994 թվականներին, երբ հայերս գրեթե առանց գեներալների եւ լիարժեք ձեւավորված բանակի ստիպեցինք ազիկներին ճանաչել Արցախի փաստացի ինքնուրույնությունը եւ զինադադար խնդրել: Իսկ 2020-ին, երբ ունեինք ավելի քան չորս տասնյակ գործող գեներալներով տարածաշրջանում ամենամարտունակ ճանաչված բանակը, պարտվեցինք ու «վերադարձրինք» ոչ միայն գրավյալ յոթ շրջանները, այլեւ թշնամուն նվիրեցինք Արցախի յոթանասունհինգ տոկոսը, մնացյալ Արցախը թողնելով «խաղաղապահ դաշնակցի» ողորմածությանը: Իսկ ամենահետաքրքրականն այն է, որ պարտված պետության մեջ բոլոր քաղաքական ուժերի համախմբման, բանակի վերականգնման ու մնացած հայրենիքի պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու փոխարեն, գրեթե ոչինչ չի ձեռնարկվում պարտության պատճառների ու տեղ գտած դավաճանական փաստերի բացահայտման, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Ավելին՝ այս դեպքում նույնպես շարունակվում է սեւ-սպիտակ հակադրությունը: Մոռանալով երկրի առջեւ ծառացած հիմնախնդիրները՝ իշխանական թեւն իրար հաջորդող ռեվերանս-խոնարհումզիջումներ է անում աջ ու ձախ, իսկ ընդդիմադիր քաղաքական դաշտը լծված է պարտված գեներալների հերոսացման ու վարչապետի վարկաբեկման-հրաժարականի պահանջներով: Ակամա հարց է առաջանում. արդյոք ճակատը կազմալուծած ու պարտված գեներալները երբ հերոսի կոչումների են արժանանում, արժեհամակարգը չի արժեզրկվում: Իսկ ամենացավալին այն է, որ, ինչպես միշտ, այս անգամ էլ այդ շքերթը հայտնի ու անհայտ հայաստանյան բարեկամներով գլխավորում են օտարները: Իսկապես «Ողբամ զքեզ հայ ժողովուրդ, զի թագավորդ մանուկ է», ողբամ, քանի որ երեկվա քոչվորների ծաղրուծանակի առարկան ենք դարձել: Լավ, մի թե հայ ժողովուրդն այնքան է ծերացել, որ այլեւս ՆԺԴԵՀՆԵՐ չի ծնելու:



Կասկածից դուրս է, որ որ գլխավոր շտաբը զինված ուժերի ուղեղն է, «Յուրաքանչյուր երկրում ամենաինֆորմացված կառույցներից մեկը: Հատկապես Հայաստանի նման 30 տարի պատերազմական վիճակում գտնվող երկրում՝ Շտաբն ունի ավելի մեծ ինֆորմացիոն-վերլուծական հնարավորություններ, քան շատ այլ երկրներում, որոնք երբեք չեն գտնվել պատերազմում: Եվ եթե ԳՇ-ն պահանջել է վարչապետի հրաժարականը, ուրեմն՝ վերջինս վերջնականապես ավերել է և՛ բանակը, և՛ սպառազինության մատակարարումը, և՛ տնտեսությունն ընդհանրապես ու վիրավորել է ամբողջ հայ ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը: Այսինքն՝ նրա հրաժարականի պահանջը՝ ունի շատ լուրջ հիմքեր եւ հիմնավորումներ: Նրանք ունեն որոշակի ինֆորմացիա, որի հիման վրա ներկայացրել են վարչապետի հրաժարականի պահանջը: «Նրանք պարտավոր չեն կիսվել այդ ինֆորմացիան հասարակության հետ, ուղղակի մարդիկ պետք է գիտակցեն, որ եթե Շտաբը մի բան պահանջում է՝ ապա հարցը հրատապ է եւ հիմնավորված» (ՌԴ ԶՈՒ Գլխավոր Շտաբի նախկին սպա, ԶՈՒ գնդապետ, ռազմական փորձագետ **Միխայիլ Խոդարիոնոկ**):

Բացի այդ, գրեթե բոլոր զինհրամանատարները պնդում են, որ գերագույն գլխավոր հրամանատարի կողմից պատերազմի ընթացքում զինված ուժերի ամբողջ համակարգը ղեկավարվում էր անտանելի, մահացու եւ ուղղակի անտաղանդ կերպով: Ծառայությունից հատուկ հեռացվում էին նրանք, ովքեր ավելի մարտունակ էին, ովքեր սովորել էին ՌԴ զինվորական ակադեմիաներում: Այսինքն՝ նա լրիվ դեմ է Ռուսաստանի հետ դաշինքին: Մինչեւ պատերազմը եւ դրանից հետո էլ չէին կազմակերպվում ուսուցողական զինավարժություններ, մարտավարական հնարքներ, այլ զբաղվում էին միայն տրան-նրան դատելով: Դրա համար էլ ի վերջո այս ամենը հոգնեցրեց բանակին, որը, համոզված եմ, հայ ազգի անվտանգությունն ապահովող ամենակարեւոր ինստիտուտն է:

Իսկ ուր է տանում եւ ինչի կհանգեցնի վարչապետ-ԳՇ այս առճակատումը: Հարց, որը փաստորեն դարձել է վճռական ու անկյունաքարային հետագա զարգացումների գործում: Կարելի է ենթադրել, որ եթե նախագահը չհաստատի վարչապետի որոշումը, ապա նա էլ կդիտարկվի որպես հեղաշրջման կողմնակից եւ վարչախումբը կպահանջի ՀՀ նախագահի հրաժարականը: Իսկ ընդդիմադիրները կպաշտպանեն նախագահին եւ դարձյալ կպահանջեն վարչապետի հրաժարականը: Վարչապետն էլ կհայտարարի, որ երկիրը չի ուզում տանել ցնցումների եւ հրաժարվի իր ստորագրած որոշումից: Բայց հազիվ թե, քանի որ նա ուղղակի հետ չի կանգնում իր որոշումներից: Տեսականորեն հնարավոր է նաեւ, որ ԳՇ պետն ու Փաշինյանը հանդիպեն եւ մի հայտարարությամբ շեշտեն, որ այլեւս գեներալիտետը չի պահանջում Փաշինյանի հրաժարականը եւ կոնկրետ ժամկետներ նշեն արտահերթ ընտրությունների համար: Սա կլինի ամենագերադասելի տարբերակը: Դատելով տարածաշրջանում գլխավոր խաղացողների «անհանգստությունից» կարող են նաեւ դրսից այլ սցենարներ էլ պարտադրվել, որոնց համաձայն Օ. Գասպարյանը հրաժարական տա ու դրանով կթոթափի իրեն պարտված համարելու եւ վարչապետի որոշմամբ հրաժարվելու ոչ հաճելի բեռը: Սակայն այդ ամենով հանդերձ անվարան կարելի է պնդել, որ ՀՀ-ում հնարավոր չէ ոչ մի իշխանափոխություն՝ առանց արտաքին գործոնի, իսկ թե Ռուսաստանում՝ Թուրքիայի հետ համատեղ ի՞նչ կծրագրվի, դժվար է ասել: Մի բան միայն անվարան կարելի է պնդել, որ եթե Օ. Գասպարյանը խոհեմ մարտավարություն ընտրի եւ հանուն երկրի անվտանգության հրաժարական տա, ապա իշխանությունն ու ընդդիմությունն իրար հանդեպ այնքան ատելությամբ են լցված, որ հազիվ թե դրանով խնդիրը փակվի: Ռազմական հեղաշրջումը Հայաստանում բացառվում է, որովհետեւ մենք արդեն մանավանդ արցախյան վերջին պատերազմից հետո գրեթե կորցրել ենք մեր ինքնուրույնության վերջին դրսեւորումները: Ուրեմն խնդրի կարգավորումը կախված է ավելի շատ արտաքին գործոնից, մի հանգամանք, որը մատնանշում ենք ահավոր ցավով եւ դառնությամբ:

Այս զարգացումների հետնախորքի վրա իմ կարծիքով ամենավտանգավոր իրողությունն այն է, որ երեսնամյա մեր անկախության տարիներին Հայաստանի ներքին գործերին բացահայտ չխառնված Թուրքիան նախագահի, արտգործնախարարի եւ նույնիսկ «Գորշ գայլեր» կազմակերպության առաջնորդի ամենաբարձր մակարդակներով հայտարարեց ու պարզ հասկացրեց՝ իմ տարածքում եք բնակվում եւ ձեզ ուղղակի խելոք պահեք, թե չէ խիստ կպատժվեք: Հասկանում եմ, մենք բարեկամներ չենք եղել ու չենք էլ լինի, որ այդտեսակ հայտարարությունները թեեւ միջազգային իրավանորմերի կոպիտ ոտնահարում են, բայց լինում են: Այստեղ ամենավտանգավորն ու եղկելին այն էր, որ ՀՀ իշխանությունները որեւէ կերպ չարձագանքեցին ու կարծես իրենց լռությամբ պատժված աշակերտի նման ընդունեցին դիտողությունը: Անչափ վտանգավոր է նաեւ այն, որ մեր ԶԼՄ-ներն էլ լավ չպատկերացնելով այդ հայտարարությունների մեծ վտանգը՝ դրանք պարբերաբար կրկնելով մեր ականջների համար սովորական են դարձնում ու անուղղակի դրանց հետ հաշտվելու հոգեվիճակ ձեւավորում:

Ես լավ եմ պատկերացնում, թե ինչ վայնասուն կբարձրացնեին, ինչ աղմուկ ու հազարատեսակ մեղադրանքներ կհնչեցնեին ռուսաֆոբները, եթե այդպիսի հայտարարություններով հանդես գային ՌԴ բարձրաստիճան պաշտոնյաները: Ակամա հարց է առաջանում՝ ի՞նչ է, այս ամենն իրոք արեւմտամետ, սորոսապաշտ կամ որ նույնն է՝ թուրքամետների սրտո՞վ է...: Այ հենց այստեղ է թաղված շան գլուխը, հենց այս պատճառով հոդվածի սկզբում ներկայացրի իմ սերնդակիցների մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ: Իրականության դեմ չմեղանչելու համար ասեմ, որ ուշադիր հետեւեցի նաեւ ընդդիմադիրների ելույթներին եւ ի մեծ ցավ ինձ՝ նրանք եւս բացի թռուցիկ անդրադարձներից, ոչինչ էական չասացին այս խնդրի մասին: Համոզված եմ, որ խելոք ու լուռ անկյունում կանգնած աշակերտին, այսինքն՝ Հայաստանին, այդ նույն ոգով ու նախկին հայտարարությունների օրգանական շարունակության տեսքով դիմեց նաեւ Ալիեւը: Վերջինս առանց որեւէ ձեւականության, մատ թափահարելով եւ պատժի անթաքույց սպառնալիքով մոտավորապես հետեւյալը շեշտեց՝ եթե Հայաստանը չհամաձայնի «մեր նախկին հող Զանգեզուրի» տարածքով միջանցք տրամադրելուն, ապա մենք կստիպենք նրան դա անելու: Պատերազմի հանցագործ Ալիեւի «Հայաստանը չի կամենում միջանցք տրամադրել» արտահայտությունը թվում է վերացական ինչ որ բան է, մինչդեռ՝ ավելի որոշակի ու միաժամանակ նենգ ակնարկ երբեւէ չի եղել: Սրանով պարզ ուրվագծում է իր եւ Թուրքիայի առաջիկա նկրտումները եւ դրանք իբրեւ օրինական հրամցնելու կեղծ հիմքերը.... Այս ո՞ւր ենք գնում, Աստված իմ...Իսկապես Հայաստանն այսօր օկուպացված երկիր է, որի ղեկավարությունը հանդիսանում է հավաքագրածների ներկայացուցիչ:

Աստված իմ, միթե իսկապես իրավացի է Ցանցային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Գագիկ Հարությունյանը, երբ գրում է. «ՀՀ իշխանությունը գործում է ոչ թե՝ Հայաստանի ու հայ ժողովրդի շահերից ելնելով, այլ՝ իրենց հավաքագրած տերերի շահերով», ապա պարզաբանում, որ այդ տերերն այսօր ուզում են բավականին ուժեղացնել Թուրքիային: Նրանց խնդիրն այն է, որպեսզի վերացնեն Իրան-Հայաստան-Ռուսաստան առանցքը՝ զուգահեռաբար աշխատանքներ տանելով նաեւ Հունաստանի դեմ: Այս ամենի համատեքստում, բնական է, որ ՀՀ իշխանությունը համաձայնում է, որպեսզի օկուպացվի ոչ միայն Արցախը՝ իր ֆիզիկական ու ռազմական ուժով, այլեւ Հայաստանը՝ տնտեսական ու աշխարհաքաղաքական մեթոդներով: «Առհասարակ Ադրբեջանի ու Թուրքիայի քաղաքականությունը,-նշում է Գ. Հարությունյանը, Սյունիքի նկատմամբ հետապնդում է այդ նպատակը: Այսինքն՝ նրանք ծառայում են ոչ թե Հայաստանի, այլ Թուրքիայի ու Ադրբեջանի շահերին, դրա համար էլ, բնականաբար, չեն արձագանքում Ադրբեջանից եկող հոխորտանքներին»:

Հայտնի իրողություն է, որ Թուրքիան ու Ադրբեջանը լավ են տիրապետում հոգեբանական, տեղեկատվական մեթոդներին, եւ այն ամենը, ինչ ասում է Ալիեւը՝ ուղղված է ոչ թե Հայաստանի իշխանություններին, այլ ժողովրդին, որպեսզի ստեղծվի այնպիսի տպավորություն, որ եթե Ալիեւի ասածը չանեն, ապա կգան ու բոլորին կոչնչացնեն: Այս իրավիճակում մենք պետք է լավ հասկանանք, որ ռուսական ներկայությունն էլ հաստատուն ու մշտական չէ եւ մենք պետք է ինքներս պատրաստվենք դիմակայելու թշնամուն: Ինչպես նաեւ այն, որ Թուրքիան նեոլիբերալ տոտալիտարիզմի իշխողների համար «կծան շուն» է, որին երբեմն քսի են տալիս անհնազանդություն ցուցաբերողների վրա, բայց հաճախ այդ «քարտ բլանշը» վարպետորեն օգտագործում է հօգուտ իրեն: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա Արցախ մտավ ոչ թե նրա համար, որ Փաշինյանն իր դաշնակիցն էր, այլ որպեսզի փրկեր Հայաստանը, ինչպես արել էր 200 տարի առաջ:

Ամփոփելով նշեմ, որ քաղաքական ու տնտեսական ծայրագույն վտանգավոր իրավիճակում ենք, ուստի բոլորիս սթափվել է պետք, թե չէ վաղը ուշ կլինի...

**01-10.03.2021**

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ
ՌԴ-ում «Ազգ»-ի հատուկ թղթակից

# Հրաչյա Պողոսյան. «Իմ վերածնված հայրենի գյուղի օրինակով՝

Սանկտ Պետերբուրգում բնակվող եւ գործունեություն ծավալող ճանաչված հասարակական գործիչ եւ բարերար, բարեգործական հիմնադրամի նախագահ Հրաչյա Պողոսյանը թուրքական յաթաղանից մազապուրծ եւ եղեռնի սարսափները վերապրած մեր տարաբախտ հայրենակիցների շառավիղներից է: Մոխիրներից վերստին հառնելու, վերածնվելու եւ հայի արյան շարունակականությունն ապահովելու ձգտումը նրա պապերին ավելի քան 100 տարի առաջ ստիպեց նոր շունչ ու կյանք տալ ներկայիս Արագածոտնի մարզի հնամենի Ագարակ գյուղին: Վանից, Բիթլիսից, Գավաշից, Որիզից հասուկենտ ընտանիքներ հիմնավորվեցին ու շենացրին այդ հողը: Այդ ժամանակներից ի վեր՝ պապերի վառած կանթեղը երբեք չհանգավ գյուղում. արհավիրքներ եղան՝ կռիվ, սով, այլեւայլ աղետներ, բայց գյուղը երբեք չծնկեց ու չխեղճացավ: Երախտագետ սերունդները շենացրին եւ այսօր էլ շենացնում են Ագարակը: Երախտավորների այդ ցանկում գյուղի համար կա մի լուսավոր անուն՝ Հրաչյա Միսակի Պողոսյանը՝ որիզցի Խաչոյի Պողոսի թոռը, որ երկար ու ձիգ տարիներ թեեւ ապրելով հեռուներում՝ ջանք ու եռանդ չի խնայում իր պապերի գյուղն ավելի լավը դարձնելու համար (Որիզը Արեւմտյան Հայաստանի Բիթլիսի վիլայեթի գյուղերից էր, 1895-ին թուրքերը կողոպուտի են ենթարկել այն եւ մի քանի բնակչի սպանել: Բնակիչները բռնությամբ տեղահանվել են 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ):

Հրաչյա Պողոսյանը սփյուռքի մեր այն արժանապատիվ հայրենակիցներից է, որն արդեն երեք տասնամյակից ավելի ապրելով եւ աշխատելով Հայրենիքից հեռու՝ ոչ միայն նշանակալի ձեռքբերումների է հասել ու բարձր է պահում հայի եւ Հայաստանի անունը, այլ նաեւ հոգով ու սրտով հայրենիքի հետ է: Մեծ եռանդի, աշխատասիրության եւ նույնքան մեծ սրտի տեր այս մարդու հայացքն ու մի տաքը միշտ Հայաստանում է՝ պատրաստ գործուն աջակցություն ցուցաբերելու Հայրենիքին, ինչը նա արել եւ անում է երկար տարիներ: Իսկ հայրենիքում էլ մի թանկ ու նվիրական անկյուն ունի՝ հայրենի գյուղը:

Արագածի ստորոտին փռված Ագարակը հազարամյակների պատմություն ունի: Գյուղի տարածքում պեղված բնակատեղիները, քարանձավներն ու դամբարանները վկայում են այն մասին, որ մեր նախահայրերը բնակության համար նախընտրել են այս տարածքը: Կատարված հնագիտական պեղումների արդյունքում՝ այստեղ բացվել է ուրարտական ժամանակաշրջանի դամբարանադաշտ, հայտնաբերվել են վաղ բրոնզի դարի բնակատեղիներ եւ գտածոներ: Գյուղով մեկ սփռված եկեղեցիներն ու քրիստոնեական սրբատեղիները ապացուցում են, որ հին ագարակցիներն անուր կառչած են եղել մեր հավատքին, Հայ առաքելական եկեղեցուն եւ քրիստոնեական ավանդույթներին: Հազարամյակների պատմամշակութային բազում շերտերի մեջ, սակայն, անփոփոխ է մնացել մարդը՝ պարզ գյուղացին, որ պատմության ողջ ընթացքում եղել է լավատես, գալիք օրվա հանդեպ լցված հույսով, հավատով եւ իր լավատեսությամբ ոչ միայն ապրել է ինքը, այլեւ վարակել իր շրջապատին:

- Ժամանակի տարեգիրները մեր գյուղի մասին գրել են՝ Ագարակը եղել է նախակենտրոններից մեկը հայոց աշխարհի եւ քաղաքակիրթ մշակույթով ներծծված մի վայր,-ասում է Հրաչյա Պողոսյանը: Եվ հենց այս եզերքի ձգողական ուժն ու վաղվա պայծառ օրվա հույսն էր, որ թուրքական յաթաղանից մազապուրծ մեր պապերին ստիպեց նոր շունչ ու կյանք տալ հնամենի Ագարակին: Երեխաներ ծնվեցին, գյուղը վերածնվեց, սերունդների հերթափոխը շարունակվում է, եւ ես մեծ խորհուրդ եմ տեսնում այս ամենում՝ վերածննդի խորհուրդը: Այսօր էլ ագարակցին ապրում է՝ իր պապերի հավատամքն իր շուրթերին. սիրել



հայրենի հողը, պաշտել Քրիստոսի եկեղեցին, շենացնել հայրենական օջախը, բարին կամենալ մարդկանց:

Ագարակն այսօր Արագածոտնի մարզի ծաղկուն գյուղերից է՝ շնորհիվ իր հնամենի գյուղը սիրող եւ արմատներին խոնարհվող, իր հայանպաստ գործունեությամբ հայտնի Հրաչյա Պողոսյանի:

- Իմ առաջին բարեգործությունը Ագարակում էր,-հիշում է Հրաչյա Պողոսյանը: Ես ամեն անգամ ցավով նկատում էի, թե ինչպիսի դժվարությամբ են գյուղից քաղաք մեկնում երեխաներն ու ուսանողները. կանգառում սպասելիս՝ պատսպարվելու տեղ չունեին: 2004 թվականին իմ նախաձեռնությամբ կառուցվեց մի կանգառ՝ քաղաք մեկնողներն արդեն պաշտպանվում էին անձրեւից, քամուց եւ ձյունից: Հետո գյուղում իմ հովանավորությամբ կառուցվեց խաղահրապարակ, որտեղ երեխաներն անցկացնում են իրենց մանկությունը: Ագարակը չուներ նաեւ որեւէ հոգեւոր կենտրոն: Իմ նախաձեռնությամբ 2008 թվականին կառուցվեց Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի եւ օծվեց նույն թվականի հոկտեմբերի 4-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից, իսկ 2010 թ.-ին եկեղեցու կողքին կառուցվել է զանգակատուն՝ նվիրված Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի 300-ամյակին:

Արդեն երկար տարիներ է, ինչ հոկտեմբերի 4-ը համարվում է Ագարակ համայնքի Վերածննդի օրը (այն վավերացվել է նաեւ Ագարակ համայնքի ղեկավարի եւ ավագանու համատեղ որոշմամբ), որը նշվում է ամեն տարի: Եվ 2008-ի հոկտեմբերի 4-ին, Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու օծման արարողության ժամանակ, առաջին անգամ հնչեց իմ նախաձեռնությամբ եւ հատուկ այդ օրվա համար ստեղծված երգը՝ «Վերածնունդ» անվամբ, որը կատարեց ճանաչված երգիչ Արթուր Հակոբյանը (Միստր Իքս):

Խոսքերի հեղինակն Հայկ Բլբուլյանն է, երաժշտությունը գրել է Արտակ Հակոբյանը: Համատեղ քննարկելուց հետո ստեղծվեց համանուն տեսահոլովակը: Այդ տեսահոլովակը անչափ թանկ է ինձ համար: Այնտեղ մեր գյուղն է, մեր գյուղի մարդիկ, հայրս, մեր սրբավայրերը...

https://www.youtube.com/watch?v=W8lj3oPQAVM&feature=youtu.be&fbclid=IwAR2MhBewxu3Y31LdWBwXB-NupoY–ohWggP84–dxCcO–BZ4gk6KZQlwlp3SHI

Համագյուղացիները երախտագիտությամբ հիշում են, որ Հրաչյա Պողոսյանի ջանքերով Հայրենական մեծ պատերազմի նահատակների հիշատակը մաքրվեց պատմության փոշուց, եւ այսօր Ագարակի կենտրոնում վեր է խոյանում մի հրաշալի հուշակոթող, որն անմահացնում է զոհված 43 նահատակների հիշատակը:

Ապրելով եւ գործելով հայրենի գյուղից հեռու՝ Հրաչյա Պողոսյանն այն եզակի մարդկանցից է, որն իր բազմազան գործունությանը զուգահեռ՝ ամբողջովին ապրում է գյուղի հոգսերով, համագյուղացիների դարդուցավով՝ փորձելով թեթեւացնել դրանք իր բարի գործերով, խորհուրդներով ու ջերմ խոսքով: Արդեն շատ վաղուց՝ գյուղն ու Հրաչյա Պողոսյանը չափազանց ներդաշնակ են իրար՝ շաղկապված արյան եւ հողի կանչով, եւ պատահական չէր, որ համայնքն իր արժանի զավակին պատվեց Ագարակի պատվավոր քաղաքացու կոչումով:

Կարեւորելով վաղվա ագարակցու կրթությունն ու առողջ ապրելակերպը՝ պարոն Պողոսյանը վերանորոգել է դպրոցը, կահավորել ռոբոտոտեխնիկայի եւ



այլ առարկայական դասարաններ, համալրել գույքով եւ տեխնիկայով եւ ամեն կերպ աջակցում է հարազատ դպրոցին: Ի դեպ, որպես նախկին շրջանավարտի երախտագիտության խոսք դպրոցի նախկին տնօրենին՝ ֆիզիկայի սիրելի ուսուցչին՝ Հրաչյան ամբողջովին վերանորոգել եւ կահավորել է ֆիզիկայի դասասենյակը: Դպրոցի դասասենյակներից մեկն էլ, նույնպես վերանորոգված եւ կահավորված, կրում է Հրաչյա Պողոսյանի անունը: Կրթօջախում իր առանձնակի տեղն է զբաղեցնում Պատվո հարթակը, որը լուսանկարներով եւ տեքստերով ամփոփում է հարգարժան հայրենակցի, ճանաչված բարերարի, հասարակական գործչի եւ արժանավոր հայի՝ Հրաչյա Պողոսյանի գործունեության բազմաթիվ գեղեցիկ էջերը:

Անհանգիստ այս մարդը մի գերբնական զորություն ունի՝ իր շուրջը բարիք ու բարություն սփռելու, եւ շնորհն այդ, իրոք, աստվածատուր է: Ի պատիվ վերին աստիճանի իր հավատացյալ տատի՝ նա գյուղում մատուռ է կառուցել, բարեկարգել է խաղահրապարակը: Հրաչյա Պողոսյանի նախաձեռնությամբ խաղահրապարակում տեղադրվել է մեծադիր ցուցատախտակ-քարտեզ, որտեղ նշված են Ագարակի հիմնադիրները եւ Արեւմտյան Հայաստանի այն քաղաքներն ու գյուղերը, որտեղից նրանք գաղթել են:

Համագյուղացիները Հրաչյա Պողոսյանին բնութագրում են որպես վերին աստիճանի ծնողասեր մարդ, եւ պատմում են, որ նա Մոսկվա՝ Պետդումայի իր ցուցահանդեսին գնացել էր իր մայրիկի հետ:

Արժե հիշատակել, որ 2018-ի հոկտեմբերի 7-ին ռուսաստանյան մի շարք հայտնի լրատվամիջոցներ գրեցին Հայաստանի Արագածոտնի մարզում գտնվող Ագարակ համայնքի մասին: Այդ օրը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երեւանի հիմնադրման 2800-ամյակի տոնակատարությունների նախաշեմին հայկական փոքր Ագարակ գյուղը ոչ պակաս հանդիսավորությամբ նշեց իր վերածննդի 10-ամյակը. տոնակատարություններին մասնակցելու համար անձամբ գյուղ ժամանեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Ռուսական կայքերը շեշտեցին, որ այդ հրաշքն իր համագյուղացիներին կարողացավ նվիրել պետերբուրգաբնակ բարերար Հրաչյա Պողոսյանը:

Իսկ այդ օրը կրկնակի տոն էր Ագարակ համայնքում. մեծ հանդիսավորությամբ նշվեց գյուղի վերածննդի 10-ամյա հոբելյանը եւ լեգենդար «Արարատ 73»-ի հաղթանակի 45-ամյակը: Այդ օրը Ագարակի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան նաեւ ութ կարեւորագույն եւ աննախադեպ միջոցառումներ.

1. Ագարակի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում տեղի ունեցավ Հրաչյա Պողոսյանի պատվերով եւ պետերբուրգյան «Տավր» բաց բաժնետիրական ընկերության վարպետների կողմից պատրաստված Հայոց ցեղասպանության նահատակ սրբերի խճանկարային սրբապատկերի օծման արարողություն: Նման մեծամասշտաբ աշխատանք առաջին անգամ է տեղադրվում Հայաստանի տարածքում, եւ ըստ մասնագետների՝ նախադեպը չունի ամբողջ աշխարհում:

2. Ագարակի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ ԽՍՀՄ հերոս, առաջին տիեզերագնաց-օդաչու Յուրի Գագարինի անվան ռոբոտաշինության դասարանի բացումը: Դասարանի անվանումը նախապես համաձայնեցվել է Յուրի Գագարինի դստեր՝ «Մոսկովյան Կրեմլ» թանգարանարգելավայրի գլխավոր տնօրեն Ելենա Գագարինայի հետ: Այն դարձավ շատ հայտնի վայր, եւ տեխնոլոգիական ցուցահանդեսների եւ անգամ WCIT SS համաշխարհային կոնգրեսի ժամանակ բազմաթիվ պատվիրակություններ են այցելել այստեղ Մարոկկոյից, Բանգլադեշից, Հնդկաստանից, Աֆղանստանից եւ անգամ Նիդերլանդներից:

3. Նորաբաց դասարանում տեղի ունեցավ բարերար Հրաչյա Պողոսյանի պատվերով պատրաստված Յուրի Գագարինի կիսանդրու բացումը: Բացման արարողությունը կատարեցին Հրաչյա Պողոսյանը եւ տիեզերագնաց, ՌԴ հերոս Անտոն Շկապլերովը:

4. Նույն օրը Ագարակի կենտրոնում տեղի ունեցավ «Արարատ-73» ֆուտբոլային թիմի պատվին անվանակոչված նոր հրապարակի հանդիսավոր բացման արարողությունը: Բացումը կատարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Արարողությանը հաջորդեց ծառատունկ. «Արարատ» ֆուտբոլային թիմի հաղթանակի 40-ամյակի եւ Ագարակ գյուղի վերածննդի պատվին 2013 թ.-ին բացված

# պիտի նորից շենանա եւ հզորանա Հայաստանը»

«Արարատ-73» հուշարձանի մոտ Ագարակում առաջին անգամ տնկվեց հավերժության եղեւնի:

5. Այդ օրը Ագարակի կենտրոնում տեղի ունեցավ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ հուլիսին Սանկտ Պետերբուրգի հայ գործարարների հետ հանդիպման ժամանակ արված առաջարկով հիմնված կարի արտադրամասի բացման արարողությունը: Հրաչյա Պողոսյանն առաջինն էր, որ արձագանքեց այդ կոչին եւ իր համագյուղացիներին աշխատանքով ապահովելու նպատակով արդեն իսկ գործում է ավելի քան 20 աշխատատեղ: Կառուցվող կցաշենքի հիմքում զետեղվեց հիշողության պատիճ: Կառուցվող մասնաշենքը թույլ կտա արտադրամասի աշխատակիցների թիվը հասցնել շուրջ հարյուրի:



6. Այդ օրը տեղի ունեցավ Հրաչյա Պողոսյանի ինքնատիպ ու յուրօրինակ մտահղացման շնորհիվ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի օրհնությամբ եւ «Ռոսկոսմոսի»՝ հանձին Սերգեյ Կրիկալեւի աջակցությամբ տիեզերք տարված Հայաստանի դրոշի հանդիսավոր հանձնման արարողությունը: 195 օր տիեզերքում՝ միջազգային տիեզերական կայանում մնալուց հետո Հայաստանի դրոշը վերադարձել է երկիր: Այն այնտեղ էր տարել տիեզերագնաց Օլեգ Արտեմեւը: Հայաստանի դրոշը նախօրեին անձամբ տիեզերագնաց, ՌԴ հերոս Անտոն Շկապլերովն է բերել մեր երկիր եւ տոնական միջոցառման ընթացքում այն Ագարակում հանձնեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ հանելով փաթեթից, որի մեջ այն դրվել էր հենց տիեզերքում:



7. Նույն օրը, Հայաստանում առաջին անգամ, Ագարակի պատվավոր քաղաքացու կոչում շնորհվեց Հայ Առաքելական եկեղեցու սպասավորի՝ Ագարակի Սուրբ Աստվածածին եկեղեցու հովիվ Վիգեն Քհն. Մանուկյանին:

8. Դպրոցի բակում տնկվեց դեռեւ Պետրոս Առաջինի կողմից տնկված եւ խնամված դարավոր կաղնու շիվ, որը Հրաչյա Պողոսյանն էր բերել հայրենի գյուղ: Շիվը, որ հայազգի բարերարին նվիրել էին Սանկտ Պետերգուրգի ռուսական թանգարանից՝ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում ծավալած ակտիվ եւ նվիրված գործունեության համար, տնկեցին Սանկտ Պետերբուրգից եւ Մոսկվայից ժամանած հյուրերը:

Անցնող տարիների ընթացքում, ընդհանուր առմամբ, Հրաչյա Պողոսյանի եւ նրա բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ ամբողջ աշխարհում ստեղծվել եւ վերականգնվել են ավելի քան 200 հոգեւոր, մշակութային եւ պատմական նշանակություն ունեցող հուշարձաններ, իրականացվել եւ կյանքի են կոչվել Հայրենական մեծ պատերազմի հերոսներին եւ իրադարձություններին նվիրված 120-ից ավելի հուշարձաններ եւ նախագծեր, իսկ մի մասն էլ իրականացման փուլում են: Հրաչյա Պողոսյանի մտահղացմամբ ու աջակցությամբ հրատարակվել են տասնյակ գրքեր եւ ամսագրեր, նկարահանվել են մի շարք մեծարժեք եւ ուսուցողական վավերագրական ֆիլմեր:



Ճանաչված բարերարի եւ իր բարեգործական հիմնադրամի կողմից կյանքի կոչված գործերը վերաբերում են մեր կյանքի բոլոր ոլորտներին եւ իրականացվում են Ամենայն Ռուսիո Եկեղեցու պատրիարք Կիրիլի եւ Հայ Առաքելական եկեղեցու հայրապետ Գարեգին Բ-ի օրհնությամբ: Նրա գործունեությունը բարձր գնահատականների է արժանացել իշխանության բարձր օղակներում ինչպես Ռուսաստանում եւ Հայաստանում, այնպես էլ տարբեր երկրներում, որտեղ իրականացվել են նրա նախաձեռնությունները: Նա ստացել է կառավարական, գերատեսչական եւ հասարակական պարգեւներ, ստացել է Հայ Առաքելական եկեղեցու բարձրագույն պարգեւը, ինչպես նաեւ պարգեւատրվել է Ռուս Ուղղափառ եկեղեցու շքանշաններով: Կարեւորագույններից են՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով շնորհված պետական պարգեւը՝ «Բարեգործության համար» շքանշանը, Հայ Առաքելական եկեղեցու բարձրագույն պարգեւը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, «Մովսես Խորենացի» մեդալը՝ հայ-ռուսական եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում ներդրած ավանդի համար, «Ուղղափառ եւ Ռուսաստանի Ուղղափառ եկեղեցու շքանշանը», «Պատվո III աստիճանի», «Սբ. Արքայազն Ալեքսանդր Նեւսկու անվան II աստիճանի» շքանշանը, «Ռուսաստանի զարգացման գործում ունեցած վաստակի եւ անձնական մեծ ներդրման համար», ՌԴ Արտաքին գործերի նախարարության «Փոխգործակցության համար» կրծքանշանը, «Մարշալ Բաղրամյան», «Սպարապետ Վազգեն Սարգսյան», «Հավատքի եւ հայրենիքի համար» I աստիճանի մեդալները եւ այլն:

Արժե նաեւ հիշեցնել, որ անցյալ տարի ՌԴ ՊՆ հրետանային, ինժեներական եւ կապի զորքերի թանգարանում ամփոփված «Տարվա տղամարդ 2020» մրցույթի արդյունքներով՝ «Բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը» անվանակարգում հաղթողի դափնին նվաճել է պետերբուրգաբնակ մեր հայրենակիցը:

Հրաչյա Պողոսյանի բարեգործության շրջանակն ընդգրկում է այսօր արդեն 13 երկիր՝ Ռուսաստան, Հայաստան, Վրաստան, Բելառուս, Մոնղոլիա, Սլովակիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Գերմանիա, Ղազախստան, Ֆրանսիա, Իսրայել: Աշխարհի որ անկյունում էլ իրականացրել է իր հերթական մտահղացումը՝ արել է սիրով ու նվիրումով եւ հայ ժողովրդի արժանի զավակի բոլոր ձեռնարկումները արդյունք են տարիների նրա տքնաջան աշխատանքի:

Ընդհանրապես, Հրաչյային ճանաչողները նրան բնութագրում են որպես հայրենասեր, մարդասեր ու արժանապատիվ հայորդու: Նա ներդրում է կատարել Սանկտ Պետերբուրգում ՀՀ հյուպատոսարանի շենքի վերանորոգման աշխատանքներում, կորոնավիրուսի համավարակի բռնկման հենց սկզբնական շրջանում Պողոսյանը շտապել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքից հայրենակիցներին ուղարկել իր աջակցությունը՝ թոքերի արհեստական օդափոխության սարք, որը տրամադրվել է Նորք Մարաշի ինֆեկցիոն հիվանդանոցին, իսկ Արցախյան վերջին պատերազմի օրերին քաջ գիտակցելով, որ առավել քան երբեւէ, մեզ անհրաժեշտ է համազգային համախմբվածություն՝ իր անշահախնդիր օգնությունն է ցուցաբերել Հայրենիքին:

Իր բազմաթիվ ֆանտաստիկ ու աներեւակայելի բարեգործական մտահղացումներով ու նախաձեռնություններով աչքի ընկած մեր հայրենակցին ամենուր ընդունում են գրկաբաց, ջերմությամբ ու հավատով՝ լինի դա պետական բարձրաստիճան պաշտոնյա, հոգեւոր առաջնորդ, թե սովորական քաղաքացի: Մեր ժողովրդի առջեւ վերջին ամիսներին ծառացած ծանր ու դժվարին իրավիճակը մեծապես մտահոգում է նաեւ Հրաչյա Պողոսյանին: Բայց մեր հայրենակիցն անսահման լավատես է եւ համոզված է, որ ամեն մի դժվարություն պետք է հաղթահարել լավատեսությամբ, աննկուն կամքով եւ բարություն սփռելով: Իսկ այդ ամենի շարժիչ ուժը ամենօրյա աշխատանքն է, նպատակադրված եւ նվիրված աշխատանքը:

- Պետք է ազգովին համախմբվենք եւ միավորվենք, իմ վերածնված հայրենի գյուղի օրինակով՝ պիտի նորից շենանա եւ հզորանա Հայաստանը...

Տա Աստված, շուտափույթ իրականություն դառնան մեր հայրենակցի այս ցանկությունները: Այնպես, ինչպես իրականանում եւ կյանքի են կոչվում նրա բոլոր գեղեցիկ ծրագրերը...

## «Դոկտ. Բըրդի խորհուրդը մտատանջ պոետներին»



**Այս խորագիրն է կրում տեսողական արվեստների մասնագետ Վահան Եփրեմյանի հիմնած «Ketchup Entertainment» ընկերության թողարկած նոր ֆիլմը, որ հունվար ամսից մեծ հաջողությամբ ցուցադրվում է Մ. Նահանգների կինոէկրաններին: Ֆիլմը պատմում է մի պատանու մասին, որ տառապում է հոգեկան խանգարումներով եւ փորձում է հաղթահարել որոշակի ախտորոշման չենթարկված հիվանդությունը՝ դիմելով երեւակայական օրնիթոլոգի՝ թռչնաբույժի: Անձնական մտասեւեռումներից այն կողմ անցնելով ֆիլմը շոշափում է մտավոր անհանգստության եւ հոգեկան խանգարումների իրական խնդիրներ, որոնք խիստ այժմեական են դարձել ներկայիս հասկապես համավարակի հետեւանքում մեկուսացման մեջ գտնվող մարդկանց համար, որոնք զրկված են իրենց զգացմունքներն արտահայտելու հնարավորությունից:**

**Վահան Եփրեմյանը մասնագիտությամբ իրավաբան է, Մ. Նահանգներ է տեղափոխվել 1987-ին Խորհրդային Հայաստանից, երբ դեռ պատանի էր: Տեղի կենցաղին եւ լեզվին ծանոթանալուց հետո, որպես գրասենյակային ծառայող աշխատել է Վաշինգտոնում արդարադատության դեպարտամենտում եւ Քլինթոնի նախագահության ժամանակ նաեւ Սպիտակ տան տնտեսական մարտավարության ինստիտուտի «մտավոր շտեմարանում»: Հիմնել է իր անվամբ իրավաբանական մի ֆիրմա, որը երեք տարի անընդմեջ ճանաչվել է որպես լավագույններից մեկը: Հիմնել է նաեւ (մոտ 10 տարի առաջ) վերոնշյալ «Ketchup Entertainment» ընկերությունը, որի BBC-ի համագործակցությամբ թողարկած «Lost Christmas» ֆիլմը արժանացել է «Էմմի» մրցանակի: «World Vision» հանրահայտ կազմակերպության հետ Վահանը Կամպուչիա եւ Նիկարագուա է մեկնել՝ առաջին երկրում երեխաների թրաֆիկինգի հետ կապված բացահայտումներ անելու, իսկ երկրորդում՝ անօթեւան մարդկանց համար ջունգլիներում կացարաններ կառուցելու համար: Տանզանիայում նա բարձրացել է Կիլիմանջարոյի գագաթը: Իր այս փորձառությունները նա այժմ ամփոփում է «One More Step» (Մի քայլ եւս) խորագիրը կրող գրքում, որը կավարտի մինչեւ տարեվերջ: «Կյանքում մենք բոլորս էլ մի բարձունք ենք փորձում հաղթահարել», հավաստացած է նա: Հ.Ծ.**



# Իրազեկ կանայք, հզոր համայնք

«Իրազեկ կանայք, հզոր համայնք» ծրագիրը Զարենցավան համայնքում իրականացվում է 2021 թվականի հունվար-մարտ ամիսներին:

Այն դրամաշնորհային ծրագիր է, որն իրականացվում է Հասարակական կազմակերպության կենտրոնի «աջակցության դրամաշնորհների կառավարման գործընթացին կանանց հզորացման համար` ծրագրի շրջանակներում:

Ծրագրին աջակցում են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ), ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը:

Ծրագրի նպատակն է` նպաստել Զարենցավան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի 20-45 տարեկան 20 կանանց ներգրավմանը ՏԻՄ-ում, որոշումների կայացման գործընթացներում:

Ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել խոշորացված համայնքի Արզական, Ալափարս, Բջնի, Ֆանտան, Կարենիս գյուղական բնակավայրերի կանանց` որոշումների կայացման մակարդակում մասնակցության ցածր մակարդակը, հասարակական եւ մշակութային կյանքի նկատմամբ հետաքրքրության բացակայությունը, ցածր իրավագիտակցությունը:



Ներկայումս Զարենցավան համայնքում չունենք ակտիվ կանանց որեւէ նախաձեռնող խումբ: Հանրային լսումներին հիմնականում մասնակցում են տղամարդիկ, կամ քաղաքային բնակավայրերից մեկ-երկու ակտիվ կին:

Ծրագրի համակարգող **Սաթենիկ Բալաբեկյանի** խոսքով` գյուղական բնակավայրերից հազվադեպ են կանանց կողմից բարձրաձայնվում խնդիրներ համայնքապետարանում, կանայք գրեթե չեն գնում համայնքի ղեկավարի մոտ ընդունելության որեւէ համայնքային խնդրի լուծում տալու նպատակով:

Տիկին Բալաբեկյանը հավելեց նաեւ, որ ծրագրի արդյունքում ցանկանում են միավորել համայնքի բոլոր բնակավայրերի ակտիվ կանանց` ստեղծելով միասնական համայնքի գաղափարը, ինչպես նաեւ համայնքում փոփոխությունների հասնելու գործում գենդերային մոտեցում ցուցաբերելու կարեւորությունը:

Ծրագրի ղեկավար **Փիրուզա Պետրոսյանի** խոսքով` ծրագրի գործադրման արդյունքում կանայք վեր կհանեն համայնքային խնդիրները, ձեռք կբերեն ոչ միայն նոր գիտելիքներ, այլեւ նոր ծանոթություններ, նոր համագործակցություններ, կկարեւորեն իրենց ձայնն ու խոսքը համայնքային խնդիրների լուծման համատեքստում: Արդյունքում կձեւավորվի կանանց ոչ ֆորմալ խումբ` համայնքային հարցերը քննարկելու, կանանց հուզող հարցեր բարձրաձայնելու եւ դրանց նորարար լուծումներ առաջարկելու համար:

Ծրագրի ընթացքում կիրականացվեն սեմինար-դասընթացներ, որոնք կզուգորդվեն արվեստի եւ հոգեբանության դասերով` որպես կանանց հեշտությամբ միավորելու եւ փոքր քայլերով մեծ խնդիրներ քննարկելու հիմք: Այսինքն, յուրաքանչյուր կարեւոր սեմինարից առաջ կանայք նկարչական կամ հոգեբանական հատուկ թերապիաների օգնությամբ կկարողանան լիցքաթափվել, կտրվել առօրյա հոգսերից, ինքնահաստատել, միավորել իրենց նախասիրությունները, գիտակցել իրենց ունակությունները փոփոխություններ բերելու հարցում եւ այդ համատեքստում կուսումնասիրեն արդեն ավելի կարեւոր թեմաներ:

**ԷԼԱԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**ՀՊՄՀ, Լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի**

# Քանի երկինքը կա, կփնտրենք նրանց

Տղաների երկնային լույսը թույլ չի տալիս մռռել ձյունով ծածկված քաղաքում: Նրանց բարձր, դոփյունով քայլերը չենք լսում, բայց օդում թողած ջերմությունը լցնում է մեր ներսը: Նրանք մեզ բարձրից հսկողն ու սեր շշնջացողն են:

- Քեզ շատ եմ սիրում, ուշ-ուշ կզանգեմ, չանհանգստանա՛ք...

Զոհվելու օրը` հոկտեմբերի 9-ին, դեպքից երկու ժամ առաջ, կապիտան **Տարոն Նիկողոսյանը** դա էր ասել կնոջը` Տաթեւին: Տարոնն ու Տաթեւը երկու որդի ունեն` 4-ամյա Արամը եւ 1-ամյա Վահեն:

Փոքրիկ Վահեն պառկած էր, քնի ժամն էր, բայց քնել չէր ուզում, անընդհատ ձեռքը տանում էր հեռախոսի էկրանին եւ տեսնելով հոր նկարը` ասում. «Պապ... պապաա...»: Եվ այդ պահին երազում էիր կույր ու խուլ լինել, քանզի փոքրիկի մատների հպումը նկարին` հորը դիպչելու միակ հույսն էր:

«Տարոնը ինժեներասակրավորական վաշտի հրամանատար էր: Հոկտեմբերի 1-ին ստացել են Արցախ մեկնելու հրամանը եւ մինչեւ հոկտեմբերի 3-ը եղել են Մեխակավանում (Ջաբրայիլ), այնուհետեւ հետ են եկել Իշխանաձոր: Ճանապարհի կեսից ԱԹՍ-ի ձայն են լսել,գրվել են,սակայն վերադասը առաջ գնալու հրաման է տվել: Նստել են, որ նորից գնան, երկու րոպե անց ԱԹՍ-ի հարվածից մեքենան պայթել է: 19 հոգուց 18-ը զոհվել են»,- մեզ հետ զրույցում պատմում է **Տաթեւը**, նշելով որ այս գործի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել, մեքենան նստելու եւ երթը շարունակելու հրաման տված զորամասի հրամանատարի տեղակալը կալանավորված է:

17 զոհերի հարազատներն արդեն վերցրել են իրենց զավակների մարմինները, սակայն Տարոնի մարմինը մինչեւ օրս չի ճանաչվել: Տաթեւը պատմում է, որ հենց դեպքի օրը բոլոր 18 զոհվածների մարմինները բերել են Գորիս, որտեղից հաջորդ օրը տեղափոխել են Երեւան: Նրա միակ ցանկությունը ամուսնու մարմինը գտնելն է` իր համար միակ թանկարժեք մասունքը:



«Արամիկից երկու անգամ ԴՆԹ-թեստ էին վերցրել, սակայն համընկում չէր եղել: Դրանից հետո անհետ կորածների ցուցակի մեջ էին ներառել անունը: Հայս ներկայացրեցի դատարան, քննչական կոմիտե, որ ինչպես հարկն է զբաղվեն հարցով, հիմա եթե ատամնաշարի միջոցով կարողանան ճանաչել, կրկին ԴՆԹ-թեստ կհանձնեն ու եթե այն վերջապես համընկնի, Տարոնիս վերջապես կկարողանանք հողին հանձնել»,- պատմում է Տաթեւը` արտասվում, դեմքով շրջվում փոքրիկներին,որ իրեն պպրեցնում են ու հոգում կուտակված հույզերը դուրս թողնում:



4-ամյա Արամը հոր հետ կապված իր պլաններից մեզ չի պատմում,սակայն ուզում է մեծանալ, զինվորական դառնալ ու գնալ հայրիկին տուն բերելու:

Երկնքում լույսն առատ է, որովհետեւ աստղերի փոխարեն մեր տղաներն են լույս տալիս: Խոստանում ենք վեր նայել, փնտրել, գտնել նրանց աստղերի մեջ:

Ամեն տեղ էլ երկինք կա, մենք կփնտրենք նրանց` քանի երկինքը կա...

**ՀԱՍՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
**3-րդ կուրս լրագրություն**

# ՀՊՄՀ-ը անմահ ուսանողների սխրանքը հավերժացնող հուշակոթող կառուցի

Մանկավարժական համալսարանը նախաձեռնել է հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված ուսանողների եւ շրջանավարտների հիշատակը հավերժացնող հուշակոթող ստեղծել: Հուշակոթողը խորհրդանշելու է Հայոց բանակի զինվորին, որը ընկավ մարտի դաշտում` հանուն մեր հայրենիքի ու ժողովրդի:

Հուշաքարի մտահղացման մասին խոսեցի Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Ուս. խորհրդի նախագահ **Պարույր Գալստյանի** հետ.

**«Մտահղացումը եւ առաջարկությունը բուհի ղեկավարությանը խաչքարի վերաբերյալ եղել է Ուսխորհրդի կողմից, երբ բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հետ հանդիպման ժամանակ քննարկում էինք, թե ինչ միջոցառումներ, ծրագրեր պետք է իրականացնի Մանկավարժական համալսարանը մեր զինվոր-ուսանող հերոսների հիշատակը վառ պահելու համար: Ու քննարկման ժամանակ հուշակոթողի գաղափարը դրական արձագանքի արժանացավ ե՛ւ ղեկավարության, ե՛ւ ուսանողների կողմից:**

Այս հիշատակի քայլին նվիրված ասեմ, որ ուսանողական խորհուրդը համագործակցելով դեկանատների հետ, կազմել են խմբեր եւ իրականացնում են այցեր մեր զոհված հերոսների բնակարաններ, ծանոթանում ընտանիքի անդամներին եւ ունենում զրույցներ:Պետք է նշեմ, որ այս կապը մենք պահելու ենք եւ այն միշտ լինելու է շարունակական»,- ասաց Պարույր Գալստյանը:

Կարեւորելով յուրաքանչյուրի կարծիքը` բուհը բաց քննարկման է ներկայացնում ուսանողների եւ հասարակության առաջ հուշաքարերի նախագծերն ու դրանց տեղադրման վայրի վերաբերյալ տեղեկատվությունը:

**«Հուշակոթողի հետ կապված աշխատանքները համակարգում է Գեղարվեստական կրթության ֆակուլտետը ի դեմս դեկան Արա Հակոբյանի: Եվ, այո, հուշակոթողի ընտրությունը առաջարկված է ուսանողների, դասախոսների եւ բոլոր-բոլոր նրանց համար, ովքեր կապ ունեն Մանկավարժական համալսարանի հետ, քանի որ իրենք պետք է որոշեն` ի՞նչ ձեւի, ինչ ճարտարապետական եւ խորհրդանշական լուծումների հուշակոթող են ուզում լինի համալսարանի տարածքում:**

Ասեմ, որ դեռ վերջնական տարբերակը ընտրված չէ, տարբեր հարթակներում լինում են քննարկումներ, եւ այդ քննարկումներից ելնելով, ուսանողական խորհուրդը մոտ օրերս կազմակերպելու է ուսանողական մեծ հանդիպում-քննարկում, որի ժամանակ ներկա կլինեն նաեւ հուշաքարերի հեղինակները».- նշեց Պարույր Գալստյանը:

«Նաեւ նշեմ, որ մոտակա ժամանակահատվածում համալսարանի կողմից հրատարակվելու է մի գիրք` նվիրված համալսարանի զոհված զինվոր-ուսանողներին եւ այն ուսանողներին, ովքեր կամավոր մասնակցել են պատերազմին եւ, փառք աստծու, վերադարձել են անվնաս: Այս աշխատանքները մեր ամենօրյա գրաֆիկում առաջնայինն են»,- հավելեց ուս. նախագահը:

Մեր զինվորները հերոս են` բոլորն անխտիր: Հավերժ փառք նրանց: Նրանց հոգու հանգստությունը մեր երկրի հզորացման մեջ է լինելու, իսկ հզորացումը` կրթության արդյունքը:

**ԳՈՀԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**ՀՊՄՀ Լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան L տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱւԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960,
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Վահան Թեքեյանե սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 11.3.2021, գինը` 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: